

Գիրքը լուսապատճենահանվել է  
"Համահայկական Էլ. Գրադարան"

կայքի՝ [www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

կողմից և ներկայացվում է իր  
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրքը կարող է

օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: [www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

ՊՈՒՔ ՆՈՒՅՆՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՔ ՁԵՐ ՆԵՐԴՐՈՒՄՆ ՈՒՆԵՆԱԼ ԸԱՅԱՏԱՈՒ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՔՆԵՐ  
ԼՈՒՍԱՊԱՏՃԵՆԱԸԱՆԵԼ ԳՐՔԵՐ:

ԹՎԱՅԻՆ ԳՐՔԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՆԴԱՄԱՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ  
ԻՄԱՆԱԼ "ԸԱՍՄԱԸԱՅԿԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ" ԿԱՅՔԻՑ՝

[www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

ՇՆՈՐԸԱԿԱԼ ԵՆՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՍԵՐ ԿԱՅՔԻՑ:

ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ ԸԱՃԵԼԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ:



ԳՐԵՔ ՍԵՁ՝ [freebooks@rambler.ru](mailto:freebooks@rambler.ru)

# **ԱՐԱՄ ԱՆԱՆՅԱՆ**

**ՆԱՅՈՅ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՆԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՆԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ  
ՆԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ  
(1991-2004 թթ.)**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԳԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ԱՐԱՄ ԱՆԱՆՅԱՆ**

**ՀԱՅՈՅ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԳԻՐԸ  
ՀԱՅ-ԹՈՒՐԹԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ  
(1991-2004 ԹԹ.)**

ՄԵՍՐՈՊ ԱՐԲ. ԱՇԿԵԱՆ  
ՄԱՏԵՆԱԾԱՐ



ARCH. MESROB ASHJIAN  
BOOK SERIES

ՀՏԴ 941 (479.25)

ԳՄԴ 63.3 (2Հ)

Ա. 573

Աշխատությունը հրատարակության է երաշխավորել  
ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի գիտական խորհուրդը

Խմբագիր՝ պատմական գիտությունների գոկտոր, պրոֆեսոր  
Ս. Ստեփանյան

Անանյան Արամ  
Ա573 Հայոց ցեղասպանության հիմնախնդիրը հայ-թուրքական  
հարաբերություններում.- Եր.: ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ.,  
2006.- 122 էջ:

Աշխատությունն անդրադառնում է Հայոց ցեղասպանության ճանաչման հիմնահարցի ազդեցությունը ՀՀ արտաքին քաղաքականության ու մասնավորապես հայ-թուրքական միջպետական ու հասարակական հարաբերությունների վրա:

ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 99941-991-4-5

© Պատմ. ինստ., 2006թ

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայկական պետականության վերականգնումը բեկումնային նշանակություն ունեցավ Հայ ժողովրդի բազմադարյա պատմության մեջ: Իբրև միջազգային հարաբերությունների սուբյեկտի, Հայաստանի Հանրապետության առաջ ծառայեցավ արտաքին քաղաքական Հայեցակարգի մշակման հրամայականը: Այս համատեքստում ամենարարդ Հիմնահարցը Հայ-թուրքական երկկողմ հարաբերությունների Հայեցակարգի ձևավորումն էր: 1991թ. դեկտեմբերի 16-ին թուրքիան ճանաչեց Հայաստանի Հանրապետության անկախությունը, սակայն դիվանագիտական հարաբերություններ չհաստատեց պաշտոնական մրևանի հետ՝ առաջ քաշելով հարաբերությունների կարգավորման մի շարք նախապայմաններ (հրաժարվել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման քաղաքականությունից, Արցախը Հայտարարել Ազրբեյջանի մաս և այլն): Թեև ՀՀ առաջին իշխանությունները երկկողմ բանակցությունների ընթացքում երբևէ չեն անդրադարձել թուրքիայի կողմից Մեծ եղեռնի ճանաչման խնդրին, թուրք դիվանագետների նախաձեռնությամբ 1915-1923թթ. Օսմանյան կայսրությունում իրականացված ցեղասպանության հարցը արդիական ազդեցություն ստացավ Հայ-թուրքական հարաբերություններում:

Թուրքական Հանրապետությունը ցայսօր պետական մակարգակով ժխտում է Հայոց ցեղասպանությունը, թուրքերը ձևավորել են պատմական իրողությունների նենդափոխման օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտ՝ ակտիվ դիվանագիտական պայքար ծավալելով Մեծ եղեռնի միջազգային ճանաչման դեմ: Այս գործելաոճը, ժամանակակից քաղաքագիտության սկզբունքների համաձայն, միանշանակորեն կարող է որակվել որպես ծրագրված պետական քաղաքականություն. առկա են գաղափարախոսական հիմքը, օրենսդրական գաղտը՝ պաշտոնապես անընդհատ քարոզվող տեսակետի և միտումնավոր նենդափոխված պատմության ձևով (policy), կան պետության կողմից առաջ քաշված խնդիրներ և նպատակներ (politics), ինչպես նաև ժխտմանը միտված քաղաքական, դիվանագիտական և դիտական հաստատությունների ցանց, որն անմիջականորեն իրականացնում է թուրքական պետության քաղաքական դիժը (polity): Փաստենք, որ հակահայկական քաղաքական առաջնահերթությամբ են շարժվում նաև այսօրվա թուրքական իսթերլիշմենթի ներկայացուցիչները: Անկախ իշխող քաղաքական ուժից, Անկարան Հավատարիմ է մնում խնդրո առարկայի վերաբերյալ առկա իր խոտոր սկզբունքներին: Ավելին՝ շարունակում է զարգացնել և կատարելագործել ժխտման միջոցները, սեփական քաղաքական տեսագաղտում անընդհատ ներառելով նորերը: Այս առումով կարևոր է հասկանալ և ճանաչել այն

մեթոդներն ու ձևերը, որոնցով առաջնորդվել են թուրքիայում որոշումներ ընդունողները վերջին տասնամյակների ընթացքում Հայոց ցեղասպանության ճանաչման դեմ ուղղված պայքարը հաջողելու համար: Այդ իսկ պատճառով, այսօր՝ Մեծ եղեռնից ավելի քան 90 տարի անց, կրկին հրատապ է դառնում թուրքիայի վարած Հայաստան քաղաքականության ուսումնասիրությունը՝ Անկարայի գործողություններին համարժեք գնահատական տալու, վերջինիս քաղաքականությունը կիրառական տեսանկյունից ներկայացնելու, քաղաքական ծրագրավորման ոլորտում անցյալում թույլ տված սխալները չկրկնելու համար: Ժամանակագրական առումով սույն աշխատությունն ընդգրկում է 1991-2004թթ.: Ուսումնասիրվող ժամանակաշրջանի ընտրությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումով, այդ իրադարձությունից հետո պաշտոնական Երևանի արտաքին քաղաքական կուրսի ձևավորմամբ, Հայ-թուրքական հարաբերությունների օրակարգում Հայոց ցեղասպանության խնդրի սահմանմամբ և անկախ Հանրապետության առաջին քաղաքական ընտրախավի՝ ցեղասպանության հարցը երկկողմ հարաբերությունների ծիրից օտարելու որոշումով: Իսկ 1998թ. նախագահական ընտրություններում հաղթանակ տանելուց հետո Ռ. Քոչարյանը Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը ներառեց Հայաստանի արտաքին քաղաքականության Հայեցակարգում: Արդեն 2004թ. Հայոց ցեղասպանության հարցը մտավ թուրք-եվրոպական հարաբերությունների օրակարգ, ինչով էլ ամփոփվում է մեր աշխատությունը: Հետազոտության նպատակն է ուսումնասիրել և լուսաբանել ՀՀ անկախացումից հետո երկրի արտաքին քաղաքականության անկյունաքարային ուղղություններից մեկը և դրանում պատմական անցյալի ազդեցությունը: Թեմայի հետազոտման ընթացքում ուշադրություն ենք դարձրել հետևյալ հարցերին՝

- Հայաստան-թուրքիա հարաբերությունների քաղաքական օրակարգի ձևավորումը 1990-ական թթ.,
- Երկկողմ հարաբերություններում Հայոց ցեղասպանության դործոնը և նրա ազդեցությունը քաղաքական շփումների հաստատելու ոլորտում,
- 1998թ. Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության փոփոխությունը և Հայոց ցեղասպանության ճանաչման հարցի ներառումը դիվանադիտական օրակարգում,
- Հասարակական երկխոսությունը և դրա ներգործությունը միջպետական հարաբերությունների վրա,
- Մեծ եղեռնի ճանաչման անհրաժեշտությունը Եվրամիությունը թուրքիայի անդամակցելու համատեքստում:

Աշխատութիւնում ներկայացված տեղեկութիւնները, կատարված վերլուծութիւնները ու հիմնախնդիրների լուծման տարբերակները լուսարանում են Հայ-թուրքական արդի Հարաբերութիւնները: Առաջին անգամ գիտական շրջանառութեան մեջ է մտցվում Հայաստանի ետանկախութեան շրջանում Հայ-թուրքական Հարաբերութիւնների թեման, դրանցում Հայոց ցեղասպանութեան հիմնահարցի նշանակութիւնը: Վերականգնվում է կիսապաշտոնական Թուրք-Հայկական Հաշտեցման Հանձնաժողովի դործունեութեան պատմութիւնը:

Հատկանշական է, որ ներկայացված խնդիրն իր ամբողջութեան մեջ նախկինում համակարգված ուսումնասիրութեան չի արժանացել: Հետազոտութիւնների առկա մասը վերաբերել են Հայ-թուրքական Հարաբերութիւնների որոշ ոլորտների:<sup>1</sup> Մեր աշխատանքի համար հիմք են ծառայել Հայաստանի Ազգային արխիվում, ՀՀ ԳԱԱ Հայոց Ծեղասպանութեան թանգարան-ինստիտուտի գիտական ֆոնդերում պահվող փաստաթղթերը, ինչպես նաև Հայերենով, թուրքերենով և այլ լեզուներով առկա գրականութիւնը: Ուսումնասիրութեան մեջ կարևոր տեղ է հատկացվում Հայաստանի Հանրապետութեան<sup>2</sup> և Թուրքիայի պետական դործիչների Հայտարարութիւններին, դիվանագիտական և պաշտոնական փաստաթղթերին<sup>3</sup>, Հայոց ցեղասպանութեան մասին թուրքական պաշտոնական տեսակետն արտահայտող վավերագրերին (նախագահների և վարչապետների Հայտարարութիւններ, պաշտոնական Հայեցակարգեր, Թուրքիայի ԱԳՆ Հայտարարութիւններ, գիվանագիտական նոտաներ, դիվանագիտական ներկայացուցչութիւնների հրապարակած տեղեկատվութիւն և այլն):<sup>4</sup> Արտերկրում Հակահայկական դործունեութեան վրա լույս են սփռում թուրքական կիսապաշտոնական կամ լորրիստական խմբերի կողմից ներկայացված փաստաթղթերն և ժողովածուները, որոնք բացահայտում են դեռևս 1980-ականներից Հայոց ցեղասպանութեան ճանաչման դեմ ուղղված թուրքական քաղաքականութիւնը:<sup>5</sup> Ուշագրավ

<sup>1</sup> Զարրյան Հ., Ղարաբաղյան հիմնահարցը հայ-թուրքական հարաբերությունների հաստեքատում, Երևան, 1998, Սաֆրաստյան Ռ., «Հնարավոր չէ 21-դարում պատենշներ ստեղծել հարևանների միջև...», Երևան, 2003, Դանոյան Հ., Ղարաբաղյան հակամարտությունը և յոյորքական գործոնը, Երևան, 2002, Սաֆրաստյան Ռ., Հայ-թուրքական սահմանի Այանակոթյունը, Հայաստան-Թուրքիա. Բաց խոսակցություն, Երևան, 2005, Լաչինը Ս., Խորքիայի անդամակցությունը Եվրամիությունը և Հայկական հարցը, Հայ-թուրքական սահմանի Այանակոթյունը, Հայաստան-Թուրքիա. Բաց խոսակցություն, Երևան, 2005:

<sup>2</sup> ՀՀ Նախագահի պաշտոնական վեբ հանգույց <http://www.president.am>

<sup>3</sup> Թուրքիայի Հանրապետության արտաքին գործերի նախարարության պաշտոնական վեբ հանգույց, <http://www.mfa.gov.tr>

<sup>4</sup> Türkiye Cumhuriyetinin Devletarsivleri, <http://www.devletarsivleri.gov.tr>

<sup>5</sup> Armenian Allegations: Myth and reality: A handbook of facts and Documents: Compiled & edited by the Assembly of Turkish American Assassinations, Washington DC 1987, p. 39.



տվյալներ և վավերագրեր են պահպանում նաև Հայաստանի Ազգային արխիվում<sup>6</sup>, գիտական հաստատությունների գրոցներում, որոնք նոր լույս են սփռում Հայ-թուրքական հարաբերությունների որոշ հիմնական գիտությունների վրա:<sup>7</sup>

Նշենք, որ պատմագրությունում հանգամանալի լուսարանված են 1918-1920թթ. Հայաստան- թուրքիա միջպետական հարաբերությունների ընթացքն ու զարգացումը, ինչի մասին արժեքավոր տեղեկություններ կան ոչ միայն ժամանակակիցների, օրինակ, Ա. Խատիսյանի<sup>8</sup>, Ա. Վրացյանի<sup>9</sup>, Շ. Նաթալիի<sup>10</sup>, Բ. Կարաբեքիրի<sup>11</sup> և այլոց հուշագրություններում, այլև Ռ. Հովհաննիսյանի<sup>12</sup>, Է. Զոհրաբյանի<sup>13</sup> և ուրիշ հեղինակների աշխատություններում:<sup>14</sup>

Թուրքիայի արտաքին քաղաքական կուրսի, աշխարհաքաղաքական գերակայությունների փոփոխության վերաբերյալ ուղադրամ հրապարակումներ ունեն թուրք գիտնականներ Օրալ Սանդերը<sup>15</sup>, նախկին արտգործնախարար Իսմայիլ Զեմը<sup>16</sup>, Շուքրու Էլեքդաղը:<sup>17</sup> Նրանց կարծիքով, ներկա իրողությունների պայմաններում թուրքիան պարտավոր է կարևոր դերակատարություն ստանձնել տարածաշրջանում, վերանայել սեփական անվտանգության համակարգը:

Այս առումով առաջատարի դերը ստանձնել է թուրքիայի արտաքին գործերի նախարարության *Perceptions* հանդեսը, որը պարբերաբար հրապարակում է թուրք դիվանագետների և թուրքական աշխարհաքաղաքական շահերն արտահայտող քաղաքագետների հոդվածները: Մասնավորապես, դեռ 1990-ական թվականներին թուրք դիվանագետներն ու քաղաքագետները փորձում են արժևորել թուրքիայի դիրքորոշումը երկրաքաղաքական նոր հավասարակշռության պայմաններում:<sup>18</sup> Թուրքական պետության քաղաքական հետազոտություններին վերաբերող քննարկումներում առանձնահատուկ տեղ է

<sup>6</sup> Հայաստանի Ազգային արխիվ, ֆ. 326, ց. 7, գործ 86, 106:

<sup>7</sup> ՀՀ ԳԱԱ ՀՅԹԻ արխիվ, բաժին 32, քաղ. 26, 44:

<sup>8</sup> Խատիսյան Ա., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Արենք, 1930:

<sup>9</sup> Վրացյան Ա., Հայաստանի Հանրապետություն, Երևան, Հայաստան, 1993:

<sup>10</sup> Նաթալի Շ., Թուրքերը և մենք, Երևան, 1992, Natalic Sh., *The Turks and Us*, Punik Publishers, Nagorno Karabakh, 2002:

<sup>11</sup> Karabekir K., *Cihan harbinde neden girdik, nasıl idare ettik? Kit. I. İstanbul, 1938, s. 490*

<sup>12</sup> Hovhannisian R., *Armenia on the road to Independence 1918*, Berkley- L.A. 1967., ինչպես նաև Hovhannisian R., *The Republic of Armenia*, v1-2, Berkley 1971-1982:

<sup>13</sup> Զոհրաբյան Է., 1920թ. բուրժ- հայկական սյաներագիր և տերությունները: Ե., 1997:

<sup>14</sup> Dasnabedian H., *History of the Armenian Revolutionary Federation Dashnaksutyun (1890/1924)*, Milan, 1990

<sup>15</sup> Sander O., *Türkiyenin dış politikası*, s. 135, Ankara, 1998:

<sup>16</sup> Cem İ., *Gelecek için denemeler*, Ankara, 2000:

<sup>17</sup> Elekdağ, Ş., "2 1/2 War Strategy", vol. I, no. I, March- May 1996:

<sup>18</sup> Çakar N., *A Strategic Overview of Turkey. Perceptions: Journal of International Affairs*, 1998 June- August, volume III- number 2.

գրավել քաղաքական սցենարային ծրագրավորումը<sup>19</sup>, ինչպես նաև թուրքական արտաքին քաղաքականության ակտիվացումը Եվրոպայի, Մերձավոր Արևելքի ու Կովկաս-Կենտրոնական Ասիական տարածաշրջաններում:<sup>20</sup>

Թուրքական պատմագրությունում բազմաթիվ են նաև Հայ-թուրքական Հարաբերությունների գիտաշարը նենգափոխող աշխատությունները, օրինակ՝ Քյուչուքի<sup>21</sup>, Ալի Քարաջայի<sup>22</sup>, Մուսա Շաշմազի<sup>23</sup>, Յուսուֆ Հալաջօղլուի<sup>24</sup>, Քյամուրան Գյուրուների<sup>25</sup>, Էսաֆ Ուրասի,<sup>26</sup> Ալի Էշրեֆ Ուղունդերեի<sup>27</sup>, Թ. Գյոքքիլգինի,<sup>28</sup> Շադի Քոչաշի,<sup>29</sup> Միմ Քեմալ Էոքեի,<sup>30</sup> Սալահի Սոնյելի,<sup>31</sup> Հիքմեթ Օզդեմիրի,<sup>32</sup> Սուլեյման Քոչարաշի,<sup>33</sup> Է. Իլթերի,<sup>34</sup> Քեմալ Քարիաթի<sup>35</sup> և այլոց երկերը:<sup>36</sup> Թուրքական պաշտոնական պատմագրության ներկայացուցիչներն աչքի են ընկնում ծայրահեղ Հակահայությամբ: Կեղծելով պատմական իրողությունները, նրանք Հայ-թուրքական Հարաբերությունները բեկում են ծուռ Հայելու մեջ: Իրենց նպատակներին Հասնելու Համար թուրքական իշխանությունները Հաճախ են դիմում այլազգի, մասնավորապես ամերիկացի պատմաբանների, որոնք երկկողմ Հարաբերությունների վերաբերյալ ունեն ոչ պակաս կողմնակալ կարծիք:<sup>37</sup> Պաշտոնական պատմագրության դրույթները կրկնորդում է

<sup>19</sup>Com L., Turkey: Setting sail to the 21<sup>st</sup> Century. Perceptions: Journal of International Affairs, 1997 September- November, volume II- number 3.

<sup>20</sup>Makovsky A., The new activism in the Turkish foreign policy: SAIS Review, Winter-Spring 1999, Washington.

<sup>21</sup>Küçük C., Osmanlı Diplomasisinde Ermeni Meselesi' nin Ortaya Çıkışı (1878-1897), İkinci Baskı.

<sup>22</sup>Karucu A., Anadolu İstahı ve Ahmet Şakir Paşa (1838-1899), İstanbul, 1993.

<sup>23</sup>Şaşmaz M., British Policy and the Application of Reforms of the Armenians in Eastern Anatolia 1877- 1897. Türk Tarih Kurumu, Ankara, 2000.

<sup>24</sup>Halaçoğlu Y., Realities Behind the Relocation, from Armenians in the Late Ottoman Period, ed I. Benark, Ankara, 2002.

<sup>25</sup>Gürün K., The Armenian File, The Myth of Innocence Exposed, N.Y-London, 1985.

<sup>26</sup>Uras E., Tarihte Ermeniler ve Ermeni Meselesi, Ankara, 1950.

<sup>27</sup>Uzundere A. E., İnsanlık Suçu: İğdir ve Çerçesinde Ermeniler'in Türk Kırımı , Ankara, TTK Basımevi, 2002.

<sup>28</sup>Gökbilgin T., Milli Mücadele Başlarken. Mondros Mütarekesinden Sivas Kongresine, Birinci Kitap, Ankara, 1959.

<sup>29</sup>Koçuş Ş., Tarih Boyunca Ermeniler ve Türk Ermeni İlişkileri, Ankara, 1967.

<sup>30</sup>Öke, M. K., Yüzyılın Kan Davası: Ermeni Sorunu, 1914-1923, 3. Baskı, İstanbul, Aksoy, 2001.

<sup>31</sup>Sonyel S., Minorities and Destruction of the Ottoman Empire Ankara 1993.

<sup>32</sup>Özdemir H. [ve baş] Ermeniler: Sürgün ve Göç, Ankara, 2004.

<sup>33</sup>Süleyman Kocabaş, "Ermeni meselesi: nedir, ne değildir?", İstanbul, 1984.

<sup>34</sup>Erdal I., Türk- Ermeni İlişkilerin Bibliyografyası, Ankara, Ankara Üniversitesi, 1997.

<sup>35</sup>Karpat K. H., Ottoman Population 1830-1914, The University of Wisconsin Press, 1985.

<sup>36</sup>Metin İ., Osmanlı'nın Kanlı Tarihi, Ant Yayınları, İstanbul, 1996, Çark Y.G. Türk Devlet Hizmetinde Ermeniler 1453-1953, İstanbul, 1953.

<sup>37</sup>Shaw S. J and K. Ezel. "History of the Ottoman Empire and Modern Turkey", vol. 2. N.Y. 1977., McCarthy Justin, Muslims and Minorities, NY, 1983., McCarthy J., The Anatolian Armenians,

քաղաքագիտական միտքը, որի ներկայացուցիչներն է. Զարարյր<sup>38</sup>, ՌԻ. Չևիքյոզը<sup>39</sup>, Ք. Քաարմը<sup>40</sup>, Ս. Էոզեզը<sup>41</sup> և ուրիշներ<sup>42</sup> փորձում են միջազգային Հարաբերությունների տեսության մեթոդաբանության միջոցով հիմնավորել Հակահայկական արշավը:

Ի Հակակշիռ ՀՀ արտաքին քաղաքականության և Հայ-թուրքական Հարաբերությունների վերաբերյալ թուրքական պատմագրության Հակադիտական տեսությունների, այս ոլորտում ծանրակշիռ ներգրում ունեն Հայ և օտարազգի ուսումնասիրողներ, մասնավորապես Ն. Հովհաննիսյանը<sup>43</sup>, Լ. Խուրշուդյանը<sup>44</sup>, Ա. Սվարանցը<sup>45</sup>, Ժ. Լիպարիտյանը<sup>46</sup>, Լ. Խրիզանթոփուլոսը<sup>47</sup>, Վ. Ստուպիշինը<sup>48</sup>, Ա. Կուրտովը, Ա. Խալմուհամեդովը<sup>49</sup>, Ա. Այվաղյանը<sup>50</sup>, Ի. Մուրադյանը<sup>51</sup> և այլք<sup>52</sup>:

1912-1922, from *Armenians in the Ottoman Empire and Modern Turkey (1915-1926)*, Boğazici University Publications, Ankara 1992., McCarthy, J., *Population of the Ottoman Armenians, Armenians in the Ottoman Empire and the Modern Turkey*, Ankara, 2002.

<sup>38</sup> Cabbarlı H., *Bağımsızlık sonrası Ermenistan- Rusya ilişkileri*, Ankara, ASAM, 2004.

<sup>39</sup> Çeviköz U., *Uluslararası ilişkileri yeni denge*, Ermenistan Özel Sayısı, TESEV, Ağustos, 2001.

<sup>40</sup> Kasım K., *Uluslararası ilişkiler Bpyuntulu Ermeni Sorunu: Bülüm ve Aklın Aydınlığında Eğitim Dergisi: NİSAN 2003, YIL, 4, SAYI : 38.*

<sup>41</sup> Özel S., *ERMENİLERİN VE YABANCILARIN GÖZÜYLE TÜRKERMENİ İLİŞKİLERİ VE ERMENİ SORUNUNA BİR BAKIŞ*, Nisan 2003 NİSAN EK SAYISI ISSN: 1303 – 9814:

<sup>42</sup> *The Armenians in the Late Ottoman Period*, ed. Benark L, Ankara, 2001 Çaycı, A., "Türk-Ermeni İlişkilerinde Gerçekler", *Tarihi Gelişmeler İçinde Türkiye'nin Sorunları Sempozyumu, Dün-Bugün-Yarın, Bildiriler*, Ankara, 8-9 Mart 1990, Ankara, yay. y., 1992, s. 75-114., Gürün, K., "Türkiye-Ermenistan İlişkileri", *Avrasya Etütleri*, Cilt 3, No 1, 1996, s. 54-64. Kurzioğlu F., "Türk-Ermeni İlişkileri", *Kıbrıs'ın Dünü-Bugünü Uluslararası Sempozyumu, Gazi Magosa, Doğu Akdeniz Üniversitesi ve Yüzüncü Yıl Üniversitesi*, 1993, s. 93-106.

<sup>43</sup> Hovhannisyan N., *The Foreign policy of Armenia*, Yerevan, 1998.

<sup>44</sup> Խուրշուդյան Լ., *Հայոց ազգային գաղափարախոսություն*, Երևան, 1999:

<sup>45</sup> Сваранц А., *Пантюркизм в Геостратегии Турции на Кавказе*, Москва, АГИ, 2002.

<sup>46</sup> Լիպարիտյան Ժ., *Պետականության մարտահրավերը. հայ քաղաքական միտքը անկախությունից ի վեր*, Երևան, «Նաիրի», 1999:

<sup>47</sup> Chrysantopoulos L. T., *Caucasus Chronicles, Nation Building and Diplomacy in Armenia, 1993-1994*, Prinectone- London, 2002.

<sup>48</sup> Ступишин В., *Моя миссия в Армении*, М., 2001.

<sup>49</sup> Куртов А., Халмухамедов А., *Армения-Турция: Противостояние или Сотрудничество? Армения: Проблемы независимого развития*, М., 1998.

<sup>50</sup> Այվաղյան Ա., *Հիմնատարրեր ազգային անկախությունից հայեցակարգի*, 1, Երևան 2004, նույնի *Հարավարևելյան հակամարտության կարգավորումը և Հայաստանի քաղաքական անկախությունը*, Երևան, 1998:

<sup>51</sup> Мурадян И., *Политика США и проблемы безопасности региона Южного Кавказа*, Ереван, 2000.

<sup>52</sup> Гаджиев "Геополитика Кавказа", Москва, 2001., Պողոսյան Ա., *Պանթուրքիզմը երկր և աշխարհ*, Երևան, 1990, Ananyan A., & Careja R., *Formation and Development of Political Opposition in Armenia, from Stumbling but Struggling : Political Opposition in Four Post- Soviet Countries*, Moscow, Strategia, 2004., Անանյան Ա., *Թուրքիայի Մերձավորարևելյան քաղաքականության ուղիվազիչը և հայ-թուրքական հարաբերությունները իրարյան ճգնաժամի համատեքստում*, *Տարածաշրջան, Նորավանք հիմնադրամ*, N2:

Թուրքական պետության ցեղասպան բնույթին է անգրառանում Ի. Մեթինը<sup>53</sup>, Իսկ Յու. Բարսեղովի<sup>54</sup>, Պ. Օհանյանի<sup>55</sup> և Ռ. Բողոսյանի<sup>56</sup> ուսումնասիրությունները ներկայացնում են Թուրքիային միջազգային իրավական պատասխանատվության ենթարկելու մի քանի գրություններ:

Երկկողմ հարաբերությունների պատմությանը համապատասխան գնահատական տալու համար կարևոր նշանակություն ունի Յեզասպանության միջազգային ճանաչման համար ծախսված պայքարին առնչվող բազմաթիվ փաստաթղթերի և աշխատությունների ուսումնասիրությունը:<sup>57</sup>

Հրեթացս Թուրքական դիտական և հասարակական շրջանակներում հնչում են տեսակետներ, որոնք ոչ միայն չեն մերժում Հայ-թուրքական կառուցողական երկխոսությունը, այլև առաջարկում են հարաբերությունների բարելավման իրատեսական ուղիներ: Աստիճանաբար Թուրքական հասարակությունում ձևավորվում է մի շերտ, որը չի ժխտում Հայոց ցեղասպանությունը և անգամ կոչ է անում Թուրքական կառավարությանը ընդունել պատմական ճշմարտությունը:<sup>58</sup>

Վերջին ժամանակներս առաջ են քաշվում նաև Հայ-թուրքական հարաբերությունների սպագայապաշտական (ֆուտուրոլոգիստական) ծրագրեր, ինչպես նաև հասարակական հաշտեցման սցենարներ:<sup>59</sup>

Ուշագրավ են աշխարհաքաղաքականության ոլորտում ճանաչված մասնագետեր Ս. Հանթինգտոնի<sup>60</sup> և Ջ. Բոգոսինսկու<sup>61</sup> աշխատությունները, որոնք թեև վերաբերում են արդի համաշխարհային զարգացումներին, սակայն առանձին անգրադարձ են կատարում նաև Թուրքիային և Հայաստանի հարաբերություններին: Կարևորել ենք

<sup>53</sup>Metin İ, *Osmanlının Konlu Turulu, Ant Yayımları, İstanbul, 1996.*

<sup>54</sup>Барсегов Ю., Турецкая доктрина международного права на службе политики геноцида, Москва, 2002., Барсегов Ю., Геноцид армян - преступление по международному праву. Москва: Изд. Дом "XXI век- Согласие", 2000.

<sup>55</sup>Օզանյան Պ., *Геноцид Армянского народа и защита прав человека, Ер. 2003.*

<sup>56</sup>Boghossian R. *Le Conflict Turco- Armenien, Beyrouth, 1987.*

<sup>57</sup>Բարսեղյան Լ., «Ամերիկայի Միացյալ Նահանգները. Հայոց ցեղասպանությունը և քուրդական հակազդեցությունը», Երևան, 2001, Բարսեղյան Լ., Միջազգային հանրությունը դատապարտում է Հայոց ցեղասպանությունը, Երևան, 1998, Բարսեղյան Լ., Ֆրանսիան Հայոց ցեղասպանությունը օրենսդրությամբ ճանաչում ատաղին պետությունն է աշխարհում. Երևան, 2002:

<sup>58</sup>Ալիյի Լանցանսանյի տես. Akçam T., *Dialogue Across an International Divide: Essays Towards a Turkish- Armenian Dialogue, Zoryan Institute 2001.*

<sup>59</sup>Jerjian G., *The Truth Will Set Us Free: Armenians and Turks Reconciled, London, 2003.* Хомичури Г., *Социальные потрясения в судьбах народов, Москва 1997.*

<sup>60</sup>Huntington S., *The Clash of Civilizations and the Remaking of World Order, NY, 1996.*

<sup>61</sup>Бжежинский З., *Великая шахматная доска, М., 1999.*

ժամանակակից աշխարհաքաղաքական գործընթացներն արտացոլող այլ հետադոտություններ նույնպես:<sup>62</sup>

Մեր ուշադրությունից չեն վրիպել թուրքական արտաքին քաղաքականության ընդհանրական համապատկերը ներկայացնող չեզոք հեղինակների աշխատությունները, որոնցում բացահայտվում են թուրքիայի դիվանագիտության գործունեության ուղղություններն ու առաջնայնությունները, նրա գործելաոճն ու դինամիկան: Այս տեսանկյունից հետաքրքրական են ուսումնասիրության ժամանակագրությանը նախորդող տասնամյակներին թուրքական արտաքին քաղաքականությունը լուսարանող գործերը:<sup>63</sup>

Հատկանշական է, որ մինչ այժմ թուրքիան իրականացնում է Հայոց ցեղասպանության ժխտման ու ուրացության քաղաքականություն. այս խնդրին են անդրադառնում պատմաբաններ Վ. Տատրյանը<sup>64</sup>, Ռ. Հովհաննիսյանը<sup>65</sup>, Ի. Չարնին<sup>66</sup>, Լ. Մարաշլյանը<sup>67</sup>, Լ. Վարդանը<sup>68</sup>, Ա. Սարաֆյանը<sup>69</sup>, Ռ. Սմիթը<sup>70</sup> և ուրիշներ<sup>71</sup>:

<sup>62</sup>Nye J. Jr., *Understanding International Conflicts*, New York, 1993., *International Institute for Strategic Studies, The Military Balance, 1995- 1996*, London: Oxford University Press, 1996., *Василенко И., Политическая Глобалистика*, Москва, 2000.

<sup>63</sup>Սուլթան Բ., *Внешняя политика Турции после Второй Мировой Войны*, М, 1976, Սուլթան Բ., *Внешняя политика Турции в 60-х начале 80-х годов*, М, 1986. Zürcher E. J. *Turkey, A Modern history*, London- NY, 1994., Pope N & H., *Turkey Unveiled*, New York 1997. Турье С. *Метаморфозы традиционного сознания*, СПб, 1994. *Всемирная История* (в 24 томах), том 20, том 23.

<sup>64</sup>Dudrian V. N. *The History of the Armenian Genocide: Ethnic conflict from the Balkans to Anatolia and the Caucasus*, 1997, Oxford., Dudrian V. N., *The Key Elements in the Turkish Denial of the Armenian Genocide: A Case Study of Distortion and Falsification*, Ontario 1999. Dudrian V. N. *Warrant for Genocide*, New Branswick, NJ, USA, 1999., Տատրյան Վ., *Հայոց ցեղասպանությունը խորհրդարանային և արամագիտական քննարկումներով*, Կորեթրաուն, 1995:

<sup>65</sup>Овагнисиян Р., *Отрицание: Геноцид Армян как прототип такого подхода: Вестник: Армянский Институт Междунднародного права и Политологии в Москве*, 2004.

<sup>66</sup>*Encyclopedia of Genocide: Volume I: Ed. Churny I., Jerusalem: 1998.*

<sup>67</sup>Marashlian L. *Politics and Demography. Armenians, Turks and Kurds in the Ottoman Empire*, Cambridge, MA, 1991.

<sup>68</sup>Վարդան Լ., *Հայկական Տասնհինգր րորը մասնագրություն և մամուլի մեջ և ուրիշ*, ԻՆԵՐՄԻՒՄ, 1998:

<sup>69</sup>Sarafyan A., *The Ottoman Archives Debate and the Armenian Genocide*, *Armenian Forum*, 2, no 1, Spring 1999.

<sup>70</sup>Smith R., *Denial of the Armenian Genocide*, *Genocide A Critical Bibliographic Review*, Vol 2, London, New York., Smith R., Markusen E., Lifton R. J., *Professional Ethics and the Denial of Armenian Genocide: Holocaust and Genocide Studies*, 9(1),1-22, Astourian, S. H. "Modern Turkish Identity and the Armenian Genocide: From Prejudice to Racist Nationalism". - In: *Remembrance and Denial: The Case of the Armenian Genocide*. Ed. Hovannisiun R. G., Detroit: Wayne State University Press, 1998.

<sup>71</sup>Վիրախյան Ջ., *Առաջին համաշխարհային պատերազմը և տրեմտահայությունը*, Երևան, 1965, Инджикян О. Г. *Социальная психология геноцида*, Ереван, 1995., Авакян А., *Геноцид 1915г. Механизмы принятия и исполнения решений*, Ереван, 1999., Պողոսյան Ս., Պողոսյան Կ., *Թորքերը բորքերի մասին*, Երևան, 2000, Davidian D., *Addressing Turkish*

Հայ-թուրքական հարաբերությունները մշտապես և ցայսօր էլ հայկական և թուրքական մամուլի ուշադրության կենտրոնում են: Եվ եթե հայաստանյան լրատվամիջոցների համար թուրքալիայի ներքին ու արտաքին քաղաքականության համակողմանի լուսարանումը կարևոր տեղ է զբաղում, ապա թուրքական ՋԼՄ-ները երկկողմ հարաբերություններին անգրագատնում են սոսկ Հայոց ցեղասպանության միջադրային ճանաչման, Հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ ՀՀ և այլ պետությունների իշխանությունների ներկայացուցիչների հայտարարությունների ու Արցախյան հակամարտության հետ կապված խնդիրների համատեքստում: Հայ-թուրքական հարաբերությունների մասին ընդարձակ հոդվածներ են տեղ գտել «Հայաստանի Հանրապետություն»<sup>72</sup>, «Ազգ»<sup>73</sup>, «Երկիր»<sup>74</sup>, «Հայոց աշխարհ»<sup>75</sup>, «Հայկական ժամանակ»<sup>76</sup>, «Առավոտ»<sup>77</sup> թերթերում, «Ռուսլենյու» "Республика Армения"<sup>78</sup> պարբերականում, որոնք ներկայացրել են հաճախ իրարամերժ կարծիքներ և տեսակետներ: Խնդրո առարկային ուշադրով հրատարակումներ են նվիրել նաև «Գարուն»<sup>79</sup>, «Հայկական բանակ»<sup>80</sup>, «Հայաստան Երևանից»<sup>81</sup> և այլ հանգստանքներ: Միջուկի պարբերականներից հարկ է առանձնացնել Հայալեզու «Ասպարեզ»<sup>82</sup>, «Հայրենիք»<sup>83</sup> (ԱՄՆ), «Ժամանակ»<sup>84</sup> (Թուրքիա), անգլիալեզու «Արմինիան Ուիլիսին»<sup>85</sup>, «Արմինիան Բիֆորթերը»<sup>86</sup> (ԱՄՆ), հայերեն և թուրքերեն լեզուներով լույս տեսնող «Ակոս»<sup>87</sup> թերթերը, ինչպես նաև «Արմինիան ինթերնեշնլը մեդիան»<sup>88</sup> հանդեսը: Հարուստ տեղեկատվություն են պարունակում նաև հայկական

Genocide Apologists, Volume I-IV, S.D.P. A. CRS Publication, 1989, Անանյան Ա., Հայոց ցեղասպանության միտման բորքական քաղաքականությունը հայ-թուրքական հարաբերությունները համատեքստում, Երևան, «Գարուն» 11, 2002, էջ 10-15, Անանյան Ա., Հայոց ցեղասպանության միտման նոր փորձ. Թուրքական պատմական բնկերակցության «Հայր. Արսոր և գաղթ» ուշադրության մասին, Երևան 2005:

<sup>72</sup> Հայաստանի Հանրապետություն, 1991-2004:

<sup>73</sup> Ազգ, 1992-2004:

<sup>74</sup> Երկիր, 2000-2004:

<sup>75</sup> Հայոց աշխարհ, 2000-2004:

<sup>76</sup> Հայկական ժամանակ, 2000-2004:

<sup>77</sup> Առավոտ, 2000-2004:

<sup>78</sup> Республика Армения, 1992-2004:

<sup>79</sup> Գարուն, 2002-2004:

<sup>80</sup> Հայրենիք բանակ, N2, 1996:

<sup>81</sup> Հայաստան Երևանից, N 9, 2002:

<sup>82</sup> Ասպարեզ, 2001:

<sup>83</sup> Հայրենիք, 2003:

<sup>84</sup> Ժամանակ, 2001-2003:

<sup>85</sup> Armenian Weekly, 2003:

<sup>86</sup> Armenian Reporter, 2001:

<sup>87</sup> Agos, 1998-2004:

<sup>88</sup> AIM, 2001:

լրատվական գործակալությունների՝ «Արմենպրեսի»<sup>89</sup> և «Նոյյան Տապանի»<sup>90</sup> Հաղորդագրությունները, «Ազատություն»<sup>91</sup> ռադիոկայանի Հայկական ծառայության Հաղորդածամերը:

Աչքաթող չեն արվել նաև թուրքական մամուլի հրապարակումները, որոնք տեղ են գտել «Միլլիյեթ»<sup>92</sup>, «Հուրիյեթ»<sup>93</sup>, «Զուլհուրիյեթ»<sup>94</sup>, «Ռադիկալ»<sup>95</sup>, «Սարաճ»<sup>96</sup>, «Զաման»<sup>97</sup>, «Յենի Շաֆաք»<sup>98</sup>, «Յենի Բինյըլ»<sup>99</sup>, «Թըրքիշ դեյլի նյուս»<sup>100</sup> թերթերում: Հայ-թուրքական հարաբերությունները բազմիցս արծարծվել են նաև «Աքթյուեկ»<sup>101</sup>, «Թըրքիշ փրոուբ»<sup>102</sup>, «Փոփյուլեր թարիհ դերդիսի»<sup>103</sup> հանդեսներում, թուրքական TRT<sup>104</sup> և CNN-Türk<sup>105</sup> հեռուստարձևերում: Համացանցային կայքէջերում, ինչպես նաև «Անադոլու»<sup>106</sup> գործակալության լրատվական Հաղորդագրություններում: Հիշյալ թեմայով որոշ նյութեր հրապարակվել են նաև ամերիկյան «Նյու Յորք Թայմս»<sup>107</sup>, «Վաշինգտոն Թայմս»<sup>108</sup>, «Վաշինգտոն Փոսթ»<sup>109</sup>, ռուսական «Նեզավիսիմայա դադեստա»<sup>110</sup> թերթերում, ֆրանսիական «Փրանսպրեսս»<sup>111</sup> գործակալության լրատվությունում:

<sup>89</sup> Արմենպրես, 2002-2004:

<sup>90</sup> Նոյյան Տապան, 1998-2003:

<sup>91</sup> RFE/RL Armenia Report, 2001:

<sup>92</sup> Milliyet, 2000-2004.

<sup>93</sup> Hürriyet, 1999-2004.

<sup>94</sup> Cumhuriyet, 2000-2004.

<sup>95</sup> Radikal, 2000-2004.

<sup>96</sup> Sabah, 2000-2004.

<sup>97</sup> Zaman, 2000-2004.

<sup>98</sup> Yeni Şafak, 2003-2004.

<sup>99</sup> Yeni Binyıl, 2004.

<sup>100</sup> Turkish Daily News, 1996-2004.

<sup>101</sup> Aktüel, 2000-2001.

<sup>102</sup> Turkish Probe, 1999-2002.

<sup>103</sup> Pöpuer Tarih Dergisi, 2003.

<sup>104</sup> TRT, <http://www.trt.net.tr>

<sup>105</sup> CNN-Türk, <http://www.cmnturk.com>

<sup>106</sup> Anadolu Ajansı, 1993-2001.

<sup>107</sup> New York Times, 2001.

<sup>108</sup> Washington Times, 2001.

<sup>109</sup> Washington Post, 2001-2003.

<sup>110</sup> Независимая газета, 1996-2003.

<sup>111</sup> Francepress, 1993.

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

### ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆԸ ՀԱՅ-ԹՈՒՐԳԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 1991-1998թթ.

ա) Թուրքիայի աշխարհաքաղաքական գերի փոփոխություններ և Հայոց ցեղասպանության գործոնը պաշտոնական Անկարայի արտաքին քաղաքականությունում

Արդի քաղաքական իրականությունում Թուրքիան ձեռք է բերել կարևոր նշանակություն: Աշխարհաքաղաքական նպաստալուծ գիրքը բարձրացնում է նրա կշիռը միջազգային հարաբերություններում: Լինելով Եվրոպան Ասիայի հետ կապող ամենակարճ ցամաքային ճանապարհը, միևնույն ժամանակ Թուրքիան բանակի թվակազմով, ԱՄՆ-ից հետո ՆԱՏՕ-ի ռազմական համակարգի երկրորդ պետությունն է: Թուրք գիվանազետներն ու աշխարհաքաղաքագետները նշում են իրենց երկրի կարևորության ևս մի քանի գործոն, ի մասնավորի, նրա գերակատարությունը սևծովյան ավազանում, որտեղ տարածաշրջանային նկրտումները օրըստօրե ավելի ցայտուն են դառնում: Նրանց կարծիքով, Թուրքիան ստանձնել է ՆԱՏՕ-ի հարավարևելյան թևի ղեկավար դիրքը, և պիտի հակադիմացի գեր կատարի Կովկասում ու Կենտրոնական Ասիայում և այլն:<sup>112</sup> 1990-ական թվականներին Թուրքերը փորձեցին մշակել արտաքին քաղաքական նոր հայեցակարգ: Իր պաշտոնավարման սկզբում Թուրքիայի արտաքին գործերի նախարար Իսմայիլ Զեմը ծրագրային հայտարարություն արեց, ըստ որի 21-րդ դարում Թուրքիան նպատակ ունի դառնալ «գլոբալ պետություն»<sup>113</sup>: Հաստատելով ժողովրդավարական կարգեր և հարգելով մարդու իրավունքների համընդհանուր սկզբունքները: Թուրքական «գլոբալ պետությունը», նրա մատուցմամբ, իր հիմքում պիտի սրբորեն պահպանի աթաթուրքյան «Խաղաղություն տանը՝ խաղաղություն աշխարհում» հայտնի կարգախոսը: Զեմի հոգվածը ուղենշում էր Թուրքիայի արտաքին քաղաքականության առաջնայնությունները քսանմեկերորդ դարում, կրկին անգամ փորձելով Թուրքիայի տեղը փնտրել Եվրոպա-

<sup>112</sup> Ալմիի Խանգուսանյալի տեղս Շահր Ն., *A Strategic Overview of Turkey. Perceptions: Journal of International Affairs*, 1998 June- August, Volume III- Number 2.

<sup>113</sup> Cem İ., *Turkey: Setting sail to the 21<sup>st</sup> Century. Perceptions: Journal of International Affairs*, 1997 September- November, Volume II- Number 3.



յում: Սակայն, Հարկ է ճշտել, թե իրականում ի՞նչ է ներկայացնում գլոբալ պետություն գառնապու թուրքական գաղափարը: Թուրք պատմաբան Օրալ Սանդերը գլոբալ պետության իր պատկերացումն ունի. նա պարզաբանում է, որ Գերմանիան երկու անգամ գլոբալ (Համաշխարհային) պետություն դառնալու փորձ արեց՝ երկու անգամ էլ սանձադեղծելով Համաշխարհային պատերազմ:<sup>114</sup> Այս Համատեքստում, մեղմ սասած, անհասկանալի է թվում, թե ինչ է գլոբալ պետությունը թուրքական տեսանկյունից: Արդյո՞ք Ջեմի Թուրքիան է գլոբալ, թե Սանդերի Գերմանիան:

1990-ականների սկզբից Թուրքիայի քաղաքական դաշտում առկա են ձգողության երեք բևեռներ, որոնք որոշում են երկրի արտաքին քաղաքականության գերակայությունները և ուղղվածում են արտաքին քաղաքական սեփական կուրսը: Առաջինը և առաջնայինը արևմտականացման բևեռն է՝ Եվրոպան, քանզի արգեն սկնՀայտ է, որ Թուրքիան առաջնահերթ է Համարում արտաքին քաղաքական եվրոպական կողմնորոշումը: Համաձայն «Միլլիյեթ» թերթում տպագրված Հասարակական կարծիքի Հարցումների, Թուրքիայի բնակչության 68.7 տոկոսը պաշտպանում է երկրի լրիվ անգամակցությունը Եվրամիությանը, այդ գաղափարը մերժում է բնակչության միայն 9.9 տոկոսը:<sup>115</sup>

Արտաքին քաղաքականության երկրորդ բևեռը «Թուրանն» է. Թուրքիան Հայացքն ուղղում է Արևելք՝ դեպի Կովկաս և Կենտրոնական Ասիա: Նոր քաղաքական իրականությունը, գլոբալ տրանսպորտային կոմունիկացիաները, էներգետիկ Հարուստ սեպուրաների առկայությունը Կասպյան-կենտրոնասիական տարածաշրջանում և քաղաքակրթական ու լեզվական մերձությունը կարևոր են դարձնում արտաքին քաղաքական այս ուղղությունը:

Եվ վերջապես Հարավային ձգողության կենտրոնը՝ սկսելով ներգրավվածություն միջինարևելյան գործընթացներում: Թուրքիայի գերակատարությունը կարևորվում է տարածաշրջանում խաղաղության Հաստատման գործում, առանձնանում են Թուրքիայի երկկողմանի Հարաբերությունները տարածաշրջանի պետությունների՝ Իսրայելի, Սիրիայի, Իրանի, Իրաքի Հետ:

«Նոր» Թուրքիան իր արտաքին քաղաքական կուրսի ձևավորմամբ և ընդհանրապես պետության կերտմամբ պարտական է թուրքական Հանրապետության Հիմնադիր Մուստաֆա Գևալ Աթա-

<sup>114</sup>Sander O., Türkiye'nin dış politikası, Ankara, 1998, s. 135.

<sup>115</sup>Milliyet, 21.09.2000

Թուրքին:<sup>116</sup> Քսաներորդ դարի 20-30-ական թվականներին երկիրն առերևույթ դառնվում էր գերակայության փնտրաուքի մեջ, և Քեմալի քաղաքական կուրսի շնորհիվ կարողացավ գերտերություններից շարունակարար դիջուլմեներ կորզել միջազգային համաժողովներում, որոնք ուղղակիորեն առնչվում էին Թուրքիային (Լոզանի կոնֆերանս (1922-1923թթ.), Սևծովյան նեղուցների կարգափոխման մասին նոր կոնվենցիա (1936 թ.), Թուրք-Ֆրանսիական պայմանագիր): Երկրորդ աշխարհամարտի ընթացքում Անկարան առերևույթ չեզոքություն էր խաղում, սակայն նրա համադրանքը բացահայտորեն նացիստական Գերմանիայի կողմն էր:<sup>117</sup> Թուրքիան նախապատրաստվում էր հարձար ստիժի դեպքում ներքաշվել ռազմական գործողության ներքին մեջ՝ ընդդեմ Խորհրդային Միության: Միայն պատերազմի ավարտական փուլում, երբ արդեն պարզ էր ուժերի դասավորվածությունը, Թուրքական դիվանագիտության նախընտրությունը փոխվեց, իսկ Ֆաշիստական Գերմանիայի ջախջախման նախօրին Թուրքերը «Թանաքային պատերազմ» հայտարարեցին նացիստներին: Երկրորդ աշխարհամարտից հետո ձևավորվեց սկզբունքորեն նոր երկրևեռ աշխարհակարգ: Սկսվեց «սառը պատերազմը»՝ գերտերությունների ռազմաքաղաքական մրցավազքը: 1945թ. մայիսի 19-ին ԽՍՀՄ-ը հայտարարեց, որ չեղյալ է հայտարարում Թուրքիայի հետ կնքած 1925թ. դեկտեմբերի 17-ի բարեկամության և չեզոքության պայմանագիրը: Միայն ԱՄՆ-ի և Անգլիայի ջանքերը Պոտսդամի կոնֆերանսի ընթացքում սապալեցին կարսը և Արդահանը ետ ստանալու Ստալինի ծրագրերը: Համաձայն Թրումենի հայեցակարգի՝ ԱՄՆ-ի հետպատերազմյան արտաքին քաղաքական կուրսի, Թուրքիային և Հունաստանին արտնայրվելու էր օժանդակություն՝ խորհրդայնացումից պաշտպանվելու համար:<sup>118</sup> Ետպատերազմյան ավելի քան քառասնամյա ժամանակաշրջանում Անկարայի արտաքին

<sup>116</sup> Նին Քեմալի քայքայություններն արտաբնապես սրբատախան կերպով փոխում են Խորհրդային քաղաքական արժեհամակարգը, քայքայուցված Լոռյան գտնում է, որ արտադրնապես արևմտականացված բենայիզմ իր մեջ արտաբնական է բարբարական ավանդական գիտակցարքան հենասյունների մոդիֆիկացիաները, որոնք հանդես են գալիս, նոր՝ նվրդակառնացված ոճով, ազգայինը փոխարինեց կրոնականին, խրամի ռազմիկի դերը (պետականության պաշտպանի ինդիկոր) իր վրա վերցրեց ազգային բանակը, և այն: Ինքնին հեռազրքիր աթ տեսությունից կարելի է հետևություն անել, որ չեն փոխվեց քաղաքական ազգային նկարագրի էությունը, որ «նոր» Խորհրդային և վերջինիս գաղափարախոսությունը անձնակն էլ նոր չի, այլ հանդիսանում է սուլթանականի շարունակությունը՝ նույնընան կայսերականալատական է: Ինքնին հեռազրքրական աթ տեսությունն անդրադառնալով, սակայն կշեղի մեզ մեր ուսումնասիրության բան նյութից՝ Ավելի հանգամանալի տես, Ալքուե Շ, *Memorandum on international relations*, ՀԻՊ, 1994:

<sup>117</sup> *Восмисривая История* (в 24 томех), том 20, сир 364-373, том 23, сир 534-541.

<sup>118</sup> Ավելի հանգամանալի տես Nye J. Jr., *Understanding International Conflicts*, New York, 1993, րր 98-128.

քաղաքականությունը Համեմատաբար պասիվ էր և սահմանափակվում էր թուրք դիվանագետներին խաղաղության կոչող աթաթուրքյան Համապարփակ ծրագրային Հայտարարությանը, ինչն ուներ իր դրգապատճառները. Թուրքիայի արտաքին քաղաքականության առաջնային և հիմնական նպատակը արտաքին ներխուժման վտանգից պահպանվածությունն էր: Նա ամբողջովին լծվում է ՆԱՏՕ-ի ռազմական մեքենային, անվերապահ աջակցություն տրամադրելով վերջինիս: 1958թ. թուրքերը թույլատրեցին Միացյալ Նահանգներին Լիրանան ներխուժել իրենց տարածքից:<sup>119</sup>

1974 թ. Թուրքիան ձեռնարկեց լիտիությունը աննախադեպ քայլ՝ զինված ինտերվենցիա ինքնիշխան պետության տարածք, ներխուժելով Կիպրոս: Իրա Հետևանքով թուրքական բանակը բռնագավթեց կղզու տարածքի մոտ քառասուն տոկոսը: Հետագայում՝ բռնագավթումից տաս տարի անց, թուրքական ենթակայության տակ գտնվող Հյուսիսային Կիպրոսում ստեղծվեց խամաճիկային և մինչ օրս բացի Անկարայից ոչ ոքի կողմից չճանաչված Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետությունը: Կար նաև արտաքին քաղաքական պասիվությանը նպաստող մեկ այլ պատճառ՝ տասնամյակը մեկ երկիրը ցնցող ռազմական հեղաշրջումները, որոնք Հնարավորություն չէին տալիս ակտիվորեն հանդես գալու միջազգային ասպարեզում:

Այդուհանդերձ, մինչև 90-ական թթ. Թուրքիայի արտաքին քաղաքականությունը նշանակալի Հաջողություններ չարձանագրեց<sup>120</sup>: Սակայն 1990 թ. Մերձավոր Արևելքում տեղի ունեցան իրադարձություններ, որոնք արմատապես շրջեցին Թուրքիայի արտաքին քաղաքական կուրսը: Օգոստոսին Իրաքի զինված ուժերը ներխուժեցին Քուվեյթ: Անմիջապես շախմատվեց վերջինիս թույլ ու նվազ բանակը, իսկ իրաքյան այս Հանդգնությունը բավական լուրջ քաղաքական արձագանք գտավ ողջ աշխարհում: Թուրքիան եռանդուն կերպով ներգրավվեց ՄԱԿ-ի գրոշի տակ Հավաքագրվող Հակաիրաքյան դաշինքին: 1991թ. սկզբիցին ռազմական գործողությունները Իրաքի դեմ, և Անկարան անհապաղ արգելեց իրաքյան նավթի փոխադրումները Քիրքուք-Յուժուրթալըք նավթամուղով, սպա ԱՄՆ-ին տրամադրեց Ինջիրլիքի օդային ռազմակայանը՝ Իրաքը ոճրակոծելու համար: Թուրքիան դեռևս 1987թ. դիմել էր Եվրահամայնքին՝ խնդրելով քննարկել իր թեկնածությունը այդ կազմակերպության

<sup>119</sup>Makovsky A, *The new activism in the Turkish foreign policy: SAIS Review, Winter-Spring 1999, Washington DC.*

<sup>120</sup>Մինչև 1990-ականները Թուրքիայի վարած արտաքին քաղաքականության մասին ավելի հսկողամանալի տես, Пончеверия Б. М., *Внеинная политика Турции после Второй Мировой Войны*, М, 1976, և նույնի *Внеинная политика Турции в 60-х начале 80-х годов*, М, 1986.

անդամակցելու համար: Երկրենու աշխարհում թուրքերը կարող էին հուսալ, որ որոշ ժամանակ սպասելով, կընդգրկվեն այդ կառույցում՝ հանդիսանալով «կարմիր վտանգի» գեմ պայքարում արևմտյան ավանգարդը, սակայն օր-օրի թուլացող ԽՍՀՄ-ը այլևս նախկին այնքան սարսափելի «չարիքի կայսրությունը» չէր, որի առաջխաղացումը կանխելու համար անհրաժեշտ պատենչ էր թուրքիան: Անկարան Արևմուտքին տված հավատարմության երդումը նորացնելով, կրկին ջանում էր ապացուցել, որ հարգում է ժողովրդավարական արժեքները: Չպետք է մոռանալ, որ 1980թ. ռազմական հեղաշրջումը, որը դրականորեն չէր բնութագրում թուրքերին, դեռ թարմ էր եվրոպացիների հիշողության մեջ: Թուրքիան հավանում էր հաստատել, որ տակավին, Արևմուտքի համար հետաքրքրություն ներկայացնող տարածք և հուսալի հենարան է Արևելքում: Օղալը տանել չէր կարողանում Սադամ Հուսեյնին, որին ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշի հետ հանդիպման ժամանակ անվանել էր «աշխարհի ամենավտանգավոր մարդը»:<sup>121</sup> Որոշ վերլուծարաններ կարծում են, որ Օղալը ակնկալում էր տարածաշրջանի քարտեզի վերաձևում, և ցանկանում էր, որ թուրքիան գոնե այդ անգամ լինի ոչ թե ճաշացանկում, այլ խնջույքի սեպանի մոտ: Հիմնական նշանակետը, սակայն, բժախնդրորեն քողարկվում էր հիշյալ և հարակից գրգապատճառների ծխածածկույթով: Հնարավոր է, որ թուրքիան հետապնդում էր Իրաքի նման ռազմական հզոր մեքենայի վերացման նպատակ, միանշանակ էր, որ միացյալ ուժերով ամերիկամետ կոալիցիան արագորեն հաղթանակի կհասնեն (և հասալ) երկրի հավանական թշնամի, ագրեսիվ նկրտումներ ունեցող արաբական պետության դեմ: Գործեց ուրիշի ձեռքով կրակից շագանակ հանելու դիվանագիտական հայտնի հնարքը:

Իրաքն արագորեն ծնկի բերվեց, սակայն իրական խնդիրները ծաղեցին հետապալում: Պատերազմը ցույց տվեց, որ թուրքիան կարող էր դաշնակիցների կողմից լիովին անպաշտպան թողնվել իրաքյան հնարավոր հարձակման դեպքում, ՆԱՏՕ-ի գործընկերները նրան հատկացրեցին սոսկ թեթևազեն ինքնաթիռներ, որոնք արդեն իսկ ենթակա էին գուրսզրման, միայն Հոլանդիան տրամադրեց Patriot տեսակի արդի հակահրթիռային համակարգ:<sup>122</sup> Որո՞նք էին հակաիրաքյան ռազմարշավի մյուս րացասական հետևանքները թուրքիայի համար:

Պատերազմի արդյունքում ստացված անմիջական տնտեսական վնասը. ըստ որոշ գնահատականների, կազմեց 6 մլրդ դոլար, ռազմական գործողությունների ողջ ընթացքում ԱՄՆ-ը ակտիվորեն

<sup>121</sup>Makovsky A., *The new activism in the Turkish foreign policy: SAIS Review, Winter-Spring 1999, Washington DC.*

<sup>122</sup>Zürcher E. J., *Turkey, A Modern history, London- NY, 1994 p. 334.*

դրդում էր իրաքյան քրդերին՝ ապստամբել Սադամի վարչակազմի դեմ: Քրդերն, իրենց հերթին, մի կողմ գնելով ներքին պայքարը, սկսեցին անկախական շարժում, որը կանխվեց Թուրքիայի և արևմտանվրոպական պետությունների գործուն միջամտությամբ՝ սուլթան Թողնելով քրդական պետության ձևավորման հեռանկարը: Վերջինիս ստեղծումը հղի էր լուրջ հետևանքներով. ողևորված հարավի եղբայրակիցների օրինակով, ինքնորոշման պահանջ կներկայացնեին նաև Թուրքիայի քրդերը, իսկ ապստամբության բոցը կարող էր արմատապես փոփոխել տարածաշրջանի քարտեզը: Հրատապ էր քուրդ փախստականների հարցը, որոնց Անկարան մտադիր չէր ապաստան տալ իր տարածքում:<sup>123</sup>

Չնայած հետպատերազմյան ասուլիսներում նախագահ Օզալը հայտարարում էր, որ Թուրքիան «պիտի հրաժարվի նախկին պասիվ ու անվստահ քաղաքականությունից և ընդգրկվի ակտիվ քաղաքականություն մեջ»<sup>124</sup>, նման հայտարարությունները հիմնադուրկ էին, թեպետև հստակորեն արտահայտում էին Թուրքիայի իրական նկրտումներն ու ձգտումները:

Թուրքիայի արտաքին քաղաքականության կուրսի իրական փոփոխությունը տեղի ունեցավ Խորհրդային Միության փլուզումից հետո: 1990թ. օգոստոսի մոսկովյան իրադարձություններն ապացուցեցին, որ ԽՍՀՄ-ը, որպես քաղաքական հզոր միավոր, չի կարող դուրս գալ ունենալ: 1991թ. դեկտեմբերին Բելոգոմեյան թավուտում խփվեց Միության դադարի վերջին մեխը: Հարավային Կովկասն ու Կենտրոնական Ասիան անջատվեցին հսկայական կայսրությունից:

Արտաքին քաղաքական նոր կողմնորոշումը Թուրքիային պիտի դարձնեին թյուրքական հանրապետությունների քաղաքական ամբողջության անվիճելի առաջնորդը և ըստ նախագահ Թուրքուօթ Օզալի՝ 21-րդ դարը պիտի լիներ թյուրքական աշխարհի դարը:<sup>125</sup>

Վերոնշյալ երկու հանգամանքների բերումով, երկրում պաշտոնապես հասունացավ արտաքին քաղաքական դերակայությունների վերադնահատման անհրաժեշտությունը: Ստեղծվեցին այնպիսի նախադրյալներ, երբ դիվանադիտության արժեքային և աշխատանքային մոդելները կարող էին փորձարկվել իրական քաղաքականությունում:

Հայոց ցեղասպանության ժխտման թուրքական քաղաքականությունը նոր թափ հավաքեց 1980-ականներին, կապված Թուրքիայում

<sup>123</sup>Zürcher E. J., *նույն տեղում*, pp 334-335.

<sup>124</sup>Robins Ph., "Turkish policy and the Gulf Crisis: Adventurist or Dynamic?" from Clement Dodd ed. *Turkish Foreign policy: New prospects*: Cambridgeshire, 1992, p 70.

<sup>125</sup>Zürcher E. J., *Turkey, A Modern history*, London- NY 1994 p 335.

և նրա սահմաններից դուրս տեղի ունեցած իրադարձությունների և զարգացումների հետ: 1980թ. սեպտեմբերի 12-ին իրականացվեց ռադմական հեղաշրջում, և գինվորականությունը գրավեց իշխանությունը, սաստկացնելով այլակարծության դեմ պայքարը, վերագարձնելով թուրքիան քեմալական հիմնադրույթներին: Փաստորեն, թուրքական հասարակական գիտությունները հարմարվեցին ներքին ռազմաքաղաքական իրավիճակին, պետությունը ձևավորեց Հայոց ցեղասպանության ժխտման նորացված հայեցակարգ, որը դրվեց պետական դադախարախոսություն մշակող բոլոր հաստատությունների աշխատանքների հիմքում: Մամուլի հրապարակումներում սկսեց դերակշռել Հայաստացությունը, դրաշուկան հեղեղվեց հակահայ աշխատություններով և գեղարվեստական գրականությամբ.<sup>126</sup>

Հայ-թուրքական հարաբերությունները պայմանավորող կարևորագույն հիմնախնդիրը ցայսօր պատմությունն է: Քսաներորդ դարակղզին, օդավելով համաշխարհային պատերազմի թռչունների, թուրքիան աննախադեպ դաժան մեթոդով փորձեց լուծել Հայկական հարցը:

Հայոց ցեղասպանության խնդրի նշանակությունը հասկանալու համար կարևոր է լուսաբանել այն դադախարաբանական տիրույթը, որի շրջանակներում դործում է ժամանակակից թուրքական պետությունը՝ օրհեղրելով ցեղասպանության ուրացության թեզը: Այս առումով, հարկ ենք համարում անդրադառնալ մի քանի մեթոդաբանական դրույթների: Ուսումնասիրողները միակարծիք են, որ ցեղասպանության ուրացությունը մարդկության դեմ ուղղված այդ հանցանքի վերջնափուլն է, երբ փորձ է արվում ոչնչացնել է դոհի պատմական հիշողությունը.<sup>127</sup> Նրանց կարծիքով, ցեղասպանության ժխտումը ցավալի դործողություն է, որը պիտի ներառվի ցեղասպանությունների հետևանքների վերացման և վնասի փոխհատուցման բարոյական հարթությունում: «Ցեղասպանության հանրագիտարանի» բնորոշմամբ՝ ժխտումը պետք է համարվի ցեղասպանության եզրափակիչ փուլը, որը կարող է շարունակվել բուն սպանությունների ավարտից շատ հետո.<sup>128</sup> Այն կարող է ունենալ բազում շարժառիթներ: Ցեղասպանադետ իսրայել Չարնիի կարծիքով, ժխտումը

<sup>126</sup> Sb'u Kochar M.P., *Две Турции- Два Мировоззрения: УрЛԵԿԱԳԻՏՈՒՐՅԱՆ ԽԱՐՑԵՐ*. 3-4 էջ 24-25:

<sup>127</sup> Օսաննիսյա Ք., *Отрицание: Геноцид Армян как прототип такого подхода: Вестник: Армянский Институт Международного права и Политологии в Москве: 2004, стр 49:*

<sup>128</sup> *Dental of Genocide, Psychology of, from Encyclopedia of Genocide, volume 1, Ed. Israel W. Charney, Jerusalem 1998, p. 159.*

«Հարձակում է զոհերի կուլեկտիվ ինքնության և ազգային մշակութային շարունակականության վրա»:<sup>129</sup>

Ցեղասպանություն հանցագործությունը մարդկության պատմությանն ուղեկցել է դարեր ի վեր, նախկինում նվաճողներն անդամ հպարտանում էին դրավված երկրներում գործած դաժանություններով: Այս առումով բացառություն չի եղել նաև Օսմանյան կայսրությունը: Թուրք ուսումնասիրող Իսմայիլ Մեթինը դրում է, որ Հարյուրամյակներ շարունակ Օսմանյան կայսրությունը պաշել է իր հեղինակությունը «ժողովուրդներին վախեցնելով, սպանություններ և հաճընդհանուր կոտորածներ կազմակերպելով»:<sup>130</sup>

19-րդ դարի վերջին և 20-րդ դարասկզբին, միջազգային մարդասիրական իրավունքի զարգացմանը զուգահեռ, իրավիճակը կտրուկ փոխվեց. պետությունները ամեն կերպ ջանում էին կոծկել և պարտակել իրենց գործած հանցագործությունները մարդկության և մարդկայնության դեմ: Դեռևս Հուլոս Գրոցիուսի ժամանակներից պետությունը կորցրել էր սեփական քաղաքացիների նկատմամբ ինքնիշխանությունը:<sup>131</sup>

Ցեղասպանությունը նախևառաջ հանցագործություն է, իսկ յուրաքանչյուր ոճրին վաղ թե ուշ հաջորգում է պատիժը: Նշենք նաև, որ 20-րդ դարասկզբին արդեն հաճընդհանուր կիրառություն էր դառել նաև «Հումանիտար ինտերվենցիայի» միջազգային իրավական սկզբունքը, երբ մարդու իրավունքների պաշտպանության համար տերությունները կարող էին միջամտել այլ պետությունների ներքին դործերին: Դեռևս 1878թ., ստորագրելով Բելուինի գաղնազիրը, Բարձր Դուռը պարտավորվեց «առանց Հետագա հապաղման իրադործել Հայաբնակ մարդերում տեղական կարիքներից հարուցված բարեփոխումներն ու բարենորոգումները և ապահովել հայերի անվտանգությունը չերեքեղներից ու քրդերից: Բարձր Դուռը տերություններին պարբերաբար կհազորդի այն միջոցառումների մասին, որոնք ինքը ձեռք է առել այդ նպատակի համար, իսկ տերությունները կհսկեն դրանց կիրառմանը»:<sup>132</sup> Թուրքական իշխանությունները, հստակ գիտակցելով, որ ոտնահարում են ոչ միայն ներպետական, այլև միջազգային իրավունքի նորմերը, ձեռնամուխ եղան ցեղասպանության իրականացմանը:

Առաջին աշխարհամարտի տարիներին, օսմանյան իշխանությունները հրապարակ հանեցին քարոզչական բնույթի փաստաթղթերի ժո-

<sup>129</sup> Նույն տեղում, p 159.

<sup>130</sup> Meiri İ., Osmanlıdan Kanlı Tarihi, Ant Yayıncılık, İstanbul, 1996, s 12.

<sup>131</sup> Տե՛ս օրինակ Boghossian R. Le Conflict Turco-Armenien, Beyrouth, 1987, pp. 57-59:

<sup>132</sup> Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության վստահություն (1828-1923), Երևան, 1972, էջ 128:

ղոգածուներ, որոնք նպատակ ունեին արդարացնել պատերազմի ժամանակ իրականացված տեղահանություններն ու շարդերը: Առաջին աշխարհամարտում կրած պարտությունից հետո, նրանք փորձեցին Օսմանյան կայսրությունն արդարացնելու համար մեղքը բարդել երիտթուրքական կուսակցության վրա: Ինչպես նշվում է ետպատերազմյան ժամանակաշրջանում լույս տեսած, թուրքական ներքին գործերի դերատեսչության կողմից կազմված քարոզչական աշխատություններից մեկում, «Միություն» կաղմակերպության մեղքը, որ մշակել և մտածված իրականացնում էր ոչնչացման ու կողոպուտի այդ ներքին քաղաքականությունը, ակներախ է: Նրա պարադոքսները պատկանում են մարդկության ամենամեծ հանցադործների շարքին: ... Թուրք ժողովուրդն իր գլուխը խոնարհում է Հայ ժողովրդի ողբերգության առաջ: Դա նա անում է տիրություն՝ Հայ ժողովրդի և ամօթով՝ իր համար: Նա խոստովանում է դա և պարտավորություններ է իրականացնում, որոնք հետևանք են այդ իրադարձությունների: Բայց թուրք ժողովուրդը մերժում է որևէ բարոյական պատասխանատվություն՝ կապված իր անարժան դեկավարների գործողությունների հետ, և նրանց չի ճանաչում... Թուրքերն իսկապես սպանել են Հայերին, կոտորածներ կազմակերպել, կողոպտել և ավերել նրանց տները»:<sup>133</sup>

Թուրքական իշխանությունները դիտակցել են, որ Հայ ժողովրդի դեմ իրականացրած ոճիրները վաղ թե ուշ պատժվելու են, այդ իսկ պատճառով փորձել են ամեն դեպ պատասխանատվության բեռը ամբողջությամբ դնել երիտթուրքական կուսակցության վրա: 1920թ. օգոստոսի 10-ին Օսմանյան կայսրությունը Անտանտի պետությունների հետ կնքեց Սևրի դաշնագիրը, որի տակ գրվեց նաև Հայաստանի Հանրապետության պաշտոնական ներկայացուցչի ստորագրությունը, որով էլ Թուրքիան ճանաչեց Հայաստանի լիիրավ անկախությունը, Հայաստանի առաջին հանրապետությանը վերագրվեց Հայոց պատմական Հայրենիքի մի զդպի մասը, ամբողջվեցին պատերազմական հանցադործներին պատժելու և հասցված վնասի փոխհատուցման գրույթները,<sup>134</sup> ու թեև 1923թ. Լոզանի պայմանագիրը արդեն չէր պարունակում նման կետեր, Թուրքիայի Հանրապետությունը չէր կարող չզգալ համաշխարհային հանրության ճնշումը՝ առաջին աշխարհամարտի ընթացքում Հայ ժողովրդի դեմ դորժած հանցագործության համար պատասխանատվության կանչվելու առումով:

Բնավ պատահական չէ, որ հակասությունական պայքարի ստալինյան տարիներին Հայոց ցեղասպանությունը փաստող հայտարարություն-

<sup>133</sup>The Turco-Armenian Question: The Turkish Point of View, Constantinople 1919, p 84.

<sup>134</sup>Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության վաստակողներով (1828-1923), Երևան, 1972, էջ 676-680:



ներ է արել նաև Թուրքիայի Հանրապետության առաջին նախագահ Մուստաֆա Բեմալ Աթաթուրքը: Շվեյցարացի լրագրող Էմիլ Հիլ-դենրրանդին տված հարցազրույցում, որը 1926թ. տպագրվել է նաև «Լոս Անջելես Իկզեմիները» թերթում, Աթաթուրքն ասում է. «Իթթի-հաթականները պիտի հաշիվ տան մեր միլիոնավոր քրիստոնյա հպատակների կյանքերի համար, որոնք զանգվածաբար անխնա տեղահանվել են իրենց տներից և ջարդվել»:<sup>135</sup> Մեծ եղեռնի իրողությունները ճանաչող բոլոր Հայտարարությունները, սակայն, ունեն մի քողարկված ենթատեքստ. թուրք գործիչները ամեն դնով ցանկանում են ապացուցել, թե կառավարությունը հայերին բնաջնջելու նպատակ չի ունեցել:

Ինչո՞վ էին պայմանավորված թուրք գործիչների այդօրինակ Հայտարարությունները: Հայոց ցեղասպանությունը հսկայական միջադեպին արձագանք էր գտել, անգամ պատերազմական պայմաններում հաստատված խիստ գրաքննության պարադայում, այս պատճառով Բեմալը լուրջ խնդիր ուներ՝ շեղել համաշխարհային քննադատության սլաքը Թուրքիայի Հանրապետությունից:

30-ական թթ. Հայկական Հարցն ու Մեծ եղեռնը անուշազրության մատնվեցին միջադեպին դիվանագիտության կողմից, իսկ թուրքական պատմագրությունը այս հարցերին սկսեց անդրադառնալ Հայ ժողովրդի ողջ պատմական անցյալը կեղծելու նպատակով:<sup>136</sup> Վերստին նշենք, որ թուրքական նման գործելատճի հիմնական շարժառիթներից մեկը Հայոց ցեղասպանության համար միջադեպին իրավական պատասխանատվությունից խուսափելն է:<sup>137</sup> Օսմանյան կայսրությունը Թուրքիայի Հանրապետությանը փոխանցեց Հայոց ցեղասպանության ծանր ժառանգությունը, որը կոծկելու նպատակով արդեն վերջինս չի խնայում ոչ ջանք ու ոչ էլ ֆինանսական ռեսուրսներ:<sup>138</sup>

<sup>135</sup>Dudriun V., *Documentation of the Armenian Genocide in Turkish Sources*, NY, 1991, p. 131.

<sup>136</sup>Նշենք, որ ԱՄՆ-ում բուրբակյան դեսպանատան գործուն մասնակցությամբ, Անկարային հարողվեց կասեցնել ամերիկահայ ռեժիսոր Ի. Մամուլյանի և «Մեթրո գոլդուին մայեր» ընկերության համատեղ ծրագրի՝ «Մուսա լեռան 40 օրը» փամբարած ֆիլմի նկարահանումները:

<sup>137</sup>Էեռ Առաջին աշխարհամարտի տարիներին Օսմանյան կայսրության կողմից հայ ժողովրդի դեմ իրականացված մահասփյուռ արշավը բնորոշվել է որպես հսկայագործություն, իսկ երիտթուրքական իշխանությունների դեմ 1919թ. սկսված դատավարությունները փաստեցին, որ դեռ ժամանակի իրավական չափանիշներով բուրբակյան իշխանությունների գործած արարքները համարվել են պատժելի:

<sup>138</sup>Թուրքական միտման մասին մասնավորապես տես, Dudriun V., *The Key Elements in the Turkish Denial of the Armeninn Genocide: A Case Study of Distortion and Falsification*, Ontario 1999, Akcam T., *Турецкое национальное Я и Армянский Вопрос*, Москва, 1995: Smith R., *Denial of the Armenian Genocide, Genocide A Critical Bibliographic Review, Vol 2*, London, New York, pp 63-85: Smith R., Markusen E., Lifton R. J., *Professional Ethics and the Denial of Armenian Genocide: Holocaust and Genocide Studies*, 9(1),1-22: Անանյան Ա., Հայոց

Ինչպես նշեցինք, ուրացության ու զեղծարարության թուրքական արշավը առանձնակի թափ հավաքեց 1980-ականներին, երբ մի շարք երկրներում խորհրդարանները ճանաչեցին Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած Հայոց ցեղասպանությունը: 1981թ. հունիսի 10-ին թուրքական Հեռուստատեսության մեկնարանը, անդրադառնալով Մեծ եղեռնի միջազգային դատապարտմանը, խոստովանեց. «Ցեղասպանության ընդունումը շատ կարևոր խնդիր է: Դրա համար էլ մենք այստեղ ու ամենուրեք ջանում ենք ապացուցել, որ ցեղասպանություն չի եղել: Սա երկար շղթայի մի օղակն է միայն: Ցեղասպանությունն այն որոգայթն է, որի միջոցով հայերը ցանկանում են հասնել մեկ այլ նպատակի: Դա հետևյալն է. հայերը մեծամասնություն էին կազմում Արևելքում: Այնտեղ դոյություն ունեցող Հայաստան: Թուրքերն այն դատարկեցին: Մեզնից պահանջում են, որ հայերին կրկին բերենք այստեղ և հիմնենք նոր Հայաստան: Սրանով ուղղում եմ նախադրուշացնել մեր որոշ քաղաքացիներին: Նրանցից ոմանք, թող ինձ ներվի ասել, պարզամտորեն և մանկամտությամբ են վերաբերվում այս հարցերին: Նրանք ասում են՝ թողնենք այդ բոլորը և գերմանացիների ու հրեաների օրինակով հաշտության ձեռք մեկնենք միմյանց... Սրանից ավելի վտանգավոր բան չի կարող լինել: Գործը դրանով չի վերջանա, գործը դրանով կսկսվի»:<sup>139</sup>

Թուրքիայի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունները և այլազան Հաստատություններ ակտիվորեն ճգնում էին կասեցնել Մեծ եղեռնի դատապարտումը Միացյալ Նահանգներում, Եվրոպական Համայնքի (1992թ. Եվրոպական Միության) խորհրդարանում և այլ երկրներում: Ուշագրավ է, որ շատ դեպքերում Անկարայի ներկայացուցչությունները շարունակել են իրենց հակահայ դործողություններն անգամ տվյալ երկրի խորհրդարանի կողմից Մեծ եղեռնի ճանաչումից հետո, օրինակ՝ Արդենտինայում, օրենսդիր մարմնի՝ Հայոց ցեղասպանությունը ճանաչելու որոշումից հետո անգամ, թուրքական դեսպանատունը պաշտոնական Բուենոս-Այրեսից պահանջում է, որ վերջինս արգելանք դնի 1915-1923թթ. ոգեկոչման արարողությունների վրա:<sup>140</sup>

Սառը պատերազմի իրողությունները Անկարային Հնարավորություն էին տալիս Հայոց ցեղասպանության ճանաչման դիմ պայքարի գործում ակտիվորեն խաղարկել ՆԱՏՕ-ի դործոնը և ԽՍՀՄ-ի

ցեղասպանության միտման բուրբական քաղաքականությունը հայ-բուրբական հարաբերությունների համատեքստում, Երևան, «Գարուն» 11, 2002, էջ 10-15:

<sup>139</sup> Պողոսյան Ս., Պողոսյան Կ., Թուրքերը բուրբակի մասին, Երևան, 2000, էջ 3-4:

<sup>140</sup> 1915-1917թթ. Հայոց ցեղասպանության հարցի վերաբերյալ Արգենտինայի կառավարող շրջանակների դիրքորոշման մասին, Հայաստանի Ազգային Արխիվ, Ֆ. 326, ցուց 7, Գործ 106, էջ 2:

դեմ իրականացվող քաղաքականությունը: Հայոց ցեղասպանության ժխտման ամենաակնառու քարոզարշավը թուրքական պետությունն իրականացնում էր ԱՄՆ-ում. գործին կցվել էին ոչ միայն պետական բոլոր կառույցները, այլև Կոնգրեսում ձևավորվել էր թուրքիայի շահերի պաշտպանության խումբ: 1985թ. Հունիսի 3-ին մի քանի կոնգրեսականներ (Մելվին Փրայս, Բիլ Նիքոլս, Մարվին Լիթ և ուրիշներ) նամակով դիմեցին իրենց դործընկերներին, խնդրելով կասեցնել H.J. Res. 192 բանաձևի ընդունումը, որը դատապարտում էր 1915-1923թթ. Հայոց ցեղասպանությունը:

Կոնգրեսականները նամակը կազմել էին թուրքիա կատարած այցից հետո: Ի դեպ, խորհրդարանականները այնտեղ հանդիպել էին պետության բարձրաստիճան ներկայացուցիչներին, որոնք և իրենց մտահոգությունն էին փոխանցել նամակադիրներին: Ըստ վերջինների, բանաձևի ընդունումը «կվտանգի ներկա լավ հարաբերությունները թուրքիայի Հանրապետության հետ» և «հայերին ոչինչ չի տա»:<sup>141</sup>

Թուրքական իշխանությունների կողմից Փինանսավորվող ամերիկյան դիտնականները բաց նամակով դիմում են Կոնգրեսին: Այսպես կոչված «69 դիտնականների նամակը», որը հրատարակվել էր «Նյու Յորք Թայմս» թերթի էջերում, մինչ այժմ չըջանառվում է Հայոց ցեղասպանության ժխտման թուրքական քաղաքականության հղովույթում:<sup>142</sup>

Թուրքերի Համար աղետալի եղավ 1987թ. Հունիսի 18-ին Եվրոպական խորհրդարանի կողմից Օսմանյան կայսրությունում իրականացված Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձևի ընդունումը: Արդեն Հունիսի 27-ին թուրքիայի նախագահ Բ. Էվրենը, ելույթ ունենալով Սվազ քաղաքում դումարված բաղմահազարանոց ցույցի մասնակիցների առաջ, մերժեց կայսրության պատասխանատվությունը Հայոց ցեղասպանության համար:<sup>143</sup> Խոսելով բանաձևի ընդունումից հետո ստեղծված իրավիճակի մասին, նա նշեց, որ տարօրինակորեն ՆԱՏՕ-ի անդամ պետությունները թուրքիային մեղադրում են շատ ավելի հաճախ, քան Վարչապետի պակտի մասնակից երկրները: Այս առումով ԵՄ որոշումը էվրենն անվանել է՝ «հարված թիկունքից»:<sup>144</sup> Նախագահը դիմեց բացարձակ շանտաժի, Հայտարարելով, որ թուրքիան պատրաստ է դուրս դալ Հյուսիսատ-

<sup>141</sup>“Dear Colleague” Letter distributed to all Members of the U.S. Congress by its signatories on June 3, 1985, Armenian Allegations: Myth and reality, A handbook of facts and Documents: Compiled & edited by the Assembly of Turkish American Assosiations, Washington DC 1987, p 39.

<sup>142</sup>The New York Times, 19, 1985

<sup>143</sup>Հայաստանի Ազգային Արխիվ ֆ326, ց 7, գ. 89 էջ 3

<sup>144</sup>Նույն տեղում, էջ 5:

լանտյան Համագործակցությունից: Այս սպառնալիքին Հաջորդեց Թ. Օզալի Հունիսի 24-ի պարզաբանումը, որ Անկարան չի պատրաստվում խզել Հարաբերությունները ՆԱՏՕ-ի հետ:<sup>145</sup>

Այսպիսին էր Հայոց ցեղասպանության խնդրի թուրքական քաղաքականության ուրվագիծը մինչև 1990-ականները, երբ Մեծ եղեռնը դարձավ Հայ-թուրքական Հարաբերությունների կարևորագույն հիմնահարցերից մեկը:

բ) Հայոց ցեղասպանության հիմնախնդիրը և Հայաստան-Թուրքիա միջպետական Հարաբերությունները 1991-1998թթ.

Արդեն 15 տարի է, ինչ Անկարայի և Երևանի Հարաբերությունները անշեղորեն պահպանում են դարգացման նույն, դրոյական դինամիկան: Անցած տարիների ընթացքում թուրքերը նորանկախ Հայաստանի դեմ փորձարկեցին դիվանագիտական թշնամանքի բոլոր Հայտնի ու անՀայտ ձևերը. նախ չհաստատեցին դիվանագիտական Հարաբերություններ, սպա միացան Հայաստանի շրջափակման սղրբեջանական մարտակառքին և անգամ սպառնում էին «ատամ ցույց տալ»՝ թափանցիկորեն ակնարկելով 1915-1923 թթ. Հայոց ցեղասպանությունը՝ «կրկնել Հայերի անատոլիական դասերը»:

Անկախությունից ի վեր Հայ քաղաքական միտքը քննարկում է Հայ-թուրքական Հարաբերությունների Հեռանկարի Հարցը: Քննարկում են այնպես, ասես բարելավման բանալին Երևանի ձեռքում է, ու Հայաստանը չի ցանկանում Թուրքիայի հետ որևէ շփում ունենալ:

Ի տարբերություն Հայաստանի, Հենց Թուրքիան էր առաջ քաշում նախապայմաններ, որոնց կատարումը Երևանի կողմից կնշանակեր հրաժարում արցախյան աղատամարտի նվաճումներից, ինչպես նաև Հայ ժողովրդի պատմական հիշողության նոր եղեռն: Ամեն դեպքում, բազմամյա քննարկումները արդյունքներ չգրանցեցին, իսկ խնդրին անդրադարձող գործիչները որևէ իրատեսական ծրագիր չառաջարկեցին ու երևի չէին էլ կարող առաջարկել Հենց միայն այն պատճառով, որ Հայ-թուրքական Հարաբերությունների բարելավման ոլորտում Երևանը փոխդիջման գնալու ուեսուրս չունի:

Երկկողմ շփումների օրակարգում է ոչ միայն 1915-1923 թթ. Օսմանյան կայսրության կողմից կաղմակերպված և իրականացված Հայոց ցեղասպանության ճանաչումը, այլև Ղարաբաղյան աղատամարտը: Անկարան չի ցանկանում համակերպվել անկախ Արցախի գոյության հետ:

<sup>145</sup>Նույն տեղում, էջ 8:

Հիշեցնենք, որ չնայած Հարաբերությունները դարգացնելու Հնարավորություններին, Հայաստանի և Թուրքիայի առնչությունները մեռյալ կետից շատ քիչ են առաջ գնացել: Երևանի և Անկարայի միջև չեն հաստատվել դիվանադիտական Հարաբերություններ, Թուրքիան անդամ չունի բնականոն կապեր Հաստատելու քաղաքական կամք: Թուրքիան Ադրբեջանի հետ ձեռք-ձեռքի տված շրջափակել է Հայաստանը, մերժելով արցախահայության ինքնորոշման իրավունքի ճանաչումը:<sup>146</sup> Պաշտոնական Անկարան բազմիցս Հայտարարել է Երևանի հետ երկխոսության սկսելու իր նախապայմանները: Վերջինս, սակայն, պնդում է առանց նախապայմանների Հարաբերությունների կառուցման անհրաժեշտության վրա: Այդուհանդերձ, Անկարայի և Երևանի պաշտոնական ներկայացուցիչները բազմիցս հանդիպել են երկկողմ և բազմակողմ ձևաչափերով: Այդ հանդիպումների և նույնաբնույթ միջադաշին ֆորումների քննարկման առարկան եղել են երկկողմ Հարաբերությունների բաղուժ հիմնախնդիրները: Ի վերջո, Թուրքական կողմի սպակառուցողական ու կարծրացած դիրքորոշումը բոլոր այդ նախաձեռնությունները ձախողման է դատապարտել: Անկարայի այսօրինակ քաղաքականությունը աշխարհաքաղաքական հստակ Հաշվարկի արդյունք է: Մեր կարծիքով, Հայ-Թուրքական Հարաբերությունները նաև կոփկասյան աշխարհաքաղաքական սառցալեռան երևացող դազաթններից միայն մեկն է: Չէ՞ որ այս տարածաշրջանում են խաչվում միջադաշին Հարաբերությունների հիմնական դերակատարների՝ ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Եվրամիության և այլոց շահերը: Այս իրողությունների պայմաններում Հայ-Թուրքական Հարաբերությունների խնդիրը իր վրա է բեռնում համաշխարհային հանրության ուշադրության մի նշանակալի մաս:

Պաշտոնական Հարաբերությունների բացակայության պայմաններում այդ դաշտում են փորձել աշխատել Հասարակական կամ երկրորդային դիվանադիտության ներկայացուցիչները, որոնք առաջ են քաշել նաև Հասարակական երկխոսության անհրաժեշտության հարցը: Իհարկե, Հասարակական դիվանադիտությունը միշտ չէ, որ եղել է ինքնաբուխ: Ցայսօր այս ոլորտում էլ առաջընթացը չնչին է:

1990-ականների սկզբին Հայաստանը, ջանալով արևմտյան Հարևանի հետ երկխոսության եզրեր գտնել, Հայոց ցեղասպանութ-

<sup>146</sup> Հայաստանն ու Թուրքիան ունեցել են միջուկատակալի հարաբերությունների շատ կարճատև փորձ՝ 1918-1920թթ. Խնդրո առարկայի վերաբերյալ տե՛ս Խատիսյան Ա., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Արժնք, 1930: Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, 1928: Hovbannisian R. Armenia on the road to Independence 1918, Berkley-L.A. 1967: նույնի՝ The Republic of Armenia, v1-2, Berkley 1971-1982: Չոխարյան Է. 1920թ. բուրք- հայկական պատերազմը և տերությունները: Ե. 1997, Gökbulgin T. Milli Mücadele Başlarken. Mondros Mütarekesinden Sivas Kongresine, Birinci Kitap, Ankara, 1959. Kazım Karabekir, Cihan harbinde neden girdik, nasıl idare ettik? Kit. 1. İstanbul, 1938 և այլն:

յան ճանաչման խնդիրը չընդգրկեց իր արտաքին քաղաքական առաջնայնությունների շարքում, չնայած Մեծ եղեռնի միջազգային ճանաչման անհրաժեշտությունը ստրատեգիկ էր դեռևս 1990թ. օգոստոսի 23-ին ընդունված Անկախության հռչակագրում. պաշտոնական երևանը հանդես եկավ հարևան պետությունների հետ բարիգրացիական հարաբերությունների հաստատման կարևորությունը ամրագրող և հաշտեցման կոչ անող հայտարարություններով:<sup>147</sup> Հայոց Համագային շարժման առաջնորդները անհիմն և կործանարար էին համարում այն տեսակետը, որ Հայաստանը, շրջապատված լինելով իր նկատմամբ թշնամական տրամադրվածություն ունեցող երկրներով, կարող է գոյություն ունենալ միայն հզոր պետություններից մեկի աջակցությամբ: Արդեն 1990թ. նոյեմբերին, ՀՀՇ երկրորդ Համագումարում կուսակցության առաջնորդ Լ. Տեր-Պետրոսյանը հայտարարեց. «Վերջին տարիներին քաղաքական մտքի մեջ տեղի ունեցած ամենամեծ հեղափոխությունը հրաժարումն է օտարներին ապավինելու, երրորդ պետության հովանավորության վրա հույս դնելու սնանկ գաղափարից... Փնտրենք և ստեղծենք մեր ազգի դոյություն նոր, ավելի հուսալի երաշխիքներ: Ահա այս երաշխիքների օգակներից մեկն է միայն Հայաստանի և Թուրքիայի հարաբերությունների կարգավորումը»:<sup>148</sup> Լինելով խորհրդային հսկայածավալ կայսրության հոգեվարքի ականատեսն ու լուռ վկան՝ Թուրքիան 90-ական թթ. վերափոխափորում էր տարածաշրջանային իր գերակայությունները:<sup>149</sup> Սկզբում Թուրքական կողմը, պաշտոնական մակարդակով, մտավախություն էր հնչեցնում ԽՍՀՄ քայքայման առիթով՝ մասնավորապես արտգործնախարար Մեսութ Զրյմազը հայտարարում էր. «Աստված մի արասցե, որ Խորհրդային Միությունը քայքայվի: Մեղ համար նախընտրելի է Թուրքիայի հարևանությամբ ունենալ գերհզոր պետություն քաղաքական կայուն կարգավիճակով, քան անկախ, բայց անկայուն մի քանի հանրապետություններ»:<sup>150</sup> Շուտով, սակայն, Թուրքերը վերակողմնորոշվեցին և անգամ հայտարարեցին, որ 21-րդ դարը լինելու է Թուրքական աշխարհի դար: Թուրքիան փորձում էր օգտագործել իր պատմական, էթնիկական և լեզվական ընդհանրությունները Ազրբեջանի և Կենտրոնական Ասիայի թրքախոս երկրների վրա վերահսկողություն հաստատելու համար՝ ցանկա-

<sup>147</sup> Տես օրինակ Հայաստանի Հանրապետություն, 28.11.1990:

<sup>148</sup> Հայաստանի Հանրապետություն, 28.11.1990:

<sup>149</sup> Kramer H., *Will Central Asia Become Turkey's sphere of influence, Perceptions: Journal of International Affairs*, March-May, 1996.

<sup>150</sup> Չաքրյան Հ. «Կարաբաղյան հիմնախորհրդի հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում, Երևան 1998, էջ 11:

նապոյ դառնայ թյուրքական աշխարհի կենտրոնը.<sup>151</sup> Այս փոփոխութ-  
յունը պատահական չէր: Մինչև «երկաթյա վարագույրի» անկումը  
Թուրքիան համարվում էր Արևմուտքի և Հյուսիս-Ատլանտյան դա-  
շինքի առաջապահը ԽՍՀՄ-ի դեմ պայքարում: Վարչավյան անվտան-  
գության համակարգի քայքայումը սպառնում էր Թուրքերին զրկել  
Արևմուտքի համար գրավչությունից: Այս պարագայում համաթուր-  
քական աղաբեյի (ağabey)՝ ավագ եղբոր կարգավիճակը Անկարայի  
միակ խաղաքարտն էր: Թուրքերի նոր մարտահրավերը շատ կարճ  
ժամանակով ստացավ անգամ Վաշինգտոնի աջակցությունը: Շուտով,  
իհարկե, այս ծրագիրը տապալվեց, և համաթուրքականությունը  
կրկին զիջեց իր դիրքերը Անկարայի արտաքին քաղաքական օրա-  
կարգում:

Այս ամենի լույսի ներքո պարզ է, որ տարածաշրջանում թուրքա-  
կան քաղաքականությունը իրականում միտված էր խորհրդային  
կայսրության դիրքերի խարխլմանը: Այդ իսկ պատճառով Հայաս-  
տանյան նոր քաղաքական էլիտայի անկախական տրամադրություն-  
ները, ի հեճուկս աշխարհաքաղաքական վատատեսական սցենարների,  
Անկարայում լուելյայն ըմբռնում էին դտնում: 1990թ. Հայտնի  
Թուրք հրապարակախոս Իլհան Սելչուքը «Զուևհուրիյեթում» գրում  
է. «Եզրայրական Ադրբեջանի անկախացումը սքանչելի մի նպատակ  
է: Սակայն այդպիսի նպատակադրումն ինքնին ենթադրում է անկա-  
խության ճանապարհին քաջալերել նաև Հայաստանին: Վերջինիս  
անկախացման պարագայում Թուրքիան անխուսափելիորեն հայտնվե-  
լու է Հունաստան-Հայաստան» արքանի մեջ: Մինչդեռ այդ երկու  
երկրները պահանջատիրական հավակնություններ ունեն Անատոլիա-  
յի նկատմամբ».<sup>152</sup> Մեկ այլ թուրքական թերթ՝ «Միլլիյեթը» 1990թ.  
դեկտեմբերի 5-ին վկայում է, որ չնայած վերը նշվածին, Անկարան,  
իրր, ջերմ մոտեցում է ցուցաբերում Հայաստանի նկատմամբ.<sup>153</sup> Այ-  
նունամենայնիվ, Հայաստանի նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը ամեն  
պատեհ առիթով հայտարարում էր, որ Հայաստանը մտադիր է Թուր-  
քիայի հետ դարդացնել քաղաքակիրթ երկրներին վայել հարաբերութ-  
յուններ: Իրականում Թուրքերին չէր կարող չանհանգստացնել այն  
փաստը, որ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը հե-  
տամուտ լինելը տեղ էր դտել Հայաստանի անկախության հռչակագ-  
րում, ի դեպ անհրաժեշտ ձայների նվազագույն 131 քվեի ստանալով:  
Անհրաժեշտ է նշել, որ չնայած Հայաստանի Հանրապետության ան-  
կախության վերականգնումը անհաճո անակնկալ էր Թուրքիայի հա-

<sup>151</sup> Sbu. SAM Paper No. 1/96, Seminar on Russia nad the NIS, 29-31 March 1996, Antalya, Turkey, <http://www.mfa.gov.tr/grupa/sum/1.96/1-3.htm#ARMENIA>

<sup>152</sup> Չարրյան Հ., Ղարաբաղյան հիմնահարցը ..., էջ 10-11:

<sup>153</sup> «Milliyet», 05/12/1990:

մար. քանզի Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացը կուենար նոր պահանջատեր, որը միջազգային իրավունքի լիիրավ սուբյեկտ էր: Պաշտոնական Երևանը, սակայն, արտաքին քաղաքական օրակարգում Ցեղասպանութեան խնդիրը չէր արժարժում:

Ուշագրավ է, որ Անկարան Հայաստանի նկատմամբ իր դիրքորոշումը հստակեցրեց միայն 1991թ. ապրիլին, երբ ՌԴ-ում Թուրքիայի դեսպան Վ. Վուրալն այցելեց Հայաստան: Լեոն Տեր-Պետրոսյանը, ընդունելով Թուրք դիվանագետին, մասնավորապես ասաց. «ԽՍՀՄ-ը փոփոխությունների է ենթարկվում: Ուզում ենք բարեկամանալ: Պատրաստ ենք ամեն տեսակի փոխազդեցության համագործակցության»:<sup>154</sup> Համագործակցության առաջարկին ի պատասխան Թուրք դիվանագետը ուներ հայ-թուրքական հարաբերությունների զարգացման իր տեսակետը: Եթե Հայաստանի համար առաջնային էին տնտեսական կապերի աշխուժացման խնդիրները, Թուրքական կողմը առանձնակի կարևորություն էր տալիս արցախյան հիմնահարցի կարգավորմանն ու հայ (խորհրդային)-թուրքական գոյություն ունեցող սահմանի ճանաչմանը:<sup>155</sup> Ըստ էության, Վուրալի հետ հանդիպման ժամանակ էլ հստակեցվեցին հարաբերությունները զարգացնելու երկու պետությունների մոտեցումների տարբերությունները:

Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ծրագիրը տերպետրոսյանական վարչակարգը խարսխում էր ավելի չափավոր հիմքի վրա՝ Հայոց ցեղասպանության հարցը նորանկախ Հանրապետությունը երկկողմանի հարաբերությունների համատեքստում չէր արժարժելու՝ այն վերապահելով Սփյուռքին:<sup>156</sup> Փաստորեն Թուրքական կողմն առաջինն է շոշափել ցեղասպանության խնդիրը՝ երկկողմ հարաբերությունների համատեքստում:<sup>157</sup> Անկարան փորձել է Հայաստանին պարտադրել, որ պաշտոնական Երևանը չորդեգրի ցեղասպանության ճանաչման քաղաքականություն. ըստ երևույթին Անկարայում կարծում էին, որ Թուրքական սցենարի իրականացման դեպքում Հայաստանը պիտի համոզեր Սփյուռքին այս հարցում հետևել իրեն:<sup>158</sup>

Ինչպես արդեն նշել ենք, Հայաստանի Հանրապետության անկախացումը համընկավ նաև Թուրքիայի արտաքին քաղաքական ակտիվության նոր շրջափուլի հետ: 1991թ. գեկտեմբերի 16-ի որոշմամբ,

<sup>154</sup> Ազգ. 30/05/2002:

<sup>155</sup> Սաֆրաստյան Ռ., «Հնարավոր չէ 21-դարում պատկերներ ստեղծել հարեանների միջև...», Երևան, 2003, էջ 39:

<sup>156</sup> Հայ-թուրքական հարաբերություններում Հայոց ցեղասպանությանը շանդուղտանայու համատեքստում բերես պիտի դիտարկել չՀ ԱԳ նախկին նախարար Բ. Հովհաննիսյանի պաշտոնակատարումը՝ փերջինիս Ստամբուլում բարձրաձայնած խիզախ ելույթի համար:

<sup>157</sup> ՀՅԹԻ Ֆոնդ. Բաժին 32, քալ 26, փ 5, էջ 4:

<sup>158</sup> Նույն տեղում, էջ 4:



թուրքական կառավարությունը, ի թիվս խորհրդային մյուս հանրապետությունների, ճանաչեց նաև Հայաստանի անկախությունը, սակայն պաշտոնական Երևանի հետ դիվանագիտական հարաբերություններ չհաստատեց.<sup>159</sup> Գործելատեղը արգարացնելու համար թուրքական կողմը վկայակոչեց Հայաստանի Անկախության հռչակագրի այն դրույթը, համաձայն որի Հայաստանի Հանրապետությունը հետամուտ է լինելու Օսմանյան կայսրությունում և Արևմտյան Հայաստանում 1915թ. իրականացված ցեղասպանության միջազգային ճանաչմանը.<sup>160</sup> Սա նշանակում է, որ ի սկզբանե, Անկարայի կողմից Երևանի հետ պաշտոնական հարաբերություններ սկսելու հիմնական նախապայմանը եղել է Մեծ եղեռնի հիմնախնդիրը: Հայ-թուրքական հարաբերություններում կարևորվում է անվտանգության հարցը: Եթե մինչև ԽՍՀՄ փլուզումը Հայաստանը պաշտպանված էր խորհրդային անվտանգության համակարգով, ապա անկախությունից հետո երկիրը հայտնվում էր սեփական ուժերով արտաքին վտանգին դիմադրալից մարտահրավերին դեմ հանդիման: Այս դեպքում Հայոց ցեղասպանությունը ՀՀ արտաքին քաղաքականությունից դուրս թողնելով առաջին իշխանություններն, ըստ մասնուլի, կարծում էին, որ «անկախ Հայաստանն ավելի շատ վտանդներ ուներ հարցը պետական քաղաքականության հարթության բարձրացնելու առումով, քան Խորհրդային Հայաստանը: Չկար Խորհրդային Միությունը՝ որպես անվտանգության համակարգ, ձևավորված չէին նոր անվտանգության համակարգեր, կազմավորված չէր Հայկական բանակը, առկա էր դարարադյան խնդիրը, և բնդհանրապես, տեղի էին ունենում աշխարհաքաղաքական, տարածաշրջանային վերադասավորումներ, դերտեթությունների շահերի բախումներ».<sup>161</sup>

Կարծում ենք՝ շրջանառվող այս թեզը, որը կիսում են խնդրո առարկայի բազում ուսումնասիրողներ, բավարար կերպով հիմնավորված չէ: Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը չարժարժելով, Հայաստանը չէր ամրապնդում սեփական անվտանգությունը: Առանց այդ էլ արցախյան հակամարտության ընթացքում թուրքիան Հայաստանի նկատմամբ լիուլի դրսևորեց բացահայտ թշնամանքի բոլոր հնարավոր ձևերը, չձեռնարկելով միայն զինված հարձակում Հայաստանի վրա.<sup>162</sup> Այսպես, օրինակ՝ 1993թ. սպրիլին Քարվաճառի շրջա-

<sup>159</sup>Çeviköz U., Uluslararası İlişkileri yeni dengel, Ermenistun Özel Sayısı, TESEV, Ağustos, 2001, s. 11:

<sup>160</sup>KASIM K., ULUSLAR ARASI İLİŞKILER BOYUTUYLA ERMENİ SORUNU: Bilim ve Akılın Aydınlığında Eğitim Dergisi: NİSAN 2003, YIL, 4, SAYI : 38 *խնդրո նսև Շևիկօզ Ս., Այլ. ուշխ. էջ 11:*

<sup>161</sup>Առավրո, 21/10/2000:

<sup>162</sup>Nagorno Karabakh Conflict: Some Facts, Geneve, 1995, p 6, տնս նսև Չարրյան Հ... «Թորրթխսն Հայաստանի հետ երկխոսություն չի ցանկանում. այլ ցեղասպանության

նուժ ԼՂՀ պաշտպանութեան բանակի իրականացրած կայծակնային ազատագրութեան գործողութիւնից հետո Թուրքիայի նախագահ Թուրքութ Օզալն ասաց. «Հայերը չեն սովորել Անատոլիայի փորձառութեան իրենց դասը և այն պատիժը, որ ստացել են»: Այս հայտարարութեանը գումարվեցին «Հայաստանին ատամ ցույց տալու» և «Կիպրոսյան տարրերակը» չբացառելու սպառնալիքները.<sup>163</sup> Հիշեցնենք, որ միևնույն ժամանակ Հայ-թուրքական սահմանում սկսվեցին զորաշարժեր. ըստ որոշ գնահատականների, Հայ-թուրքական սահմանի շուրջ կուտակված զորքի թիվն անգամ այսօր հասնում է 200 հազար զինվորի.<sup>164</sup> Ղարաբաղյան հակամարտութեան նկատմամբ Անկարայի վերաբերմունքը ոչ թե «երրորդ կողմի» գործողութիւններ էին, այլ հակամարտութիւնում ներգրավված պետութեան: Հայաստանի տարածքային ամբողջականութիւնն ու ինքնիշխանութիւնը խախտելու մեկ այլ փորձ թվագրվում է 1993 թվականի սեպտեմբերով, երբ Մոսկվայում բռնկված պետական հեղաշրջման պարագլուխ, խորհրդարանի խոսնակ Խաբուլատովը դադարի բանակցութիւններին մեջ մտնելով Թուրքիայի հետ, որպէս քաղաքական աջակցութեան հատուցում, խոստացել էր չեղոքութիւն, եթե թուրքական կողմը փորձեր ներխուժել Հայաստան և Վրաստան.<sup>165</sup>

Ուրեմն՝ անգամ առանց Հայոց ցեղասպանութեան խնդրի արժարժման թուրքական կառավարող շրջանները, խախտելով միջազգային իրավունքի բոլոր հիմնարար սկզբունքները, պատրաստ էին ռազմական ճանապարհով «մաքրել» Հայաստանի հաշիվները՝ ելնելով աշխարհաքաղաքական պարզ հաշվարկից:

Այս համատեքստում, անդրադառնալով Հայ-թուրքական հարաբերութիւնների հիմնախնդրին, թուրքագետ Հ. Չաքրյանը նշում է, որ մեզանում Թուրքիայի հետ հարաբերութիւնների կարևորութիւնը գերազնահատվեց, Անկարան էլ իր հերթին թերազնահատեց Հայ-ռուսական հնարավոր դաշինքի հախանականութիւնը, ահա թե ինչու Թուրքիան ճանաչեց Հայաստանի անկախութիւնը, սակայն վերջինիս հետ դիվանադիտական հարաբերութիւններ չհաստատեց.<sup>166</sup> Անկարայում չէին հավատում, որ պատերազմի զրկանքներ կրող Հայկական

բանաձևերը յեզոքացնելու համար դա յստարկում է». (Օրեր. թիվ 1-4, 2001, էջ 17-19, Այվազյան Ա., Ղարաբաղյան Հակամարտութեան կարգավորումը և Հայաստանի Ինքնավարական Անկախագործութիւնը. Երևան 1998, էջ 21-37:

<sup>163</sup> Sb'u Reuter 4/5/1993, UPI 4/5/93, 4/7/93, Agence France Press, 4/3/93, 4/6/93, 4/9/93, 4/15/93, Anadolu Ajansi 4/3/93, 4/5/93 և այլն:

<sup>164</sup> Sb'u. The Military Balance, 1995-1996, London, ինչպէս նաև Սեյրոնյան Մ., Թուրքիայի զինված ուժերի օպերատիվ և մարտական պատրաստութիւնը, Հայկական բանակ 2, 1996թ.:

<sup>165</sup> Chrysantopoulos L. T., Caucasus Chronicles, Nation Building and Diplomacy in Armenia, 1993-1994, Prinectone-London, 2002, pp. 25-29. տե՛ս նաև Հայկական Ժամանակ, 18/09/2002:

<sup>166</sup> ՀՅԹԻ Ծով. Բաժին 32, քաղ 26, փ 3, էջ 1:

անկախ պետականությունը կարող է կենսունակ լինել: Եվ երբ 1992թ. փետրվարին Դավոսի տնտեսական Փորուժին մասնակցող Հայաստանի նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը փորձեց Հանդիպել Թուրքիայի վարչապետ Դեմիրելին, զուսպ մերժում ստացավ<sup>167</sup>:

1992թ. Հուլիսին, վերջապես կայացավ Տեր-Պետրոսյան-Դեմիրել Հանդիպումը, որին նախորդել էր Թուրքիայի վարչապետի Հանդիպումը իր Հայաստանցի պաշտոնակից Լ. Բադրատյանի հետ: Ինչևէ, 1992թ. օգոստոսին, պաշտոնական այցով Երևան եկավ թուրքական դիվանագիտական պատվիրակությունը փոխարտգործնախարար Բ. Ունանի գլխավորությամբ: Ինչպես նշում է ՀՀ առաջին նախագահի արտաքին Հարաբերությունների գծով խորհրդական Ժ. Լիպարիտյանը, Թուրքիայի արտգործնախարարության պատվիրակության հետ բանակցությունների ժամանակ Հայոց ցեղասպանության խնդիրը չի քննարկվել<sup>168</sup> Հայոց ցեղասպանության խնդիրը սակայն, Համաձայն ՀՀ առաջին նախագահի խորհրդական Ժ. Լիպարիտյանի, Հայ-թուրքական երկխոսությունը Համատեքստում «բարձրացվել է տարբեր առիթներով ոչ պաշտոնական ձևով, այնպես ինչպես ընդհանուր շահերից բխող այլ Հարցեր»<sup>169</sup>:

Հիշեցնենք, որ 1992թ. ամռանը, Ադրբեջանում տեղի ունեցած նախագահական ընտրությունների ժամանակ Հաղթանակ էր տարել «Ազգային ճակատ» կուսակցության առաջնորդ Ա. Էլչիբեյը, որը և սանձազերծել էր լայնածավալ Հարձակում ԼՂՀ պաշտպանական բանակի դիրքերի վրա և կարողացել էր առաջադիմել: 1992թ. աշնանից մինչև 1993թ. մարտ ամիսը Հայ-թուրքական Հարաբերություններում այլ շոշափելի տեղաշարժեր չգրանցվեցին:

Արցախյան ազատամարտի ակտիվ ուղղման գործողությունների փուլում Թուրքիայի Հասարակական-քաղաքական միտքը հիմնականում բեռաված էր Հայ-ադրբեջանական խնդիրների և Կովկաս-Կենտրոնական Ասիական տարածաշրջանի զարգացումների վերլուծության վրա: Վերլուծելով Հայաստանի դերակատարությունը Կովկասում թուրք դիվանագետ Ի. Ջեմը նշում է, թե Հայաստանը խաղում է «տառապյալ քրիստոնյա պետության» դեր՝ Արևմուտքից ֆինանսական օգնություն ստանալու ակնկալիքով<sup>170</sup> Հեղինակը կարծում էր, որ Ադրբեջանի ուղղման անհաջողությունների պարտադարձը Թուրքիան պիտի ամեն ինչ աներ՝ Հարվածելու պաշտոնական Երևանի դրական իմիջին: Թուրքիայի ապագա արտգործնախարարը բացահայտում է նաև թուրքական Հասարակության այն մտա-

<sup>167</sup> Pope N. & Pope H., *Turkey Unveiled*, New York 1997, p 292.

<sup>168</sup> Նույն տեղում. էջ 3:

<sup>169</sup> ՀՅԹԻ Ծովն. Բաժին 32. Բայ 26. փ 5. էջ 3:

<sup>170</sup> Cem I., *Աշխ.*, էջ 102.

վախությունը, որ Արցախում հաղթանակ տանելուց հետո, Հայաստանը ավելի մեծ ազատություն կունենա իր արևմտյան հարևանի հետ հարաբերություններում՝ հաճախ հանդես գալով որպես «խլամական վտանգի» ընթացքը կասեցնող պատվար։<sup>171</sup>

Թուրքական հասարակությունում առկա մտահոգությունները որևէ կերպ չխոչընդոտեցին, որ 1993թ. մարտի 12-ին Ֆրանսիայի մայրաքաղաքի Հյուրանոցներից մեկում, Հուլիոս դադտնի պայմաններում, հանդիպեին թուրքական «Գորշ գայլերի» առաջնորդ Թյուրքեշը ու Հայաստանի Հանրապետության նախկին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը։ «Միլլիյեթը», վկայակոչելով ժամանակին Տեր-Պետրոսյանի գործակից, Թուրքիայում ծնված Հայազգի Սամսոն էոզարարատին, պարզաբանումներ է տալիս մամուլից և հասարակայնությունից դադտնի պահվող հանդիպումների վերաբերյալ։<sup>172</sup> Թուրք ազգայնամոլների առաջնորդի և ՀՀ նախագահի համադործակցության նպատակը, ըստ թերթի տեղեկությունների, եղել է երկկողմ բնականոն հարաբերություններ հաստատելը։ 1993-ին երկու երկրների հարաբերությունները գանդաղ էին զարգանում և երկուստեք ազգայնական շերտերի քննադատությանն էին արժանանում։ Փաստ է, սակայն, որ իրավիճակի ողջ պատասխանատվությունը կրում էր Անկարան, որը հապաղում էր Երևանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատել։ Թերթը նշել է, որ 1993-ի սկզբին դադարեց Հայաստանին տրամադրվող ռուսական օդնությունը, և ձմռանը սպառվեցին երկրի ցորենի պաշարները։ Այդ անգամ, ամերիկյան մարդասիրական օդնությունը Հայաստան հասցնելու երթուղի էր ընտրվել Թուրքիան, որի տարածքով, ըստ էոզարարատի, տեղափոխվել է ցորենի նշանակալի պաշար։ Ուշադրալ է, որ Թյուրքեշի հետ հանդիպելու նախաձեռնությունը պատկանում է Հայկական կողմին։ Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման և Արցախի հարցի լուծման համար Թյուրքեշը առաջ է քաշել վեց հարց.

1. Հայաստանի և Ադրբեջանի միջև հաստատվում է զինադադար,
2. Հայ զինվորները դուրս են գալիս զբաղեցրած տարածքներից,
3. Երկու կողմերը ճանաչում են միմյանց սահմանները,
4. Բացառվում է միմյանց ներքին գործերին խառնվելու պրակտիկան,
5. Բաց է Հայտարարվում Լաչինի միջանցքը, այնտեղ տեղակայվում են դիտորդներ,

<sup>171</sup>Նույն տեղում, էջ 103-104.

<sup>172</sup>Նրկիր, 29/04/2005:

6. Արցախի Հարցը լուծվում է զինադադարից հետո, Մինսկի խմբի շրջանակներում:

Քննարկումների օրակարգում է եղել Հայաստանի արտաքին առևտրի զարգացման համար թուրքական ենթակառուցվածքների օդատադործման հնարավորությունը, ինչպես նաև տարածաշրջանային տրանսպորտային հաղորդակցության նոր ուղիների, «Անդրկովկասյան մայրուղու» շինարարությունը: Լ. Տեր-Պետրոսյանը հայտնել է, որ ինքն ընդունելի է համարում առանց նախապայմանների հրադարի հաստատումը, ինչը դժվար թե փոխըմբռնման արժանանա Ադրբեջանում: Բանակցություններին կողմերից մասնակցել են թուրքիայի դեսպան Բլեդան, Ալփասլան Թյուրքեշի որդին՝ Թուղրուլ Թյուրքեշը, դեսպանատան քարտուղար Մենթեր Շահինլիրը, Հայաստանը ներկայացրել են արտաքին գործերի նախարար Վահան Փափազյանը և ժիրայր Լիպարիտյանը: Ի դեպ, մեծ է եղել թուրքերի զարմանքը, երբ Տեր-Պետրոսյանը թուրքերենով բարեմաղթություններ է ուղղել Թյուրքեշի որդուն:

Նույն էոզարարատի վկայությունք, հանդիպումից որոշ ժամանակ անց քննարկվել է Հայ-թուրքական սահմանի վրա 1915թ. զոհվածների հուշարձան կառուցելու հնարավորությունը: Հուշարձանի երկու կողմերում հայերեն և թուրքերեն գրվելու էր. «Մեր պատճառած ցավի համար սզում ենք»: Թերթը չի բացատրում, թե ի՞նչ ցավ են պատճառել հայերը թուրքերին, այդ ի՞նչ հանցանք են գործել, որ համարժեք լիներ 1915-1923թթ. Հայոց ցեղասպանությանը: Հայերն ու թուրքերը դիտարկվում են միևնույն հարթության վրա՝ երկու կողմերը կիսում են մեղքի ինչ-որ բաժին: Տեր-Պետրոսյանի ու Թյուրքեշի հանդիպումը փաստորեն անարդյունք է ավարտվել:

1993թ. ապրիլի 17-ին մահացավ Թուրքիայի նախագահ Թ. Օզալը, նրա հուղարկավորությունը մասնակցեց ՀՀ պատվիրակությունը՝ նախագահ Տեր-Պետրոսյանի գլխավորությամբ: Ինչպես հազորդում է Վ. Փափազյանը, այցի ընթացքում տեղի է ունեցել Դեմիրել-Տեր-Պետրոսյան հանդիպումը, որի ընթացքում քննարկվել է դարաբաղյան հիմնահարցը:<sup>173</sup>

Իրականում թուրքական կողմը երբեք չի հրաժարվել Հայոց ցեղասպանության խնդիրը որպես երկկողմ հարաբերությունների հաստատման նախապայման արժադծելուց: Անգամ 1993-ի հոկտեմբերին Մոսկվայում թուրքական դեսպանատանը Հայաստանի նախագահի հետ կայացած հանդիպումից հետո դեսպան Քամիլը հայտարարել էր, որ Հայ-թուրքական հարաբերությունների բարելավման համար Հա-

<sup>173</sup>Տեղեկությունը, Սրևանի սյետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետում կարդացած դասախոսության ժամանակ, հաղորդել է ՀՀ ԱԳ նախկին նախարար Վ. Փափազյանը:

յաստանը պիտի հրաժարվի 1915թ. իրադարձությունների խնդրին անդրադառնալուց.<sup>174</sup> Նախկին արտգործնախարար Ա. Արզումանյանը «Հայկական ժամանակ» օրաթերթին տված հարցազրույցում թվարկում է երկու երկրների միջև պաշտոնական հարաբերություններ հաստատելու թուրքական նախապայմանները. «Չհիշատակել Հայոց ցեղասպանությունը, պաշտոնապես հրաժարվել պահանջատիրությունից, կասեցնել սփյուռքահայության հակաթուրքական դործունեությունը».<sup>175</sup>

Ըստ էության, Հայ-թուրքական գաղտնի շփումները ունեցել են շարունակական բնույթ: 1994թ. ապրիլին, Ֆրանկֆուրտի թուրքական հյուպատոսությունում հյուրընկալվել է Մեծ Բրիտանիայում ՀՀ դեսպան Արմեն Սարգսյանը: Այստեղ, թուրքիայի դեսպան Օնուր էոյմենի (այժմ՝ թուրքական խորհրդարանի պատգամավոր) ընկերակցությամբ, վերջինս սպասել է թյուրքեշի հետ հանդիպմանը, որի արդյունքների մասին ցայսօր քիչ բան է հայտնի.<sup>176</sup>

1995թ. փետրվարի 23-ին թուրքիա է այցելում ժիրայր Լիպարիտյանը, և Անկարայի «Հիլթոն» հյուրանոցում հանդիպում է թուրքուլ թյուրքեշին: Ի դեպ, թյուրքեշ կրտսերին ուղեկցել է նաև գործարար Զեմի Քամհին: «Գորշ գայլերի» հետ հանդիպումները շարունակվել են ընդհուպ մինչև թյուրքեշի մահը՝ 1997թ.:

Այժմ անդրադառնանք Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին, որը ՀՀ իշխանությունների կողմից համարվել էր Սփյուռքի դործունեության ոլորտ:

1990թ. փետրվարին, ԱՄՆ-ի Կոնգրեսը կրկին անդրադարձավ սենատոր Ռ. Դոուլի կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչելու վերաբերյալ ներկայացրած բանաձևի քննարկմանը, դրա ընդունումը ձախողվեց: Այս անգամ թուրքական իշխանություններին աջակցել էր ԱՄՆ-ի ծխախոտային յորբին.<sup>177</sup>

Դեռևս 1993թ. մայիսի 5-ին, արդեն տինահայ գաղթօջախի ջանքերով, Սենատը բանաձև ընդունեց, ըստ որի հռչակվում էր «Համերաշխություն հայկական համայնքի հետ, որը հանդիսանում է 20-րդ դարի առաջին ցեղասպանության զոհը, կրկին նշելով մարդկության դեմ կատարված հանցագործության տարելիցը, որը 1 միլիոն 500 հազար հայերի կործանումն էր 1915-1917թթ. թուրքական կառավար-

<sup>174</sup> Куртов А., Халмухамедов А., Армения-Турция: Противостояние или Сотрудничество? Армения: Проблемы независимого развития тинаюю, Москва 1998, стр 455.

<sup>175</sup> Հայկական ժամանակ, 18/07/2002:

<sup>176</sup> Երկիր, 29/04/2005:

<sup>177</sup> Փաստաթուղթը բարգմանվել է մեր կողմից և առաջին անգամ Հայաստանում հրատարակվել «Երկիր» շաբաթաթերթում, 22/10/2004:

բության ձեռքերով»<sup>178</sup> Իսկ արդեն 1995թ. ապրիլին Ռուսաստանի Դաշնության Պետական Դուման ընդունեց Հայտարարություն «1915-1922թթ. Հայ ժողովրդի ցեղասպանության դատապարտման մասին»:

Հայաստանի անկախության առաջին տարիներին Հայոց ցեղասպանության խնդիրը երկկողմ հարաբերություններում լուսանցքային տեղ էր դրավել: Նշենք, սակայն, որ Հայաստանի իշխանությունները միևնույն ժամանակ կազմակերպել էին Հայոց ցեղասպանության 80-ամյակին նվիրված միջազգային խոշոր գիտաժողով:

1995թ. ապրիլի 21-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի արտահերթ նիստ՝ նվիրված Հայոց ցեղասպանության 80-ամյակին, որն ընդունեց Հայտարարություն<sup>179</sup>

1915-ի Մեծ եղեռնի 80-րդ տարելիցին նվիրված միջազգային գիտաժողովի ամբիոնից նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը Հայտարարեց, որ Հայոց ցեղասպանության մտահղացման, նախապատրաստման և իրագործման ողջ պատասխանատվությունն ընկնում է Սուլթան Համիդի և երիտթուրքերի վրա: Թուրքիայից չպահանջվեց պաշտոնապես ճանաչելու ցեղասպանությունը: Իր ելույթում նախագահը հույս էր հայտնում, որ երկկողմ հարաբերություններում պիտի Հաստատվի առողջ բանականության և բարձր բարոյականության միջնուղի<sup>180</sup>

1995թ. ամռանը Հայաստան այցելեց Ստամբուլի էսենյուերթ արվարձանի Համայնքի ղեկավար Գյուլբերյուզ Չափանը, որը Հանդիպեց ՀՀ նախագահ Տեր-Պետրոսյանին<sup>181</sup> Ինչպես նշում էր այցը լուսաբանող թուրքական «Հուրիյեթը», Չափանը առաջին թուրք պաշտոնյան էր որը այցելել է Հայոց ցեղասպանության հուշարձան: Ի դեպ, թերթը նշում էր նաև, որ թուրք Համայնքապետը իրականացնում էր հաշտարար առաքելություն, և վերջինիս այցելության նպատակը առկա վրեժխնդրության վերացումն է: Ըստ «Հուրիյեթի», Հանդիպման ընթացքում Տեր-Պետրոսյանը կոչ է արել պատմությունը թողնել պատմաբաններին:

Արդեն 1996 ապրիլի 25-ին Հունաստանի խորհրդարանը ընդունեց օրենք՝ «Ապրիլի 24-ը Թուրքիայի կողմից Հայերի ցեղասպանության հիշատակի օր հաստատելու մասին»: Հուլիսի 11-ին Հունաստանի նախագահ Կ. Ստեֆանուպուլոսը ստորագրեց դեկրետ յու-

<sup>178</sup> Հայոց ցեղասպանություն. Աշխարհի պետությունները, ազգային իտրիդարմանները և միջազգային կազմակերպությունները դատապարտում են և ճանաչում (Նյուբերի ժողովածու), Կազմող, պատասխանատու խմբագիր և ատարարների հեղինակ՝ Բարսեղյան Լ., Երևան, 2004, էջ 557:

<sup>179</sup> Հայոց ցեղասպանություն. Աշխարհի պետությունները, ազգային... էջ 579:

<sup>180</sup> Республика Армения, 22/04/1995.

<sup>181</sup> Hürriyet, 04/07/1995.

րաքանչյուր տարի ապրիլի 24-ը Հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օր սահմանելու մասին<sup>182</sup>

90-ականների կեսերին արդեն պարզ էր, որ Հայ-թուրքական քաղաքական հարաբերությունները մտել են անհաղթահարելի փակուղի: Հայաստանի Հանրապետությունը չհաջողեց որևէ նոր և լուրջ մոտեցում մշակել՝ միտված թուրքական կողմի հետ հարաբերությունների բարելավմանը: Այդ իրողությունն է արձանագրում ՀՀ արտգործնախարար Վահան Փափագյանը: Իր ծրագրային հոգվածում, նվիրված անկախ Հայաստանի արտաքին քաղաքականության հնդամյակին, նախարարը փաստում է, որ իրական տեղաշարժեր այդ ոլորտում չեն արձանագրվել<sup>183</sup>:

Միջազգային այսպիսի բուռն հակազդեցության համատեքստում, արդյո՞ք արդարացիված էր ՀՀ որդեգրած՝ ցեղասպանության ճանաչման ձեռնարկ քաղաքականությունը և արդյո՞ք հնարավոր էր, որ այդպիսի գործելաոճը խթաներ երկկողմ հարաբերությունները: Ո՞չ, Տեր-Պետրոսյանի վարչակարգը ցեղասպանության թեման չարժարժելով արտաքին քաղաքական օրակարգում, թուրքիայից որևէ զիջում չկորզեց: Ընդհակառակը, թուրքերը առիթը բաց չէին թողնում Հայտարարելու, որ Հայաստանի հետ հարաբերությունների բարելավման համար առաջ քաշած նախապայմանները չեն փոխվում<sup>184</sup>: Փաստորեն Անկարան Երևանի հետ չէր ցանկանում զարգացնել նորմալ հարաբերություններ, չնայած վերջինիս «չափավոր» քաղաքական դժին: Դա Հայաստանի նկատմամբ թուրքական թշնամական քաղաքականության հերթական դրսևորումն էր: Թուրքիայի հետ հարաբերություններում Հայաստանի կրավորական դիրքորոշումը ոչինչ չտվեց<sup>185</sup>:

Մեկնարանելով առաջին նախազաճի օրոք վարած քաղաքականությունը, ՀՀ արտաքին գործերի նախկին նախարար Ալեքսանդր Արզումանյանն ասել է. «Մեր օրոք ցեղասպանության հարցը չի եղել մեր արտաքին քաղաքականության հիմքում: Մենք այդ հարցը չենք

<sup>182</sup> Ավելի հանգամանալի տե՛ս «Հունաստանի խորհրդարանը դատասյարտում է հայոց ցեղասպանությունը», ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության բանգարան-ինստիտուտ, Բարզմ. Կրկյալարյան Ս., Ե. 1997:

<sup>183</sup> Հայաստանի Հանրապետություն, 15/09/1996:

\* Հետաքրքրական է, որ 1997-ին Երևան այցելած Վրդգստանի կառավարական սրտվիրակությունը հանրապետության նախագահ Ասկար Ալյանի գլխավորությամբ, ծաղկեսյուսկ դրեց Ընթերցանակարնրդի Մեծ Եղեռնի հուշարձանին: Հաջորդ օրը Բարվում Աղբրեցանի Միլի մեքլիսում Ակսեր հայտարարեց, որ 1915թ. Թուրքիայում հայերի դեմ ցեղասպանություն է գործադրվել՝ որին անմիջապես հաջորդեց Թուրքիայի կառավարության գրավոր բողոքը:

<sup>184</sup> Տե՛ս օրինակ Turkish Daily News, 31/10/1997

<sup>185</sup> Տե՛ս նաև Մարտյան Ջ., Հայկական հարցի հոլովոյրը 1988-1993-ի միջև, Հայկազեան Հայսգիտական հանդես, Պեյրոթ, 1995, N ԺԵ, էջ 235-301:



արծարծել տարբեր առյաններում, կամ արծարծել ենք, եթե կոնկրետ նպատակ ենք ունեցել այդ պահին: ... Հայ դատի հարցը եղել է Սփյուռքի կազմակերպությունների հիմնական մոդուս- վիվենդին. նրանք առանց այդ հարցի չէին էլ կարող հայապահպան գործունեություն ծավալել: Նորմալ է, որ դաշնակցությունը դա հետապնդել է, բայց դա պետականորեն չափսի հրահրվի, որովհետև դա կսրի հարաբերությունները»<sup>186</sup>:

---

<sup>186</sup> Առավրտ, 11/10/2000.

ՀԱՅՈՑ ԾԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱԶՄԱՆ ԽՆԴԻՐԸ  
ՀԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐԹԻԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ՝  
1998-2004թթ.

ա) 1998թ. նախագահական ընտրությունները և Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը ՀՀ արտաքին քաղաքականությունում

1998-ին անցկացված արտահերթ նախագահական ընտրություններում Ռոբերտ Քոչարյանի Հաղթանակից Հետո Հայ-թուրքական Հարաբերություններում Երևանի դիրքորոշման մեջ առաջ քաշվեց Հայոց ցեղասպանության խնդիրը, որը որոշ թուրք քաղաքագետներ բնութագրեցին որպես Թուրքիայի նկատմամբ Հայաստանի քաղաքականության կոշտացում<sup>187</sup> Թուրք ուսումնասիրող Ու. Չևիկոզի կարծիքով, Տեր-Պետրոսյանի չափավոր գծին փոխարինելու եկավ Քոչարյանի կոշտ դիրքորոշումը, քանզի նոր նախագահը զրկից երկրի նկատմամբ այլ մոտեցումների կողմնակից էր:

Նախագահ Տեր-Պետրոսյանի Հրաժարականից Հետո փորձ արվեց վերանայել Հայ-թուրքական Հարաբերությունները, սակայն Թուրքիան նույն Հաջողությամբ շարունակում է իր քաղաքական դիրքը, որքան էլ Հայաստանի դիրքորոշումը, գոնե առերևույթ, լուրջ փոփոխություններ կրեց: Այդ փոփոխության կարևորագույն կուլանը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման անհրաժեշտությունն է, իրողություն, որը միշտ շեշտվել է Հայաստանի երկրորդ նախագահի ելույթներում: Քաղաքականության նման փոփոխությունից Հետո անգամ, Հայաստանը Հայտարարում է, որ պատրաստ է Թուրքիայի Հետ բնականոն Հարաբերություններ Հաստատել՝ առանց նախապայմանների:

1998-ին Հրապարակավ, առաջին անգամ ՄԱԿ-ի ամբիոնից Ռ. Քոչարյանը ասաց. «Օսմանյան կայսրությունում Հայերի 1915 թվականի ցեղասպանությունը իր ժամանակին պատշաճ կերպով չգատապարտվեց Համաշխարհային Հանրության կողմից, ինչը որոշ վարչակարգերի խրախուսեց նոր Հանցագործություններ կատարել... Այս չարիքի դեմ պայքարի անհրաժեշտության Հարաճուն ըմբռնման վկայությունն են նաև ներկա դարակզրին Հայերի ցեղասպանության

<sup>187</sup> Այս մասին ավելի հանգամանալի տե՛ս, Շևիկոզ Ա., *Այվ. աշխ.* 13:

դատապարտումն ու ընդունումը մի շարք երկրների խորհրդարանների կողմից».<sup>188</sup>

Արդեն հաջորդ տարի նախագահ Քոչարյանը արձանագրում էր ցեղասպանության ճանաչմանն ուղղված առաջին քայլերի հաջողությունները՝ նշելով, որ դրանով 20-րդ դարի առաջին ոճրի դատապարտմանը միտված ջանքերը չեն դադարելու: Այս քաղաքականության հաստատակամության մասին էր վկայում նաև ԵԱՀԿ ստամբուլյան դազաթնաժողովում նախագահի ճառի հետևյալ հատվածը, որտեղ անդրադառնալով հայ-թուրքական հարաբերությունների զարգացման հնարավորությունը, նախագահը նշեց. «Հարաբերություններում նոր էջ բացելու մեր ցանկությունը չի կարող հիմնված լինել ընտրողական պատմական հիշողության կամ լիակատար ամենզիայի վրա: Մենք չենք կարող մոռանալ մեր ժողովրդի պատմության ողբերգական էջերը և ցեղասպանության նրա կրած ցավը: Բայց մենք նաև չենք ցանկանում մեր հարաբերությունների էվոլյուցիան և մեր ընդհանուր ապագան կախվածության մեջ դնել մեկնարանությունների հակասություններից: Մեզ անհրաժեշտ է գտնել խնդրի լուծման բանաձևը, իսկ դրա համար այն պետք է քննարկել».<sup>189</sup> Նախագահի այս դիրքորոշումը հետագայում էլ մնաց անփոփոխ.<sup>190</sup>

Նույն տարում Հայաստանը, Կիպրոսը, Բուրունդին, Ուրուգվայը և Ռուանդան ՄԱԿ-ում հանդես եկան համատեղ նախաձեռնությամբ՝ առաջարկելով նշել ցեղասպանության կանխարգելման և պատժի մասին կոնվենցիայի 50-ամյակը.<sup>191</sup>

1998-2000թթ. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման առումով, տեղի ունեցան երկու լուրջ իրադարձություններ: Առաջինը 1998թ. մայիսի 29-ին, Փրանսիայի Ազգային ժողովի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումն էր: Նշենք, որ մինչ ֆրանսիական խորհրդարանականների նիստը, պաշտոնական Անկարան տարբեր միջոցներով փորձում էր խոչընդոտել որոշման ընդունումը՝ սպառնալով կրճատել գեների, էներգետիկ և ավիացիոն տեխնոլոգիաների ձեռքբերումը.<sup>192</sup> Չնայած թուրքական ճնշմանը՝ Փրանսիայի Ազգային ժողովը 1998թ. մայիսի 29-ին ճանաչեց Հայոց ցեղասպանությունը, իսկ 2000թ. նոյեմբերի 8-ին Սենատը ձայների 164 կողմ, 40 դեմ և 4 ձեռնպահ հարաբերակցությամբ վերահաստատեց ստորին

<sup>188</sup> <http://news.president.am/armv/?sub=statements&ycar=1998&modc=1>.

<sup>189</sup> Նախագահի Համացանցի էջ [www.president.am](http://www.president.am).

<sup>190</sup> Ի մասնավորի տե՛ս <http://news.president.am/armv/?sub=statements&id=93&from=0&ycar=2002>.

<sup>191</sup> Հայաստանի Հանրապետություն, 15/08/1998:

<sup>192</sup> Բարսեղյան Լ., Փրանսիան Հայոց ցեղասպանությունը օրենսդրությամբ ճանաչած առաջին պետությունն է աշխարհում, Երևան 2002, էջ 28:

պալատի որոշումը: 2001թ. Հունվարի 9-ին նախագահ Շիրակը ստորագրեց այն ընդունող օրենքը.<sup>193</sup>

Հայաստանի իշխանությունները, սակայն, Թուրքիայի Հետ Հարաբերությունների վերջին կամուրջները այրելու ոչ մի ցանկություն չունեին: Անդրադառնալով երկկողմ հարաբերությունների զարգացումներին, Հայաստանի նախագահն ասում էր, որ Թուրքիան ունի իր մեղավորության մեծագույն բաժինը Երևանի Հետ երկխոսությունը մերժելով. «Թուրքիայի մնում է անզիջողական ադրբեջանամետ կեցվածքի և Հայաստանի շարունակվող շրջափակման պատանդը: Մենք Թուրքիային կոչ ենք արել և շարունակում ենք կոչ անել Հայաստանի Հետ Հարաբերություններ սկսել առանց նախապայմանների: 1915թ. Հայերի ցեղասպանության փաստը ճանաչելու Թուրքիայի շարունակվող մերժումը մնում է հոգեբանական և քաղաքական խոչընդոտ, որը պետք է հաղթահարվի: ...Քանի դեռ Թուրքիան շարունակում է մերժել այդ անցյալը, մեր հաշտեցումը մնում է անվստահության պատանդ».<sup>194</sup>

Հրնթացս Թուրքական Հասարակությունը նույնպես կարևորում էր հայկական պաշտոնական տեսակետի պարզաբանումը, այդ էր պատճառը, որ Ամերիկա-Թուրքական Հեղինակավոր CNN-Türk Հեռուստաալիքը Հենց Հայաստանի նախագահից ուղղակիորեն փորձեց ստանալ Հայ-Թուրքական Հարաբերությունների մեկնաբանությունը<sup>195</sup>: Թուրք լրագրողը մասնավորապես Հետաքրքրվում էր ցեղասպանության ճանաչման գործընթացի շարունակականությունը և վերջինս առաջ տանող ուժերով: Պատասխանելով այդ հարցին՝ նախագահը նշեց, որ ցեղասպանության ճանաչումը և դատապարտումը աշխարհասփյուռ Հայության օրինական պահանջն է, իր իսկ հայտարարությունները որակելով որպես հարցի շուրջ Հայաստանի դիրքորոշման մշակում: Ռ. Քոչարյանը շեշտեց, որ Հայաստանի և Սփյուռքի ջանքերը Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում միևնույն ուղղությունն են միտված, այդպիսով լինելով ավելի արդյունավետ.<sup>196</sup> ՀՀ նախագահը նշել էր նաև, որ «եթե որևէ անձ կամ ազդեցություն է իր արժանապատվությունը պաշտպանել, դա պարտադիր կերպով պետք է ինչ-որ այլ կարգի Հետևանքների ակնկալիքներով արվի», թե՞ արդեն Հենց ինքը՝ նպատակն արդարացնում է այս քայլը: Ինչ վերաբերում է Թուրքիայի Հետ մեր հարաբերություններին,

<sup>193</sup> Նույն տեղում, էջ 83-86:

<sup>194</sup> Նախագահ Ռ. Քոչարյանի ելույթը Արգենտինայի միջազգային հարաբերությունների խորհրդում, 06/05/2002: <http://news.president.am/arm/?sub=statements>:

<sup>195</sup> Նախագահ Ռ. Քոչարյանի հարցազրույցը CNN-Türk հեռուստաընկերությանը, 29/01/2001: <http://news.president.am/arm/?sub=press&year=2001&id=1&mode=1>

<sup>196</sup> Նույն տեղում:

մենք հասկանում ենք, որ երկու պետությունների միջև այս հարաբերությունները Յեղասպանության ճանաչումից հետո որևէ նոր իրավական հետևանքների չեն բերելու: Խոսքը դրա մասին չէ, դա այսօր արդարության վերականգնման հարց է, Հայաստանի Հանրապետության և անձամբ ինձ համար դա ավելի շատ բարոյականության հարց է: Ես գիտեմ, որ Թուրքիայում կարծիք կա, որ եթե Հիմա Յեղասպանությունը ճանաչվի, ապա Հայաստանն անպայման տարածքային պահանջ է ներկայացնելու Թուրքիային... Թուրքիայի համար Յեղասպանության ճանաչումը Հայաստանի Հանրապետության նկատմամբ չի բերում իրավական հետևանքների»:<sup>197</sup> Հարցազրույցի ընթացքում նշվեց, որ արդի միջազգային իրավունքի նորմերի համաձայն Հայաստանը Թուրքիայի նկատմամբ որևէ տարածքային պահանջներ չի կարող ունենալ: Ի. Քոչարյանը նշեց, որ այդ հարցի քննարկումն առավել քան քաղաքականացված է՝ խորհուրդ տալով Թուրքերին առավել քան հազիստ նայել այդ խնդրին:

Ինչպես արդեն նշեցինք, Հայ-թուրքական հարաբերությունների վրա նշանակալի ազդեցություն է գործում երրորդ երկրներում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը: Թուրքերը խանդոտ են վերաբերում Հայկական այդ ոլորտում Հայկական սիյուռքի նվաճումներին և ամեն անգամ չեն վարանում հայտարարել, որ դա բացասական ազդեցություն կունենա Հայ-թուրքական հնարավոր երկխոսության վրա: Հայոց ցեղասպանության ճանաչումը ԱՄՆ-ում քաղաքական օրակարգ մտալ նաև 2000 թվականի հոկտեմբերին, երբ Հայկական լորբիստական խմբերի ակտիվ գործունեության արդյունքում ներկայացուցիչների պալատում շրջանառվելու էր մտնելու Հայոց ցեղասպանությունը դատապարտող H.RES. 398 բանաձևը:<sup>198</sup> Քննարկումների սկզբից էլ պարզ էր, որ խորհրդարանական լուծմանը Թուրքիայի համար աննպաստ ընթացք էին ստանալու: Պաշտոնական Անկարան կրկին անգամ շրջանառության մեջ մտցրեց իր կողմից լայնորեն կիրառվող քաղաքական հնարքներից մեկը՝ շանտաժը և ստիպեց, որ ԱՄՆ-ի նախագահ Բիլ Քլինթոնը 2000թ. սեպտեմբերի 18-ին առանձին ուղերձով դիմի ԱՄՆ ներկայացուցիչների պալատի խոսնակ Դենիս Հասթերթին: Քլինթոնի ուղերձը խոսնակի ուշադրությունն էր հրավիրում ԱՄՆ արտաքին քաղաքական գերակայությունների և շահերի վրա, ասելով. «Մենք նշանակալի շահեր ունենք այդ բարդ աշխարհագրական գոտում, այն է՝ զսպել Արևելքի և Կենտրոնական Ասիայի կողմից եկող սպառնալիքները, կայունություն

<sup>197</sup>Նախագահ Ի. Քոչարյանի հարցազրույցը CNN-Turk հեռուստաընկերությանը, 29/01/2001: <http://news.president.am/arm/?sub=press&year=2001&id=1&mode=1>:

<sup>198</sup>Այս մասին ավելի հանգամանալի տես Բարսեղյան Լ. «Ամերիկայի Միացյալ Նահանգները Հայոց ցեղասպանությունը և թուրքական հակազդեցությունը», Երևան, 2001:

Հաստատել Բազմաբնակչություն և Հայթայթել էներգակիրների նոր աղբյուրներ: Օրինադժի քննարկումն այս անհանգիստ ժամանակաշրջանում բացասաբար կանգնադառնա բոլոր այս շահերի վրա և կձախողի Հայաստանի ու Թուրքիայի միջև Հարաբերությունների բարելավմանն ուղղված (նաև օրինադժի կողմնակիցների) ջանքերին: Ես լիովին հասկանում եմ, թե որքան սուր են ընկալում Թուրքիան և Հայաստանն այս խնդիրը: Վերջին Հաշվով, այս ցավոտ խնդիրը կարող է լուծվել միայն այն դեպքում, երբ երկու կողմերը միասին քննեն իրենց անցյալը»<sup>199</sup> ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատում ընթացող քննարկումները անմիջականորեն անդրադարձել էին Հայաստան-Թուրքիա Հարաբերությունների վրա: Եթե բանաձևի քննարկման առաջին փուլերում Անկարան արձագանքում էր նյարդային ջղաձգումներով, ապա Ներկայացուցիչների պալատի օրակարգում Հայտնվելու պահին անցել էր սպառնալիքների լեզվին: Հայաստանի նկատմամբ կիրառվելու էին 17 պատժամիջոցներ, որոնցից առաջինը՝ ՀՀ քաղաքացիների համար անցագրային ռեժիմի խստացումը, ուժի մեջ մտավ Հենց քննարկումների օրերին: Թուրքերը մշակել էին ամերիկացիների դեմ գործողությունների 34 կետանոց ծրագիր, ԱՄՆ-ի օրենսդիրների կողմից բանաձևին կողմ քվեարկելու դեպքում: Ինչևէ, բանաձևը չմտավ Կոնգրեսի ստորին պալատի օրակարգ: Հայաստանի Հետ Հարաբերություններ Հաստատելու Թուրքական մյուս Հիմնական նախապայմանը վերաբերում էր Արցախի Հարցում Հօգուտ Ազրբեջանի կատարվելիք միակողմանի զիջումներին, ինչը հիմք է տվել կարծելու, թե Հայաստանի Հետ Հարաբերությունների հարցում պաշտոնական Բաքուն կաշկանդում է Անկարայի գործողությունները: Մեր կարծիքով, իրականութայունը տրամադծորեն հակառակի մասին է վկայում: Միանշանակ է, որ Հայաստանի Հետ Հարաբերություններում Թուրքիան Ազրբեջանի պատանդը չէ. Երևանի Հետ Հարաբերություններում Թուրքերը առաջնորդվում են միմիայն սեփական շահերով և աշխարհաքաղաքական հաշվարկով: Ընդհակառակը՝ Ազրբեջանն է պատանդ Հայ-թուրքական լարված շփումների պայմաններում, քանզի Հայերի Հետ Հարաբերությունների Հաստատման շահարկման միջոցով Թուրքերը հաճախ են Ազրբեջանից շոշափելի զիջումներ կորզում, քանզի Հայ-թուրքական Հարաբերություններում ցանկացած, թեկուզ ամենաչնչին տեղաշարժը Բաքուն ընդունում է առանձնակի հիստերիայով: Դեռ 1995թ. փետրվարին ԱՄՆ փոխպետքարտուղար Ռիչարդ Հոլբրուքի, Անկարային ուղղված Հայաստանի Հետ Հարաբերությունների հաշտեցման կոչը Ազրբեջանում սվիններով ընդունեցին: Ի մասնավորի նախագահի

<sup>199</sup> Նույն տեղում, էջ 64:

խորհրդական Վ. Գուլուզադեն հայտարարեց. «Երևանի Հետ Հարաբերությունների հաստատումը, քանի դեռ Հայերը դուրս չեն եկել Ազրբեջանի դրավյալ տարածքներից, դավաճանություն է թուրքիայի կողմից»:<sup>200</sup> Անկարայի պատասխանը չոր և հստակ էր, թուրք պաշտոնյաները հայտարարեցին, որ արտաքին քաղաքականությունը այլ պետությունների քմահաճույքներով չեն պայմանավորում:<sup>201</sup> Ազրբեջանական հիստորիայի մեկ այլ վառ օրինակ էր աղմկահարույց թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի (ԹՀՀՀ) ստեղծմանը հաջորդած Ազրբեջանի արձագանքը:<sup>202</sup> Ինչպես նշել ենք, Հայ-թուրքական հարաբերությունները նաև գերտերությունների, մասնավորապես ԱՄՆ-ի հետաքրքրության ոլորտում են: Այս տեսանկյունից Հայ-թուրքական պետական փակ սահմանը ոչ թե երկու պետությունների, այլ երկու աշխարհաքաղաքական տիրույթների՝ ՆԱՏՕ-ի և Ռուսաստանի շփման դուռու է վերածվում: Թուրքիայի և ԱՄՆ-ի շահերը հարստիկովկասյան քաղաքական սցենարում հիմնականում համընկնում են: Երկու պետություններն էլ ձգտում են թուլացնել տարածաշրջանում ռուսական ազդեցությունը, որի կրողը համարվում է Հայաստանը: Ընդհանրապես Միացյալ Նահանգների հեռահար նպատակը Կովկաս-կենտրոնաֆիական տարածաշրջանում այնպիսի իրավիճակ ստեղծելն է, որ համաշխարհային ուժի կենտրոններից և ոչ մեկը չունենա գերակշռություն:<sup>203</sup> Փաստորեն Հայաստանի Հետ սահմանի բացումը և դիվանագիտական հարաբերությունների հաստատումը, առանց տարածաշրջանային կոմունիկացիոն ուղիների վրա թուրքական և կամ ամերիկյան վերահսկողության, պաշտոնական Անկարայի տեսակետից ինքնանպատակ են:

Հարաբաղյան հակամարտության նման ստատուս քվոյի դեպքում միմիայն Հայաստանի Հետ սահմանի բացումը հաղորդակցության ուղիների առումով թուրքերին և ամերիկացիներին համարյա ոչինչ չի տալիս. Կարսում ավարտվող երկաթուղային փակուղին կավարտվի, օրինակ, Երևանում:

Սպիտակ Տունն ու Պետգեպարտամենտը Հայերին ու թուրքերին միշտ էլ հաշտեցման կոչեր են արել, սակայն Քլինթոնի վարչակարգի արտաքին քաղաքական օրակարգում այս հարցը առաջնայիններից չէր: Անգամ 1999թ. ամռանը ՀՀ վարչապետ Վազգեն Սարգսյանի ԱՄՆ կատարած այցի ընթացքում փոխնախագահ Ալբերտ Գորի Հետ հանդիպման ժամանակ արժարժվեց Հայաստանի և Թուրքիայի սահ-

<sup>200</sup> *Cumhuriyet*, 25/02/1995, տես նաև *Չարրյան Հ.*, նշվ աշխ. էջ 38:

<sup>201</sup> Նույն տեղում, էջ 38:

<sup>202</sup> *Turkish Daily News*, 12/07/2001.

<sup>203</sup> Ամերիկյան քաղաքականության մասին ավելի խնդրամանայի տես. *Безжинский З., Великая шахматная доска, М., 1999, стр. 149-155.*

մանի բացման նպատակով Թուրքիայի վրա ճնշում դործադրելու անհրաժեշտությունը: Դրանից հետո էլ ԱՄՆ-ի պաշտոնյաները բազմիցս հայտարարել են, որ նախանձախնդիր են լինելու սահմանի բացման հարցում:

Վաշինգտոնը կատարեց որոշ քայլեր նաև մեղմելու Թուրք-հայկական կնճիոր, մասնավորապես Հայաստանում իր դեսպանի միջոցով ամեն կերպ հավաստիացնելով, որ ԱՄՆ-ը կողմ է հայ-թուրքական սահմանի շուտափուլյթ բացմանը:<sup>204</sup> ԱՄՆ նախկին դեսպան Զ. Օրդուելյը մասնավորապես ասել էր, որ հայ-թուրքական սահմանի խնդիրը ԱՄՆ-ի արտաքին քաղաքական օրակարգում է: «Մեծ Մերձավոր Արևելքի» ծրագրի համատեքստում հայ-թուրքական երկխոսություն խնդիրը միանշանակորեն բխում է նաև ԱՄՆ-ի շահերից: Այս ծրագրերը, որը միասնական նոր տիրույթում է փորձում տեսնել տարածաշրջանը ինքնանպատակ կլինի, եթե չաշխատեն տրասնպորտային հաղորդակցությունները, մասնավորապես Կարս-Գյումրի երկաթգիծը, որը Անդրկովկասը Թուրքիային կապող միակ երկաթուղային հանգույցն է: Ահա այս համատեքստում են հնչել ԱՄՆ դեսպանի հայտարարությունները հայ-թուրքական սահմանի հնարավոր բացման մասին: Ինչևէ, պարզ է այն իրողությունը, որ Հայաստան-Թուրքիա սահմանը սոսկ երկու պետությունների սահման չէ, այլ երկու ռազմաքաղաքական ուժի կենտրոնների բաժանարար գիծ: Թուրքիայի նման խոտոր քաղաքականությունը ևս մեկ անգամ հաստատեց այն իրողությունը, որ իրականում Անկարան շահագրգռված չէ շուտափուլյթ բացելու Հայաստանի հետ սահմանը:

2002թ. գարունն ու ամառը նշանավորվեցին նաև երկկողմ հարաբերությունների որոշակի ակտիվացմամբ, չնայած թուրքական պաշտոնական քաղաքական դիժը Հայաստանի նկատմամբ մնում էր անփոփոխ: Պաշտոնատար անձանց հաճախակի շփումները սկսվել էին դեռևս 2002թ. փետրվարից, երբ Նյու-Յորքում տեղի ունեցավ Օսկանյան-Զեմ հանդիպումը: Այս հանդիպման մանրամասները գաղտնի պահվեցին. հայտնի էր միայն, որ Հայաստանի և Թուրքիայի արտգործնախարարները պատրաստակամություն էին հայանել շարունակելու երկխոսությունը: Միառժամանակ Անկարան գովազդում էր Հայաստանի, Ազրբեջանի և Թուրքիայի արտաքին գործերի նախարարների ձևաչափով հանդիպում անցկացնելու գաղափարը<sup>205</sup>:

«Զումհուրիեթը» ապրիլի 11-ի համարում, «Թուրքիան պատրաստ է Հայաստանի հետ հանդիպում անցկացնել» վերնագրով հոդվածում, մեջբերում էր արտգործնախարար Ի. Զեմի՝ լրագրողին-

<sup>204</sup> Մեդիամարտ, 5/08/2003:

<sup>205</sup> Ազգ, 11/04/2002:



րին տված ճեպագրույցից մի հատված, որում Թուրքիայի արտաքին գերատեսչության ղեկավարը կրկնում է շուրջ մեկ տարվա կոչը՝ Անկարայի և Երևանի միջև հաստատել երկխոսություն:<sup>206</sup> Ընդ որում նմանօրինակ կոչերը նախորդում են ապրիլի 24-ին, այն օրվան, երբ «Ջումհուրիեթի» խոսքերով, «Հայկական լորրիները նշում են այսպես կոչված ցեղասպանության տարելիցը»: Ջեմը ճեպագրույցի ընթացքում նշել էր, որ Թուրքիան պատրաստ է հյուրընկալել Անկարայի, Երևանի ու Բաքվի ներկայացուցիչներին՝ քննարկելու կովկասյան տարածաշրջանի վեճերը: Ապրիլի 25-ին «Արմենպրես» գործակալությունը, վկայակոչելով «Թրրքիշ դեյլի նյուզ» թերթը, հստակեցրեց նաև հանդիպման օրը՝ մայիսի 14-ը:<sup>207</sup>

Հայ-թուրքական միջպետական հարաբերությունների 2002թ. կարևորագույն զարգացումներից էր Օսկանյան-Ջեմ-Գուլիե եռակողմ հանդիպումը, որը տեղի ունեցավ մայիսի 14-15-ին, Իսլանդիայի մայրաքաղաք Ռեյկյավիկում: Հանդիպման նախաձեռնողը Թուրքիայի արտաքին գործերի նախարար Իսմայիլ Ջեմն էր, որը սկսած 2001թ. փետրվարից, փորձում էր հաջողել իր տարածաշրջանային նախաձեռնությունը: Հայաստանի Հետ հարաբերությունների զարգացման առումով, սակայն, Թուրքիայի նախապայմանները մնացին անփոփոխ. պաշտոնական հարաբերությունների հաստատումը անհնար էր մինչև Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի կարգավորումը: Թուրքիայի նախագահ Ա. Սեդերը հայտարարեց. «Քանի դեռ Հայկական ուժերը դուրս չեն բերվել Ադրբեյջանից, Թուրքիան չի բացի սահմանները և չի համագործակցի Հայաստանի հետ»: Անկախ արդյունքից «Թրքիշ Փրոբ» շաբաթաթերթի կարծիքով, Հայաստան-Թուրքիա-Ադրբեյջան եռակողմ հանդիպումը տարածաշրջանային կարևոր զարգացում էր:<sup>208</sup>

Ռեյկյավիկից վերադառնալուց Հետո Թուրքիայի արտգործնախարար Ի. Ջեմը հրապարակել է Հայաստանի Հետ հարաբերություններ հաստատելու Թուրքիայի չորս հիմնական նախապայմանները:

1. Հայաստանը պետք է թողնի ցեղասպանության խնդիրը պատմաբանների ուսումնասիրմանը,
2. Հայաստանը պետք է իր Սահմանադրությունից վերացնի տարածքային պահանջների հոդվածները,
3. Պետք է լուծվի Լեռնային Ղարաբաղի հարցը՝ ինչը, ըստ Թուրքիայի, նշանակում է դուրս բերել Հայկական բանակը Ղարաբաղի տարածքից,

<sup>206</sup> Cumhuriyet, 11/04/2002.

<sup>207</sup> Արմենպրես . 25/04/2002: <http://www.armenpress.am>:

<sup>208</sup> Turkish Probe, 19/05/2002 .

4. Հայաստանը պետք է միջանցք տրամադրի Ադրբեջանի և Նախիջևանի կապը ապահովելու համար.<sup>209</sup>

Ի. Զեմը չէր մոռացել նշել, որ Թուրքիան ԵՄ-ի անդամակցության թեկնածու է, Հայաստանն էլ մի օր ստանալու է այդ կարգավիճակը: Այդ առումով, ըստ նրա, Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը Երևանի համար կարևորագույն խնդիր է: Թուրքական կողմի նմանօրինակ դիրքորոշումը ոչ այլ ինչ էր, քան Հայաստանի նկատմամբ ավանդական քաղաքականության շարունակություն, որը միտված էր երկկողմ հարաբերությունները հնարավորին բարդացնելուն: Այսինքն, Թուրքիան չէր հրաժարվել Հայաստանի նկատմամբ իր թշնամական վերաբերմունքից: Հետագա հանդիպումների ընթացքում մասնակիցները հերքեցին Թուրքիայի կողմից նախապայմանների առաջ քաշելու մասին լուրը: Մայիսի 20-ին ՀՀ արտաքին գործերի նախարար Վ. Օսկանյանը մամլո ասուլիսում հայտարարեց. «Մամուլում հայտնված՝ Հայաստանի նկատմամբ Թուրքիայի չորս նախապայմանների մասին լուրը բացարձակապես չի համապատասխանում իրականությանը: Միզուցե այդ նախապայմանների մասին նշվել է այլ տեղ, բայց մեր եռակողմ հանդիպման ընթացքում Հայաստան-Թուրքիա հարաբերություններ չեն քննարկվել, և իմ գործընկեր Զեմի կողմից նման բան չի նշվել: Դա կառուցողական և օգտակար հանդիպում էր, շատ բաց տեքստով քննարկվել են երեք երկրներին հետաքրքրող խնդիրներ».<sup>210</sup> Հետաքրքրական է, բայց Ադրբեջանի արտգործնախարար Գուլիևը ևս հերքեց եռակողմ հանդիպումը իբր լարված մթնոլորտում անցած լինելու մասին լուրերը:

Որպես հանդիպումների այս շարքի շարունակություն, 2002թ. Հունիսի սկզբին, վկայակոչելով «Թրքիչ դեյլի նյուզը», հայաստանյան թերթերը տեղեկացրեցին, որ Թուրքիայի արտգործնախարար Ի. Զեմը և նրա հայ պաշտոնակից Վ. Օսկանյանը Հունիսին՝ նախքան Սևծովյան տնտեսական համագործակցության համաժողովը, հերթական անգամ հանդիպում կունենան: Հանդիպման օրվա մասին տեղեկություն չէր հաղորդվել: Որոշվել էր նաև, որ Թուրք և հայ դիվանագետները մամուլից գաղտնի են պահելու Զեմ-Օսկանյան հանդիպումների մանրամասները՝ մինչև երկու պետությունների բանակցությունները չավարտվեն.<sup>211</sup>

Հունիսի 10-ին «Նոյյան Տապան» գործալակությունը, վկայակոչելով Թուրքական աղբյուրները, տեղեկացրել էր, որ հայկական և Թուրքական կողմերը կհանդիպեն Հունիսի 17-ին՝ Եվրոպայի քա-

<sup>209</sup> Տես Նոյյան Տապան . 17/05/2002, <http://www.nt.am/>:

<sup>210</sup> Ազգ. 21/05/2002:

<sup>211</sup> Turkish Daily News, 3/06/2002.

ղաքներից մեկում (Հավանաբար Վիեննայում կամ ժնևում): Գործակալությունը մատնանշել էր երկկողմ շփումներում կարևոր դերակատարություն ունեցող անդրկուլիսային գործիչների՝ թուրքական կողմից ԱԳՆ պաշտոնյա էրթան Թեղգորին, իսկ Հայաստանից՝ ԱԳՆ Մերձավոր և Միջին Արևելքի վարչության պետ Կարեն Միրզոյանին: Համաձայն գործակալության ունեցած տեղեկության, Հանդիպման ընթացքում մասնավորապես նախապատրաստվելու էր Հայաստանի և Թուրքիայի արտգործնախարարների՝ Հունիսի 25-ին Ստամբուլում՝ Սեծովյան տնտեսական Համագործակցություն կազմակերպության շրջանակներում տեղի ունենալիք Հանդիպումը:<sup>212</sup> Հունիսի 21-ին «Նոյյան տապան» գործակալությունը, վկայակոչելով Ադրբեջանում Թուրքիայի դեսպանության տարածած տեղեկատվությունը, նշել էր, որ թուրքական ԱԳՆ ղեկավար Ի. Ջեմն Հանդիպելու է Հ. Ալիևին և Վ. Օսկանյանին:<sup>213</sup>

Ուշագրավ այլ զարգացումներ էին տեղի ունենում Հայ-թուրքական Հարաբերությունների օրակարգային Հարցի՝ Հայոց ցեղասպանության արժարժման Հետ կապված: Հետաքրքրական է, որ միջպետական Հարաբերությունների ակտիվության սկիզբը Համընկավ Ապրիլի 24-ի օրվա Հետ, երբ ակնկալվում էր ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշի ցավակցական ուղերձը Հայ ժողովրդին, որտեղ ցեղասպանություն եզրը մտցնելու համար ամերիկահայկական լորբին պայքարել էր մի ամբողջ տարի: Եթե ցեղասպանության զոհերի Հիշատակի օրվա կապակցությամբ ՀՀ նախագահի ուղերձում վերահաստատվում էր Մեծ եղեռնի միջադրային ճանաչման խնդիրը, որպես Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության առաջնայնություն<sup>214</sup>, ապա ԱՄՆ նախագահը, չնայած 162 կոնգրեսականների կողմից 1915թ. իրադարձությունները ցեղասպանություն անվանելու իրեն ուղղված դիմումին և 2000թ. Հունիսի 2-ին՝ իր նախընտրական արշավի օրերին ամերիկահայությունը տված խոստմանը՝ ԱՄՆ-ի նախագահ ընտրվելու դեպքում, Ապրիլի 24-ին «ցեղասպանություն» բառն օգտագործելու մասին, Բուշ կրտսերը երկրորդ անգամ դրժեց խոստումը: ԱՄՆ-ի նախագահը Հայ ժողովրդին կոչ էր արել ապագան կառուցել «ճշմարտության և Հաշտեցման Հիմքով»: Թուրքիային էլ Հորդորել էր Հայաստանի Հետ Հաստատել տնտեսական, քաղաքական և մշակութային Հարաբերություններ: Նա իր երախտիքի խոսքն էր ուղղել ամերիկահայությունը և Հայաստանին՝ ահաբեկչության դեմ պայքարում ցուցաբերած աջակցության Հա-

<sup>212</sup> Նոյյան Տապան. 10/6/2002, <http://www.nt.am>:

<sup>213</sup> Նոյյան Տապան. 21/6/2002, <http://www.nt.am>:

<sup>214</sup> Ազգ. 24/04/2002:

մար.<sup>215</sup> Սակայն ոչ ԱՄՆ նախագահի քաջալերումը, ոչ էլ երկկողմանի շփումների ակտիվացումը, որևէ ազդեցություն չունեցան Հայոց ցեղասպանության ժխտման՝ Անկարայի քաղաքականության վրա: Թուրքիայի նախագահ Սեզերի հովանավորությամբ Անկարայում ապրիլի 20-21-ը տեղի ունեցավ Հայկական ուսումնասիրությունների կոնգրես, որ կազմակերպել էր Անկարայի Հայկական հետազոտությունների ինստիտուտը:<sup>216</sup> Կոնգրեսը նպատակ ուներ անդրադառնալու «Հայկական հարցին իր ազգային, պատմական, կրոնական, մշակութային, իրավական, ահաբեկչական, հոգեբանական, միջազգային ենթատեքստերով»: Հայկական ուսումնասիրությունների կոնգրեսի Հայտարարության մեջ ասվում էր. «Այսպես կոչված Հայոց ցեղասպանության պնդումները կրում են քաղաքական նպատակ»: Կոնգրեսի մասնակիցները կարծում էին, որ «գիտական ուսումնասիրությունները չեն հաստատում Հայոց ցեղասպանության պնդումները»:<sup>217</sup>

Թուրք պատմաբանների Հայտարարությունը քննադատում էր աշխարհի տարբեր պետությունների խորհրդարանների՝ Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձևերը, ինչպես նաև հորդորում նրանց՝ «Հայկական ահաբեկչական կազմակերպություններին ներառել ահաբեկչական ցուցակներում»: Կոնգրեսի աշխատանքներին մասնակցել էր 112 մարդ՝ գիտնականներ, պաշտոնաթող դեսպաններ, լրագրողներ, գրողներ: «Թըրքիշ դեյլի նյուզը» նկատում է, որ Թուրքիայի Հանրապետության ութսունամյա պատմության ընթացքում սա առաջին գեպն է, երբ «ավելի քան հարյուր թուրք գիտնականներ քննարկում են Հայերի և թուրքերի հարաբերությունները»: Եզրափակիչ Հայտարարությունը կոչ էր անում Թուրքիային և Հայաստանին ձեռնամուխ լինել երկխոսության և Համագործակցության: Թուրք գիտնականները ցանկություն էին հայտնել Հայ գործընկերների հետ Համատեղ քննարկելու «այսպես կոչված» Հայոց ցեղասպանության պնդումները: Այս միջոցառումը, սակայն, Հայոց ցեղասպանության ժխտման նոր սլոքի սկիզբն էր: Թուրքական պետության բարձրագույն ատյաններում տիրող տեսակետին համապատասխան Հայկական հարցը, տարրական դպրոցներից սկսած, դասավանդվելու էր աշակերտներին և տեղ գտնելու ինչպես Հասարակագիտության, այնպես էլ պատմության դասագրքերում:<sup>218</sup> Մինչ դասագրքերի պատրաստումը, ուսուցիչները պետք է մասնակցեին Հայոց ցեղասպանության թեմայով հատուկ դասընթացների, նրանց հա-

<sup>215</sup> Ազգ. 24/04/2002:

<sup>216</sup> Նոյյան Տապան. 16/04/2002, <http://www.nl.am>:

<sup>217</sup> Նոյն տեղում:

<sup>218</sup> Agos, 12/04/2002.

մար սեմինարներ էին կազմակերպվելու: Դասադրքերում ընդգծվելու էր «Հայերի և թուրքերի հազարամյա բարեկամությունը, գրա կացնահարումը Հայ կոմիտեների ապստամբություններով», միաժամանակ մեծ տեղ էր տրվելու «թուրք և Հայ ժողովուրդները բարեկամներ են» թեմային: Կեղծիքի ինդուստրիայի մեկ այլ հայտնագործություն էր արխիվների վարչության կողմից տրամադրված տվյալն առ այն, որ Առաջին աշխարհամարտի տարիներին 518 հազար 105 թուրքեր սպանվել էին Հայերի կողմից.<sup>219</sup> Իր աշխատանքն էր սկսել նաև «Այսպես կոչված ցեղասպանության պնդումների դեմ համակարգող խորհուրդը», որը գլխավորում էր Ազգայնական շարժում կուսակցության անդամ, փոխվարչապետ Դելեթ Բահչելին: Այս հանձնաժողովը ներառում էր թուրքական կառավարական իսթեբլիշմենտի ծանրակշիռ գործիչներին և ֆինանսավորվում թուրքիայի վարչապետի հիմնադրամից: «Թրքիչ դեյլի նյուզ» օրաթերթը նկատել էր, որ Հանձնաժողովի Հանդիպումը զուգադիպել էր Հայաստանի Հետ սահմանների բացման շուրջ ծայր առած շահարկումներին.<sup>220</sup> Թուրքիայում, իհարկե, կային նաև այլ տեսակետներ. Հայաստանի Հետ հարաբերությունների զարգացումը նպատակահարմար էր գտնում պաշտոնաթող դիվանագետ Յուքսել Սոյլեմեզը, որը «Զաման» օրաթերթի մայիսի 14-ի համարում առաջարկում էր Հայաստանի և թուրքիայի հարաբերությունների զարգացումն արագացնելու նպատակով Երևանում բացել առևտրային գրասենյակ: Ըստ Սոյլեմեզի, անգամ դիվանագիտական հարաբերությունների բացակայության պայմաններում անհրաժեշտ է ձեռնամուխ լինել երկկողմ տնտեսական կապերի զարգացման գործին.<sup>221</sup>

2002թ. ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման առումով հերթական քայլը կատարեց Կանադայի Սենատը.<sup>222</sup> Կանադական լուսթյան պատր ճաք տվեց 1980թ., երբ Քվեբեկի Ազգային ժողովն ու Օնտարիոյի օրենսդիր մարմինը ճանաչեցին Հայոց ցեղասպանությունը: Կանադահայ Համայնքը կարողացավ, ի վերջո, մեծ հաղթանակ տանել 2002թ. հունիսի 13-ին, երբ Սենատը, հակառակ Օտտավայում թուրքական դեսպանատան ճնշումներին և սպառնալիքներին, ընդունեց Հայոց ցեղասպանության վերաբերյալ բանաձև, որով դատապարտում և կառավարությունից պահանջում էր ճանաչել Հայոց ցեղասպանությունը որպես «20-րդ դարի առաջին ցեղասպանություն» և «Ապրիլի 24-ը բոլոր տարիների համար Կանադայի ողջ տարածքում հռչակել 1,5 մլն Հայ ղոհերի հիշատակի

<sup>219</sup> Zaman, 19/04/2002.

<sup>220</sup> Turkish Daily News, 20/5/2002.

<sup>221</sup> Zaman, 14/05/2002.

<sup>222</sup> Ազգ. 18/6/2002:

օր»։ Սենատի բանաձևն ընդունվել էր 40 կողմ, 39 դեմ ձայների հարաբերակցությամբ<sup>223</sup>։ Բանաձևը, ինչպես նշվում է Կանադայի Հայ դատի, Հայկական համաշխարհային դաշինքի և Կանադայի խորհրդարանի միակ հայ պատգամավոր Սարգիս Սարգսյանի գրասենյակներից ստացված հաղորդագրություններում, Սենատին ներկայացրել սենատոր Շըրլի Մեհյուն։ Քվեբեկցի լիբերալը քվեարկությունից հետո ասել է. «Հայոց ցեղասպանության դատապարտումը համայն հայությանը հնարավորություն կտա դարձնել պատմության այս տխուր էջը և վճռական նայել դեպի ապագան»<sup>224</sup>։

Միևնույն ժամանակ Հայաստանի Հանրապետության նախադաշը թուրքական կողմին քաղաքական մերձեցման նոր կոչ արեց։ TRT հեռուստաընկերությունը հաղորդեց նախագահ Քոչարյանի հայտարարությունը, ըստ որի Հայաստանը ցանկանում է թուրքիայի հետ բնականոն առևտրատնտեսական հարաբերություններ ունենալ, երկկողմ հարաբերություններն իսկապես փոխշահավետ են, չնայած թուրքիան «չարունակում է սահմանը փակ պահել»<sup>225</sup>։

Ի դեպ, 2002թ. մարտի 7-10-ը ԱՄՆ-ի Միջիգանի համալսարանում կաղմակերպվել էր Հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ մի գիտաժողով, որին մասնակցել էին ամերիկացի, հայ և թուրք պատմաբաններ։ Եռօրյա նիստերում ընթերցվել էր 22 զեկուցում, որոնց զգալի մասն առնչվում էր Հայոց ցեղասպանությանը և հայկական հարցին։ Գիտաժողովում հայկական կողմը ներկայացրել էին Վահագն Տատրյանը, Ռիչարդ Հովհաննիսյանը, Ժիրայր Լիպարիտյանը, Ռոնալդ Սյունին, ինչպես նաև Նյու-Յորքի Զոհրապյան կենտրոնից Արամ Արքունը, Բերքլիի (Կալիֆոռնիա) համալսարանից Սթիվեն Աստուրյանը, Նյու-Յորքի համալսարանից Պոլ Պողոսյանը և Լոնդոնի տնտեսագիտական բարձրագույն դպրոցից Ռազմիկ Փանոսյանը։ Թուրքական կողմից գիտաժողովին մասնակցել էին, պրոֆ. Բասքըն Օրանը, պրոֆ. Հալիլ Բերքթայը, Լեյլա Նեյզին, որոնք համապատասխանաբար ներկայացնում էին Անկարայի և Սաբանջի համալսարանները։ Թուրք գիտնականներ Թաներ Աքչամը, Ֆաթմա Մյուգե Գյոչեքը ներկայացնում էին Միջիգանի համալսարանը։ Ելլի համալսարանից էր Սոներ Զալափթայը։ Պրոֆեսոր Ֆիքրեթ Ադանըրը գիտաժողովին մասնակցելու համար եկել էր Գերմանիայից<sup>226</sup>։ Գիտաժողովի աշխատանքները լուսաբանելու նպատակով հրավիրվել էին երկու լրագրող «Թուրք Հաբեր» գործակալությունից՝ Զենգիդ Չանդարը, և «Ակոսի» գլխավոր խմբագիր Հրանտ Դինքը։ Հետագա

<sup>223</sup> Նույն տեղում։

<sup>224</sup> Ազգ. 18/6/2002։

<sup>225</sup> TRTI, YAYIN, 14/03/2002, 13: 30: 22.

<sup>226</sup> Agos, 15/3/2002.

յում պարզ դարձավ, որ գիտաժողովի ընթացքում Հայ պատմաբանների մեջ ծագել են արմատական տարակարծություններ: Այս առումով նպատակահարմար է անդրադառնալ նաև Դանիայում 2002թ. մայիսի 10-11-ը Հայ և թուրք պատմաբանների մասնակցությամբ տեղի ունեցած «Հայկական Հարց. պնդումներ և մերժումներ» գիտաժողովին («Թըրքիշ դեյլի նյուզի» հաղորդմամբ գիտաժողովի պաշտոնական անվանումը «Հայկական Հարց. փաստարկներ և Հակափաստարկներ» էր, հավանաբար «Նոյյան Տապան» գործակալության տեղեկատվության մեջ տեղ էր գտել թարգմանական սխալ)<sup>227</sup>, որի կազմակերպիչը եղել էր «Ցեղասպանության և Ողջակիղման ուսումնասիրության դանիական կենտրոնը»: Համաձայն «Նոյյան Տապան» գործակալության, որը վկայակոչում էր թուրքական մամուլը, Հայկական կողմից գիտաժողովին մասնակցել էին պրոֆեսորներ Վահագն Տատրյանը և Ռիչարդ Հովհաննիսյանը, իսկ թուրքական կողմից՝ Թուրքիայի Մեջլիսի պատգամավորներ Բյուլենթ Աքարջալըն, Բայրամ Ֆըրաթ Յաքիլին և պաշտոնաթող դիվանագետ Փուլաթ Թաջարը: Գիտաժողովին մասնակցել էր նաև Գյուլնուղ Աքթանը, որը իր մեկնարանություններով հանդես էր եկել «Թըրքիշ դեյլի նյուզում»: Մանրամասնորեն անդրադառնալով Տատրյանի ելույթին, նա պնդում է, որ վերջինիս տեսակետներն անհիմն ու չափազանցված են եղել, խոստանալով օրաթերթի հերթական համարներից մեկում ներկայացնել իր փաստարկները.<sup>228</sup> Հաջորդ օրվա ելույթներում թուրքական կողմը պնդել էր, թե սփյուռքահայությունը ցեղասպանության խնդրի պատճառով կործանման է հասցրել Հայաստանի Հանրապետությունը: Թուրքերը կոչ էին արել Հայկական սփյուռքին օրինակ վերցնել հրեական լոբբիից և անցյալի փոխարեն սպրել նորօրյա իրականությամբ: Թուրքական կողմին ողջունել էր Եվրախորհրդարանի դանիացի պատգամավոր Մ. Քամրեն: Թուրք ներկաները նշել էին, որ Անկարայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումն իբրև Եվրամիությանն անդամակցության նախապայման դիտելու Եվրախորհրդարանի ընդունած որոշումը ընդունվել էր ահաբեկչական կազմակերպությունների սպառնալիքների ներքո: Արդեն 2002թ. մայիսի 21-ի «Թըրքիշ դեյլի նյուզում» Աքթանը հանդես եկավ ««Ցեղասպանության» խնդրի լուծումը» հոդվածով՝ հույժ ինքնատիպ առաջարկով. «1915-1916թթ. դեպքերը ողբերգություն էին... եթե լիներ ցեղասպանություն, ցավը դրանից ավելի պակաս չէր լինելու: Հայերը կորցնող կողմն էին: Այդ իսկ պատճառով նրանց կորուստները կյանքի, կայքի և «ստրածքի» առումով ավելին են, քան մերը: Որպես հաղթող կողմ, թուրքերը պի-

<sup>227</sup> Նոյյան Տապան, 15/5/2002, <http://www.nt.am>:

<sup>228</sup> Turkish Daily News, 18/5/2002.

տի մեծահոգի լինեն Հայերի տառապանքի նկատմամբ: Մեղանում միշտ էլ լինելու էր Հայկական փոքրամասնություն, և Հայաստանը մեր սահմանակիցն է: Այսպիսով Հայաստանի հետ հաշտեցումը մեր ապագա հարաբերությունների համար հրամայական է»:<sup>229</sup> Իր կողմից Թուրքական «Հուրիյեթ» օրաթերթի մայիսի 12-ի համարում Պոլսի Հայոց պատրիարք Մեսրոպ Մուսաֆյանը Հայերին ու թուրքերին հաշտեցման կոչ էր անում. «Աստվածաշունչն ասում է, որ երբ խնդիր է առաջանում, պետք է արագ լուծում գտնել, որպեսզի այն չշահարկվի: Զլուծված մի խնդիր կա... Եկեք երկխոսություն հաստատենք: Մենք՝ թուրքիայում բնակվող Հայերս, երկու կրակի մեջտեղում ենք: Մենք միաժամանակ թուրք ենք և Հայ: Մենք սիրում ենք թուրքին և Հային: Մեր մշակույթը թուրքական է և Հայկական: Եկեք սահմանի վրա համատեղ հուշարձան կանգնեցնենք, բոլորն այցելեն, ծաղիկներ դնեն բոլորի համար: Եկեք աղ ու հաց կիսենք»:<sup>230</sup>

բ) Հայ-թուրքական հարաբերությունները 2002-2004 թթ.

2002թ. ամռան ավարտը և ուշ աշունը թուրքիայում նշանավորվեցին տնտեսական ճախողումով և արտահերթ խորհրդարանական ընտրություններով: Նոյեմբերի 3-ի թուրքիայի Ազգային մեծ ժողովի վաղաժամկետ ընտրությունների նախօրյակին երկրում կուլիցիոն հիմունքներով իշխող Զախ ժողովրդավարական, Ազգայնական շարժում և «Մայր Հայրենիք» կուսակցությունները հաղթանակի հասնելու որևէ ակնկալիք չուներին: Նրանց լուրջ մտավախություն էր պատճառում Մեջլիսում պատգամավորական տեղեր ստանալու համար ձայների 10 տոկոսանոց արգելապատնեչին բախվելու հավանականությունը: Ի դեպ, այդ արգելապատնեչն իրենք էին սահմանել այլ՝ մասնավորապես թուրքիայի քրդական փոքրամասնության շահերը պաշտպանող կուսակցությունների համար խորհրդարան մտնելը բարդացնելու նպատակով: Ընտրությունների արդյունքում վարչապետ Բյուլենթ էջևիթի կառավարության մաս կազմող կուսակցությունները, որոնք շուրջ 3,5 տարի իշխել էին, կատարելապես ջախջախվեցին: Թուրքական խորհրդարան չկարողացավ մտնել նախկին խորհրդարանական ոչ մի խմբակցություն: Մինչ ընտրությունները թուրքական խորհրդարանում ներկայացված էին Զախ ժողովրդավարական, «Մայր Հայրենիք», Ազգայնական շարժում (վերահիշյալները կազմում էին իշխող կուլիցիան), «Շշմարիտ ուղի», «Առաքինություն» կուսակցությունները: Թուրքական խորհրդարան

<sup>229</sup> Turkish Daily News, 18/5/2002.

<sup>230</sup> Hurriyet, 12/6/2002.



նական կուսակցութիւնն էր նաև ձախ ժողովրդավարներից անջատված նորաստեղծ «Նոր Թուրքիա» կուսակցութիւնը, որը ստեղծվել էր էջլեիթի քաղաքականութիւնից դժգոհ նրա նախկին կուսակիցների ջանքերով: Այդօրինակ զարգացումները Թուրքիայի քաղաքական դաշտի լուրջ վերաճեումների հանգեցրին.<sup>231</sup> Տնտեսական ու քաղաքական քայքայման համատեքստում, պատահական չէին ընտրութիւններում «Արդարութիւն և բարգաւաճում» ու Հանրապետա-ժողովրդական կուսակցութիւնների հաղթանակի մասին Թուրքական կենտրոնական մամուլի կանխատեսումները:

Մինչ վերլուծաբանները փորձում էին ղուգահեռներ տեսնել Հայ-Թուրքական Հարաբերութիւնների նկատմամբ «Արդարութիւն և բարգաւաճում» կուսակցութեան Հնարավոր մոտեցման և 1996-1997թթ. Թուրքիայում իշխանութեան եկած իսլամիստ էրբաքանի կոալիցիոն կառավարութեան խնդրո առարկայի վերաբերյալ եղած տեսակետների միջև, ընտրութիւնները հաղթած կուսակցութեան փոխնախագահ Արդուլլահ Թիվչիրենը՝ պատասխանելով Հայ-Թուրքական Հարաբերութիւնների մասին «Ազատութիւն» ռադիոկայանի հարցին, ասաց. «Հայաստանն ու Թուրքիան հարևան երկրներ են, և մենք ունենք պատմական ու մշակութային կապեր Հայերի հետ: Այս տարածաշրջանում զարգացող իրադարձութիւններին հետևում ենք շատ մոտից և դա շատ կարևոր է, քանի որ Հայաստանը գտնվում էր կարևոր տարածաշրջանում: Աշխարհն այսօր այլևս բաժանված չէ երկու գերհզոր պետութիւնների միջև: Մենք հավատում ենք, որ լավ Հարաբերութիւններ պիտի ունենանք բոլոր երկրների հետ: Դա նշանակում է, որ մեր արտաքին քաղաքականութիւնը չպետք է հենված լինի թշնամանքի վրա: Բնականոն Հարաբերութիւնները պետք է շարունակվեն, սակայն ամեն մի պետութիւն պետք է հետևի այնպիսի քաղաքականութեան, որը ծառայում է իր ազգային նպատակներին: Ազրբեջանի և միջինասիական երկրների հետ լավ Հարաբերութիւնները բխում են Թուրքիայի շահերից, սակայն Թուրքերը հատկապես

<sup>231</sup> Ազգ. 8/11/2002: Ուշագրավ է, որ նախկին վարչապետ Էջլիքը մինչ ընտրությունները, իսկ Դեկթ Բահիչին դրանց ավարտին հայտարարել էին, որ իրենց կուսակցությունների արտահերթ համագումարներում կուսակցության նախագահ չեն առաջադրվելու: Նոյեմբերի 4-ին համանման հայտարարություն արեց «Ճշմարիտ ուղի» կուսակցության նախագահ Թանսու Չիլլերը: Ակտիվ քաղաքականությունը բողոնելու մասին հայտարարեց նաև «Մայր հայրենիք» կուսակցության նախագահ Մեսուր Յըմսազը: Թուրքական մամուլը երկրի առաջատար կուսակցությունների քախքախիչ պարտությունը հիմնավորում էր բնակչության կենսամակարդակի վրա տնտեսական ճգնաժամի անտանելի հետևանքներով: Հարկ է նշել, որ ճգնաժամի ընթացքում Թուրքիայի ներքին և արտաքին պարտքը հասել էր 203 մլրդ դոլարի, սնունդակցել էր 22 բանկ՝ պետությանը պատճառելով 21 մլրդ դոլարի վնաս, 125 հազար գործատեղ փակվել էր, 400 հազար մանր արտադրող դուրս էր մղվել շուկայից, 2.5 միլիոնով աճել էր գործազուրկների թիվը և վերջապես, չբանառովող տվյալներով, երկրում 30 մլն մարդ հայտնվել էր չբավորության, իսկ 20 միլիոնը՝ սովի շեմին:

դգայուն են Ազրբեջանի իրադրությունն անկատմամբ: Ազրբեջանը սպասելիքներ ունի Թուրքիայից: Մենք փորձում ենք պահպանել լավ հարաբերություններ Հայաստանի և այլ երկրների հետ: Սակայն Թուրքիան չի ցանկանում վտանգի տակ դնել հարաբերությունները Ազրբեջանի և միջինասիական երկրների հետ».<sup>232</sup>

Թուրքիայի նոր քաղաքական վերնախավի այսօրինակ Հայտարարությունները կարելի էր մեկնաբանել մի քանի գործոնների համադրումով: Նախ, մոտենում էր Եվրոպական միության կոպենհագենյան գագաթնաժողովը, որտեղ, հնարավոր էր, քննարկվեր Թուրքիայի՝ այդ կազմակերպությանը անդամության հարցը: Հայաստանի անկատմամբ չափավոր դիրքորոշմամբ, Թուրքերը Եվրոպայի հետ բանակցությունների ժամանակ արժարժվող հնարավոր փաստարկ էին խլում Եվրամիության պաշտոնյաներից: Կոպենհագենյան գագաթնաժողովը, սակայն, Թուրքիայի անդամության առումով ոչ մի նոր դարգացում չարձանագրեց: Թուրքիայի անդամության հարցն իրողություն դարձնելու համար ակտիվորեն աշխատում էին ոչ միայն Թուրքիայի նախագահը, վարչապետ Գյուլը, «Արդարություն և բարգավաճում» կուսակցության նախագահ, ապագա վարչապետ էրդողանը, այլև Պոլսի Հայոց պատրիարք Մութաֆյանը, որի այցը Եվրոպա, մեղմ ասած, տարակուսանք հարուցեց Հայկական շրջանակներում: Մեկնաբանելով նրա եվրոպական առաքելությունը, Պատրիարքարանի մամլո գրասենյակը մասնավորապես նշեց, որ Մեսրոպ սրբազանը շրջագայությունը ձեռնարկել է համայնքային մարմինների և իր խորհրդականների առաջարկով: Հայտարարության մեջ նշվում էր, որ այցի ընթացքում պատրիարքը եվրոպական պետությունների ուշադրություն էր բեռել Հայ համայնքի խնդիրների վրա.<sup>233</sup>

Թուրքիայի նոր իշխանությունների, առաջին հայացքից տարօրինակ թվացող վարքագիծը կարելի է բացատրել նաև այն հանգամանքով, որ քաղաքական այդ ընտրախավի համար դեռևս անսովոր էր իշխանության կրողի դերը և նորանշանակ պաշտոնյաներն ուղղակի չէին հասցրել խորապես ուսումնասիրել իրենց առջև ծառայած խնդիրների և մարտահրավերների ամբողջությունը: Եվրամիության կոպենհագենյան գագաթնաժողովից հետո, երբ պարզ դարձավ, որ ԵՄ-ին անդամակցության հարցը դեռ պիտի քննարկվի, Թուրքիայի արտաքին նախարար Յաչար Յաքըլը Հայտարարեց, որ

<sup>232</sup> Ազգ, 12/11/2002:

<sup>\*</sup> Թուրքիա-ԵՄ հարաբերությունները, սակայն առավել մտածնասիրության խնդիր են: Տե՛ս Endruweit G., Turkey and the European Union: A Question of Cultural Difference?, Perceptions, 1998-June-August, Sanguineti V., Turkey and The European Union: Fundamentalism or Algerian Syndrome? Studia diplomatica, N6/1997, pp: 37-60:

<sup>233</sup> Ազգ, 8/1/2003:

Հնարավոր էր համարում Հայաստանի Հետ Հարաբերությունների զարգացումը, անգամ հաշվի առնելով Ադրբեջանի կնճիռը: Արտգործնախարարի կարծիքով, «եթե տնտեսական շահերը պահանջեն, Հայաստանի Հետ Հարաբերություններ կստեղծենք».<sup>234</sup> Յաբրըլի այս հայտարարությունը, որպես Հայաստանի Հետ մերձեցման թուրքական միտումների հերթական դրսևորում, կարելի էր սովորական համարել: Թուրքիայում իշխանափոխությունից հետո ձևավորված յուրաքանչյուր կառավարութայուն այդպիսի քայլեր է կատարել, սակայն դրանք Ադրբեջանի հակազդեցութայան պատճառաբանութայամբ առաջ չեն դնացել:

2003թ. Հայ-թուրքական Հարաբերությունները մեծապես պայմանավորվեցին աշխարհաքաղաքական փոփոխություններով: Հենց այդ տարի ՀՀ-ում անկացվեցին նախագահական ու խորհրդարանական ընտրություններ.<sup>235</sup> Ամերիկա-բրիտանական զորքերի ներխուժումը Իրաք կարելի է համարել 2003թ. խոշորագույն զինված բախումը: Թուրքիան այս անգամ ցանկանում էր լուծել Մոցի առաջին պատերազմից մնացած խնդիրները: Անկարայի Հիմնական մտավախությունը, իհարկե, եղել և մնում է քրդական խնդիրը: Զպետք է բացառել նաև Թուրքիայի էներգետիկ հետաքրքրությունը: Իրաքի նավթային հարուստ շրջանները՝ Քիրքուքը և Մոսուլը, հանդիսանում են դեռևս 1920թ. հռչակված թուրքական «Աղգային ուխտով» իբր Թուրքիային պատկանող տարածքներ:

Իհաղմական գործողությունների նախօրյակին պաշտոնական Երևանը հայտարարել էր, որ կողմ է ՄԱԿ-ի շրջանակներում Իրաքի զինաթափմանը, մինչդեռ Հայաստանի հարևան երկու պետութայունները՝ Վրաստանը և Ադրբեջանը, ԱՄՆ-ին հայտնեցին զորակցութայուն ու պատրաստակամութայուն՝ Իրաքի դեմ ռազմական գործողութայունների համար իրենց օգային տարածքները տրամադրելու հարցում: Իրաքի հարցում Հայաստանի դիրքորոշումը, մեր կարծիքով, պայմանաված էր մի շարք գործոններով.<sup>236</sup>

<sup>234</sup> Turkish Daily News, 17/12/2002.

<sup>235</sup> Ավելի հանգամանալի, տե՛ս Ananyan A. & Careja R., *Formation and Development of Political Opposition in Armenia, from Stumbling but Struggling: Political Opposition in Four Post-Soviet Countries*, Moscow, Strategia, 2004, p. 182-184.

<sup>236</sup> Մինչպատերազմյան Իրաքն ու Հայաստանը ունեին բնականոն հարաբերություններ զարգացնելու քաղաքական կամք, Հայաստանի Հանրապետությունը մաս է կազմում ԱՊՀ շրջանակներում գործող Հափարական Անվտանգության Պայմանագրի համակարգին, վերջապես, կարևոր էր Իրաքում հայ համայնքի առկայության գործոնը: Ավելի հանգամանալի տե՛ս, Անանյան Ա., Թուրքիայի Մերձավորարևելյան քաղաքականության ուղիագիծը և հայ-թուրքական հարաբերությունները իրաքյան ճգնաժամի համատեքստում, Տարածաշրջան, Նորավանք հիմնադրամ, N2:

Քանի դեռ Թուրքիան հրաժարվում էր ամերիկացիներին տրամադրել իր ռազմական հենակետերը Իրաքի վրա լայնամասշտաբ հարձակում սկսելու համար, Թուրքական մամուլում տարածվեց տեղեկատվություն, թե իբր ԱՄՆ նախագահը սպառնացել է Անկարային Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձևի ընդունմամբ: Որոշ ժամանակ անց ամերիկյան վարչակազմը հերքեց շրջանառվող լուրերը, սակայն շուտով նույն մամուլը գրեց, որ Ֆրեդնոյից կոնգրեսական Ջաք Փուչիկյանը կոնգրես է ներկայացրել Հայոց ցեղասպանության ճանաչման օրինագիծ: Ըստ «Սթար» օրաթերթի, օրինագիծը նախատեսում էր ապրիլի 24-ը նշել որպես «Հայոց ցեղասպանության հիշատակի օր»:<sup>237</sup> Միևնույն ժամանակ նշվում էր, որ ԱՄՆ-ի Հայ համայնքը սկսել է ակտիվորեն առաջ տանել Հայոց ցեղասպանության ճանաչման նոր քարոզարշավ: Իրականում կոնգրեսի դատին էր ներկայացվելու ԱՄՆ-ի կողմից ցեղասպանության կանխարգելման օրինագծի ընդունման 15-ամյակի վերաբերյալ մի բանաձև, որում կա հիշատակում Հայոց եղեռնի վերաբերյալ: ԱՄՆ-ի Հայկական կաղմակերպությունների աջակցությունը ստացած նույն օրինագիծը Սենատի օրակարգ մտցնելու նախաձեռնությունը ավարտին չհասավ նաև Հայ համայնքում առկա որոշակի անհամաձայնությունների պատճառով:

Հատկանշական է, որ բանաձևի օգտին էին արտահայտվել նաև 2004 թ. ԱՄՆ նախագահական ընտրարշավի այնպիսի թեկնածուներ, ինչպես Ջո Լիբերմանը, Ջոն Քերրին և Ջոն Էդուարդսը: Օրինագիծը պաշտպանող սենատորներն ամեն կերպ ջանում են, որ այն քվեարկվի ԱՄՆ պետքարտուղարության բյուջեի օրինագծի հետ: Օրինագծի տապալմանը մեծապես նպաստեց Ամերիկյան հրեական կոմիտեի աշխատանքը, որ ԱՄՆ-ի փոխնախագահին կոչ էր արել դերժ մնալ այս երկու խնդիրների համատեղ քվեարկությունից: Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդոգանը Հյուսիսային Իրաքում Թուրք զինվորականների ձերբակալության առնչությամբ Չեյնիի հետ երեք հեռախոսազրույց է ունեցել և Հայոց ցեղասպանության բանաձևի հարցում խնդրել է նրա աջակցությունը: Չեյնին ընդառաջել է Էրդոգանի խնդրանքին և նամակով կամ հեռախոսով զգուշացրել սենատորներին՝ չքվեարկել բանաձևի օգտին: Թուրքիայի օգտին Սենատում Չեյնիի լորբիստական աշխատանքին է միացել ԱՄՆ պաշտպանության փոխնախարար Պոլ Վոլֆովիցը:

Ինչու՞ ԱՄՆ-ը վերստին անգամ շրջանառությունից հանեց Հայոց ցեղասպանությունը դատապարտող Սենատի բանաձևը: Իրականում կրկին անգամ տեղի ունեցավ մեծ «առևտուր» ԱՄՆ-ի ու

<sup>237</sup>Ազգ. 11/7/2003:

Թուրքիայի միջև, հարցի շահարկումը Վաշինգտոնի հաղթաթուղթն էր այս խաղում: Փաստորեն, ցեղասպանության ճանաչումը կանխելու գնով, Անկարան հաշվի նստեց Իրաքում ամերիկյան քաղաքականությանը:

Իրաքյան պատերազմի ակտիվ փուլում Հայոց ցեղասպանության ճանաչման խնդրին անդրադարձավ նաև «Ռոսբալտ» լրատվական գործակալությունը.<sup>238</sup> Նշելով, որ հայերի համառ ջանքերի շնորհիվ Հայոց ցեղասպանությունը ճանաչվել է երկու տասնյակից ավելի երկրներում, գործակալությունը շեշտում է այն հանգամանքը, որ ԱՄՆ-ում Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը, չնայած ամերիկահայերի երկու միլիոնանոց ուժեղ Սփյուռքի առկայությանը, լուրջ արգելքների է հանդիպում: Տեղեկատվության հեղինակների կարծիքով, հայկական համայնքը ԱՄՆ-ում հետապնդում է երեք հիմնական նպատակ, անել ամեն հնարավորը Հայաստանի և Արցախի համար, ստիպել Թուրքիային ճանաչել Հայոց ցեղասպանությունը և վերջապես վերադարձնել Հայոց պատմական հայրենիքը:

Ի դեպ, ԱՄՆ-ում Հայոց ցեղասպանության ճանաչման հնարավորությունները կարելի է իրատեսորեն գնահատել՝ վերլուծելով սպրիլի 24-ի նախագահի ցավակցական ուղերձը: Այսպիսով, նախագահ Բուշը, չնայած 162 կոնգրեսականների կողմից 1915թ. իրադարձությունները ցեղասպանություն անվանելու իրեն ուղղված դիմումին և 2000թ. հունիսի 2-ին՝ իր նախընտրական արշավի օրերին ամերիկահայությանը տված խոստմանը, կրկին խուսափեց ցեղասպանություն եղրից: ԱՄՆ-ի նախագահը հայ ժողովրդին կոչ արեց ապագան կառուցել «ճշմարտության և հաշտեցման հիմքով»: Թուրքիային էլ հորդորեց էր Հայաստանի հետ հաստատել տնտեսական, քաղաքական և մշակութային հարաբերություններ: Նա բարձր գնահատեց ամերիկահայության և Հայաստանի ջանքերը՝ ահաբեկչության դեմ պայքարում:

2004թ. Հայ-թուրքական զպարածև ընթացող հարաբերություններում նկատվեց նոր եռուզեռ: Թուրքիայի արտգործնախարարության մամլո խոսնակ Նամիք Թանը արդեն մայիսին կայացած ասուլիսում հայտարարեց, որ իր երկիրը ցանկանում է Հայաստանի հետ ստեղծել բարիդրացիական հարաբերություններ.<sup>239</sup>

Նկատենք, որ նախանձելի հետողականությամբ, թուրքերը Հայաստանի հետ բարիդրացիական կապեր հաստատելու պատրաստակամության մասին սկսում են խոսել այնժամ, երբ Բաքվի և Անկարայի հարաբերություններում նկատվում է որոշակի խզում՝ դրանով

<sup>238</sup> Political Haggling over Armenian Genocide, Rosbalt, 29/04/2003, <http://www.rosbaltnews.com/2003/05/24/62394.html>:

<sup>239</sup> Երկիր, 21/05/2004

Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման խնդիրը վերածելով Ադրբեջանին ահաբեկելու գործիքի:

Ջուզահեուարար, Անկարան ակտիվացնում է հակահայկական քարոզչություն ու նորովի գործի դնում պատմության կեղծման ու նենգասիրման մեքենան: «Միլլիյեթ» օրաթերթի մայիսի 16-ի համարում լույս էր տեսել թուրքական պատմական ընկերակցության կողմից հրատարակված «Աքսոր և գաղթ» աշխատության ընդարձակ մի գրախոսական:<sup>240</sup> Հայոց ցեղասպանության ժխտմանը նվիրված այս աշխատանքը թուրքական ժխտման հին քաղաքականության շարունակությունն է՝ հերթական նոր շապիկով:<sup>241</sup>

Հայ-թուրքական հարաբերություններում առկա յարվածության մասին ընդարձակ հրատարակում է տեղ գտել նաև «Ջումհուրիյեթի» մայիսի 30-ի համարում: Խոսելով երկկողմ հարաբերությունների մասին, և վերլուծելով վերջին ժամանակներս նշմարվող գործընթացները, օրաթերթը համոզմունք է հայտնում, որ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումն անհնար է, քանի դեռ Երևանը դրական քայլեր չի արել զարաբաղյան հարցի խաղաղ կարգավորման ուղղությամբ:<sup>242</sup>

Միևնույն ժամանակ, Հայոց ցեղասպանության հարցը կրկին սկսեց արժարժվել թուրքիայի եվրափնտեղման օրակարգում: Այս տեսակետից ուշագրավ է ՀԾ Դաշնակցության և Ֆրանսիական սոցիալիստական կուսակցության համատեղ հայտարարությունն այն մասին, որ ԵՄ-ին անդամության ճանապարհին Անկարան պարտավոր է ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Խնդրին առաջինը անդրադարձել է Հանրապետաժողովրդականների նախագահ Դենիզ Բայքալը, որի հրավիրած մամլո ասուլիսը հայտնվել էր թուրքական առաջատար լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում:

Հանրապետաժողովրդական կուսակցությունը թուրքիայի Հանրապետության ամենահին քաղաքական ուժն է, որը հիմնադրվել է Քեմալ Աթաթուրքի կողմից: Այն իր գաղափարախոսական հենքի կռվաններն է համարում քեմալիզմի հռչակած վեց հիմնական սկզբունքները և գործում է ձախ կենտրոնամետ դաշտում:<sup>243</sup> Հանրապետաժողովրդականները թուրքիայի երկկուսակցական խորհրդարա-

<sup>240</sup> Milliyet, 16/05/2005.

<sup>241</sup> Özdemir H. İve başl Ermeniler: Sürgün ve Göç, Ankara, 2004. Թուրքական պատմական ընկերակցության աշխատության մասին տե՛ս Անսնյան Ա., Հայոց ցեղասպանության ժխտման նոր փորձ. Թուրքական պատմական ընկերակցության «Հայեր. Աքսոր և գաղթ» աշխատության մասին, Երևան 2005:

<sup>242</sup> Cumhuriyet, 30/05/2004:

<sup>243</sup> Հանրապետաժողովրդական կուսակցության մասին տե՛ս Բաղդասարյան Ա., Թուրքիայի քաղաքական համակարգը 1920-1930-ական թթ. Երևան, 2001, էջ 31-52: Frey F.W., The Turkish Political Elite, Cambridge, Mass, 1965.

նում կազմում են փոքրամասնություն և սկսած 2002թ. ընտրություններից, Հավակնում են նաև արտախորհրդարանական ընդդիմության քաղաքական խոսափողի դերին: Միաժամանակ ՀԺԿ-ն Սոցիալիստական ինտերնացիոնալի անդամ է: Այս առումով ամենևին պատահական չէ, որ մամլո ասուլիսի նախաձեռնողը խորհրդարանական փոքրամասնությունն է, քանզի Սոցինտերնի անդամներ են նաև Համատեղ Հայտարարության Հեղինակները՝ ՀՅԴ-ն և Ֆրանսիայի սոցիալիստական կուսակցությունը: Հայտարարության տեքստն ամբողջությամբ տեղ է գտել նաև կուսակցության Համացանցային կայքում: Հավանաբար Սոցինտերնում դիրքերը կորցնելու վտանգն էր նաև Բայքալին դրդել նախանձելի օպերատիվությամբ արձագանքելու Հայտարարությանը: «Միլլիյեթ» օրաթերթի «Բայքալը մեղադրում է ՖՍԿ-ին և ՀՅԴ-ին» հոդվածում նշվում է, որ մամուլի ասուլիսի ընթացքում Դ. Բայքալը երկու կուսակցությունների Համատեղ Հայտարարությունը անվանել է անարդար՝ վերջիններիս մեղադրելով պատմական փաստերը խեղաթյուրելու մեջ:<sup>244</sup>

Ըստ նրա՝ Հայոց ցեղասպանությունը ԵՄ-ին Թուրքիայի անդամության Հարցում նախապայման Համարելը «վերին աստիճանի անհիմն և անհաջող քայլ» է: Հընթացս նշվել էր, որ զուտ քաղաքական նպատակներ հետապնդելով և «այսպես կոչված Հայոց ցեղասպանության պնդումներին» աջակցելով՝ Ֆրանսիացի սոցիալիստները ոչ միայն կեղծում են պատմության իրողությունները, այլև լուրջ վնաս են հասցնում Թուրք-Ֆրանսիական Հարաբերություններին: Ինչպես եզրակացնում է «Երկիրը». «Բայքալին Հավանաբար վախեցնում է այն փաստը, որ Ֆրանսիական կառավարության կողմից վարվող ոչ ժողովրդական տնտեսական քաղաքականությունը և տեղական ինքնակառավարման մարմիններում ՖՍԿ տպավորիչ Հաղթանակը ԵՄ-ի խորհրդարանական գալիք ընտրություններում սոցիալիստական ուժերի Հնարավոր Հաղթանակը կարող է դարձնել ավելի առարկայական: Այդ պայմաններում միացյալ Եվրոպային Անկարայի անդամակցության Հեռանկարը նախանձելի չի թվում»:<sup>245</sup> Հանրապետաժողովրդականների նախագահի կարծիքով, Հայերի հետ կատարվածը ոչ թե կանխամտածված Հանցագործություն է, այլ Օսմանյան կայսրության հողի վրա և դրա համար մղված քաղաքացիական պատերազմի անցանկալի հետևանք: Առաջ քաշելով այն անհիմն պնդումը, թե մինչև ՄԱԿ-ի ստեղծումը «ցեղասպանություն Հանցագործությունը գոյություն չի ունեցել», Բայքալը, գործածելով կեղծիքի

<sup>244</sup> Milliyet, 10/6/2004

<sup>245</sup> Երկիր, 11/06/2004:

Թուրքական քարոզչամեքենայի հնարքները, փորձել է թյուր իրավա-  
կան փաստարկով ժխտել Յեղասպանության իրողությունը:

Իր այս հայտարարությունում թուրք քաղաքական գործիչը  
ինքնատիպ չէ: Հանրապետաժողովրդականների առաջնորդը հարկ է  
համարել հիշեցնել «Հայկական ահաբեկիչների կողմից Ֆրանսիայի  
տարածքում իրականացրած ահաբեկչական սարսափելի և արյունոտ  
գործողությունները, երբ Օսլիի գործողության ընթացքում վիրա-  
վորվեցին ու զոհվեցին բազմաթիվ ֆրանսիացիներ և այլազգիներ»:  
Դ. Բայքալը համոզմունք էր հայտնել, որ իր երկրը փորձում է կար-  
գավորել Հայ-թուրքական հարաբերությունները, ջանում է իր ծառա-  
յությունը մատուցել կովկասյան տարածաշրջանում խաղաղության  
հաստատման գործում: Նա հայտարարել էր, որ ֆրանսիացի սոցիա-  
լիստների պնդումները սխալ են և չեն համապատասխանում արդի  
թուրքական իրողություններին, քանզի Անկարան հետևողականորեն  
փորձում է առաջնորդել Եվրոպական միության անդամության հա-  
մար պարտադիր հանդիսացող կոպենհագհենի գաղաթաժողովի առաջ  
քաշած սկզբունքներով: Իր հերթին, թուրքական NTV հեռուստաըն-  
կերությունը, ամբողջությամբ երկրորդելով Հանրապետա-  
ժողովրդականների հայտարարությունը, թուրքական հասարակույթ-  
յանը զգոնության կոչ է արել և նշել, թե ցեղասպանության պնդում-  
ները կեղծ են: Այս ամենը վկայում է, որ թուրքիայում չկա որևէ  
քաղաքական ուժ կամ կուսակցություն, որը պատրաստ լինի ճանաչել  
Հայոց ցեղասպանությունը, բացհիրաց խոսել օսմանյան ծանր ժա-  
ռանգության մասին: Անցյալը թուրքերի համար դեռևս պատմույթ-  
յուն չի դարձել. այն եղել և մնում է ներկայի քաղաքական հիմ-  
նախնդիրների օրակարգում:<sup>246</sup>

Մեր կարծիքով, Հայ-թուրքական հարաբերությունների  
վերաբերյալ Հանրապետաժողովրդականների հաճախակի բարձրացրած  
աղմուկը իշխող «Արդարություն և բարգավաճում» կուսակցության  
կողմից անգամ շատ զուսպ ընդունելություն է գտնում: Չպետք է  
մոռանալ, 2002թ. խորհրդարանական ընտրություններից հետո  
խորհրդարանական ընդիմադիրները որոշակիորեն զիջում են դիրքե-  
րը:

Թուրքիայում լույս տեսնող անգլալեզու «Թըրքիշ դեյլի  
նյունս» օրաթերթը, հարաբերությունների ակտիվացման թեմայի  
համատեքստում, անդրադարձել էր ԵՊՀ ուսանողների հետ հանգիս-  
ման ժամանակ ՀՀ արտգործնախարար Վ. Օսկանյանի այն հայտարար-  
ությունը, որ եթե ԵՄ-ն թուրքիայի հետ սկսի անդամության շուրջ  
բանակցություններ, Երևանը կվերանայի իր քաղաքականությունը

<sup>246</sup>Նրկիր 11/06.2004:



Անկարայի նկատմամբ: Օսկանյանը միևնույն ժամանակ համոզմունք էր հայտնել, որ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանն ուղղված ԱՄՆ-ի ջանքերը արդյունավետ կլինեն:

2004թ. Հայաստան-Թուրքիա հարաբերությունների և Հայոց ցեղասպանության խնդրի վերարժարժման առումով ուշագրավ էր նաև ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի ելույթը Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում, որը լայնորեն լուսաբանվել է թուրքական մամուլում՝ արժանանալով վիճելի և անգամ իրարամերձ գնահատականների: Թուրքական մամուլի ուշադրությունը իր վրա բեռնել է նաև ՀՀ արտգործնախարար Վ. Օսկանյանի այցը Ստամբուլ և նրա մասնակցությունը ՆԱՏՕ-ի գագաթաժողովին: Հայաստանի նախագահի՝ հայ-թուրքական հարաբերություններին վերաբերող հայտարարությունները տեղ են գտել առաջատար լրատվամիջոցների առաջին էջերում: «Հուրիյեթ» թերթը ՀՀ նախագահ Քոչարյանի ելույթին անդրադարձել է երկու հրատարակումով: «ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության հայկական պայմանը» հրոզվածում շեշտվում է ՀՀ նախագահի այն հայտարարությունը, ըստ որի՝ վերագրային եվրոպական կառույցին թուրքերի անդամակցության պայմաններից մեկը լինելու է հարևանների հետ բարիդրացիական հարաբերությունների առկայությունը.<sup>247</sup> Թերթը նշում է, որ, անկախ առկա խնդիրներից, Երևանը պատրաստ է առանց նախապայմանների գործընկերական կապեր ստեղծել Անկարայի հետ: Նույն թերթի մեկ այլ հրատարակման համաձայն, Հայաստանի նախագահը գործընկերության կոչ է անում թուրքերին՝ վերջիններիս հրավիրելով համադրժակցության գործնական ու առարկայական դաշտ: Անդրադառնալով ադրբեջանա-հայկական կոնֆլիկտին՝ Քոչարյանը համոզմունք է հայտնել, որ հայ-թուրքական հարաբերությունները չպիտի պայմանավորված լինեն երրորդ երկրների առաջ քաշած նախապայմաններով: Խոսելով թուրք-հայկական սահմանը բացելու մասին, Հայաստանի նախագահը կրկին շեշտել է, որ ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության համար անհրաժեշտ է, որ վերջինս բոլոր հարևանների, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության հետ հաստատի բարիդրացիական հարաբերություններ՝ առանց նախապայմանների: Անդրադառնալով Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցին՝ ՀՀ նախագահը նշել է. «Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերություններում անցյալի մութ կողմերը ճանաչելու անհրաժեշտություն կա»: Թուրքերը առանձնակի հետաքրքրությամբ շեշտել են Արցախի վերաբերյալ հայկական դիրքորոշումը, թե՛ ԼՂՀ-ն և Ադրբեջանը ԽՍՀՄ-ից անկախացել են՝ լինելով միևնույն իրավական

<sup>247</sup> Hurriyet/ 29/06/2004.

գաշտում: Ասել է թե Արցախը երբեք չի եղել անկախ Ադրբեջանի մաս: Թուրքական «Ռադիկալը» նույնպես անդրադառնում է Հայ-թուրքական հարաբերությունների զարգացման Հեռանկարների մասին Ռ. Քոչարյանի արած հայտարարություններին՝ որպես առաջնահերթություն նշելով Հայոց ցեղասպանության ճանաչման հիմնահարցը:

Թերթը մեջբերում է Ռ. Քոչարյանի այն միտքը, որ Թուրքիան և Ադրբեջանը միասնաբար իրականացնում են Հայաստանի շրջափակումը: «Ռադիկալը» նշում է, որ հայերը, ի դեմս նախագահ Քոչարյանի, կոչ են անում սկսել առանց նախապայմանների երկխոսություն և համագործակցություն:<sup>248</sup> Որպես օրվա կարևորագույն նյութ՝ ՀՀ նախագահի ելույթը մեջբերվում է նաև «Յենի Շաֆաք» օրաթերթի հունիսի 28-ի համարում, որը Ռ. Քոչարյանի հայտարարությունը դիտարկում է որպես Թուրքիային ուղղված կոչ: Թերթը ներկայացնում է նաև Թուրքիայի վարչապետ էրդոգանի՝ Հայ-թուրքական հարաբերությունների զարգացման տեսլականը:<sup>249</sup>

Ինչպես վկայում են թուրքական պարբերականները, «Զրրադան» պալատում հնչեցված ճառում էրդոգանը նշել է, որ իր կառավարությունն անելու է ամեն ինչ՝ Հայաստանի հետ անգամ բամբակի թելով գործած կապը չկտրելու համար: Վարչապետը հավաստիացրել է, որ հարևանների նկատմամբ Թուրքիան իրականացնում է փոխադարձ շահերը հաշվի առնելու քաղաքականություն: Միևնույն ժամանակ էրդոգանը կոչ է արել Հայոց ցեղասպանության հարցը թողնել պատմաբաններին: Հայաստանի նախագահի ելույթին է անդրադառնում նաև «Աթար» թերթը՝ «Քոչարյանը սաղրում է» վերտառությամբ: Այս հրապարակումը նույնպես անդ է գտել թերթի առաջին էջում: Դա վկայում է թուրքական մամուլի՝ Հայաստանյան իրադարձությունների նկատմամբ աճած հետաքրքրության մասին: Պարբերականը նշում է, որ Հայաստանը ցանկանում է Թուրքիայի հետ բնականոն հաստատել հարաբերություններ: Հայերը, սակայն, չեն մոռանում Հայոց ցեղասպանության հիմնախնդիրը, ինչը թուրքերն ընդունում են ակնհայտ դժկամությամբ:

Հունիսի վերջի և հուլիսի առաջին տասնօրյակի կարևորագույն իրադարձությունը թերևս ստամբուլում ընթացող ՆԱՏՕ-ի գազաթափոցովն էր: Ինչպես նշեցինք, նկատելիորեն աճել էր թուրքական լրատվամիջոցների հետաքրքրությունը Հայ-թուրքական հարաբերությունների նկատմամբ: Հիշեցնենք, որ ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը հրաժարվել էր մասնակցել ՆԱՏՕ-ի ստամբուլյան գազաթա-

<sup>248</sup> Երկիր, 2/07/2004:

<sup>249</sup> Yeni Şafak, 28/06/2004.

ժողովին՝ մատնանշելով երկկողմ հարաբերություններում առկա լարված վիճակը, և դաշինքի նստաշրջանում Հայաստանը ներկայացված էր արտգործնախարարի մակարդակով: Սակայն երկու հարևանների հարաբերությունները միայն Երևանի և Անկարայի մտահոգությունն առարկա չեն: ԵՄ-ին Թուրքիայի հնարավոր անդամակցության համատեքստում առանձնակի սրություն էր ստանալու հայկական գործոնը:

Թուրքական պաշտոնական «Թրրքիշփրես» համացանցային էջն անդրադարձել է Ֆրանսիայի նախագահ Ժ. Շիրակի և Թուրքիայի նախագահ Ա. Սեզերի հանդիպմանը, որի ընթացքում քննարկվել են ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության և այդ հոլովույթում Ֆրանսիական խորհրդարանում Հայոց ցեղասպանության պարբերաբար վերարժարժման հարցերը:<sup>250</sup> Հենց այս տեսանկյունից էլ կայքն անդրադառնում է ՀՀ արտաքին գործերի նախարար Վ. Օսկանյանի և իր թուրք գործընկերոջ՝ Ա. Գյուլի հանդիպման մանրամասներին:<sup>251</sup> Օսկանյանը փաստորեն երկրորդել է ՀՀ նախագահին՝ նշելով, որ Հայաստանում առկա է քաղաքական կամք՝ Թուրքիայի հետ հաստատել հարաբերություններ: Ի պատասխան՝ Գյուլը նշել է, որ Թուրքիան նույնքան հաստատակամ է, սակայն, ըստ թուրք դիվանագետի, մինչ այդ անհրաժեշտ է ստեղծել որոշ հարցերի ընկալման ընդհանուր Հայեցակարգ: Որպես խաղաղ կարգավորման հաջող օրինակ՝ թուրք նախարարը մատնանշել է Կիպրոսի փորձը, երբ երկու կողմերը փորձ են արել հասնել փոխըմբռնման:

Հայտարարվել է, որ Անկարան առաջ է շարժվելու «փոքր քայլերով»: Թուրք նախարարի հայտարարությունը ավելի քան հստակ է. պետք չէ սին հույսեր փայփայել սահմանի մոտալուտ բացման առնչությամբ: Թուրքական NTV հեռուստաընկերությունը նույնպես անդրադառնալով արտգործնախարարների հանդիպմանը՝ նշել էր, որ ՀՀ արտգործնախարար Օսկանյանի գոհ է հանդիպման արդյունքներից:

«Հուրիյեթը», ներկայացնելով ՆԱՏՕ-ի նստաշրջանին գուգահեռ տեղի ունեցած Օսկանյան-Գյուլ-Մամեդյարով հանդիպումը, վկայում է որ եռակողմ քննարկումների ընթացքում անդրադարձ է կատարվել փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի: Մասնավորապես, Թուրքիայի արտաքին գործերի նախարար Գյուլը նշել է, որ Արցախյան կարգավորման գործում Թուրքիան կարող է խթանիչ դեր ստանձնել: Առաջարկվել է կիպրոսյան խաղաղ կարգավորման տարբերակով՝ հաղթող-հաղթող (win-win)

<sup>250</sup> Sb'u <http://www.turkishpress.com> 1/07/2004

<sup>251</sup> Երկիր, 2/07/2004:

կարգավորման բանաձևը, որը պաշտպանում է Թուրքիան: Հանդիպման օրակարգում է եղել նաև Հայ-թուրքական սահմանի վերարացման Հնարավորութունը.<sup>252</sup> Գյուլը ներկայացրել է թուրքական Հասարակական կարծիքին հուզող հիմնական հարցերը, որոնցից առանցքային տեղ են գրավում Հայոց ցեղասպանության ճանաչման և Թուրքիայից տարածքային պահանջների խնդիրները: «Յենի Եաֆաք» թերթի հունիսի 30-ի համարը, ամփոփելով գազաթածողովի արգյունքները, նշել է, որ Թուրքիային հաջողվել է կարևոր մի առաքելություն իրականացնել: ՆԱՏՕ-ի գազաթածողովի ավարտին տված մամլո ասուլիսի ընթացքում վարչապետ էրզողանն անդրադարձել է քննարկված թեմաներին հարցերին, և միջոցառումը համարել կարևոր մի հանգրվան կազմակերպության պատմության մեջ.<sup>253</sup>

Զարգացումների առաջիկ ուշադրավ միտումներ արձանագրվեցին էրզողանի՝ Փարիզ կատարած այցից հետո, երբ Ֆրանսիայի քաղաքական վերնախավը հասկացնել տվեց, որ Հայոց ցեղասպանության ճանաչումը ամենայն հավանականությամբ մտնելու է ԵՄ-Թուրքիա հարաբերությունների ոլորտ: Ինչպես գրում է «Ռադիկալը», էրզողանի եռօրյա այցի ընթացքում նախատեսվում էին հանդիպումներ Ֆրանսիայի նախագահ Շիրակի, վարչապետ Ռաֆարենի, իշխող կուսակցության արդեն նախկին առաջնորդ Ժյուլպի, Ֆինանսների նախարար Սարկոզիի և սոցիալիստների առաջնորդ Հոլանդի հետ: Թուրքիայի վարչապետը ձգտելու էր համոզել, որ իր երկիրն արդեն պատրաստ է ԵՄ անդամակցությանը.<sup>254</sup> Հատկանշական է, որ էրզողանը Փարիզ է մեկնում՝ ձեռքի տակ ունենալով տնտեսական խաղաքարտ. «Թուրքական ավիաուղիները» նախատեսում է 1.6 միլիարդ դոլարի սահմաններում վերադիներել ինքնաթիռային պարկը: Նոր օդանավերի ձեռքբերման մրցույթի երկու հավանական հաղթողները ամերիկյան «Բոինգն» ու եվրոպական «Աերոբուսն» էին: «Ռադիկալը» նշում է, որ այցին նախապատրաստվել էին նաև ՀՅԴ և ՌԱԿ ակտիվիստները, որոնք բողոքի ակցիաներ էին կազմակերպել հուլիսի 20-ին Փարիզում, սպա Մարսելում: Էրզողանի պաշտոնական այցի ծրագիրը տեղակայելով համացանցային հանգույցներում՝ հայկական կուսակցությունները կոչ են արել հայրենակիցներին՝ մասնակցել բողոքի միջոցառումներին: Այցելության ընթացքում էրզողանը հայտարարեց, որ Թուրքիան պատրաստ է Հայաստանի հետ բնականոն հարաբերություններ հաստատել, եթե Սփյուռքը դադարեցնի Հայոց ցեղասպանության ճանաչման քարոզարշավը:

<sup>252</sup> Hurriyet, 29/06/2004

<sup>253</sup> Yeni Şafak, 30/06/2004.

<sup>254</sup> Radikal, 20/07/2004.

Զուգահեռաբար թուրքական լրատվամիջոցները ուշի ուշով հետևում էին ԱՄՆ ներկայացուցիչների պալատի քննարկմանը դրված՝ «2005թ. արտաքին օժանդակության ծրագրի» շուրջ ընթացող բանավեճերին: Ամենամյա այս քննարկումը առանձնակի սրութուն էր ստացել, երբ դեմոկրատական կուսակցության ներկայացուցիչ Ադամ Շիֆն առաջարկել էր մի փոփոխություն, ըստ որի՝ թուրքիային հնարավորություն չի տրվելու օգտագործել ամերիկյան ֆինանսական օժանդակությունը Կոնգրեսում հակահայկական քարոզչություն իրականացնելու և Հայոց ցեղասպանության ճանաչումը ձախողելու համար: Ինչպես հաղորդում էր թուրքական մամուլը, դեմոկրատ կոնգրեսականի առաջարկը ԱՄՆ գործադիր իշխանության և խորհրդարանական մեծամասնության քննադատությանն է արժանացել: «Հայկական խնդիրն աջակցություն չստացավ», - հաղորդում է «Սարահ» օրաթերթը՝ նշելով, որ չնայած ԱՄՆ ներկայացուցիչների պալատը հուլիսի 17-ին քննարկել է «2005թ. արտաքին օժանդակության ծրագիրը», որի շրջանակներում եղել է նաև Շիֆի առաջարկը, այն չի ոգևորել գործադիր իշխանության ներկայացուցիչներին և հանրապետական կուսակցությանը:

Պետդեպարտամենտի խոսնակ Ռիչարդ Բաուլչերը հայտնել էր, որ «Ամերիկայի նախագահ Ջորջ Ու. Բուշը և նրա վարչախումբը միանշանակորեն դեմ են նախագծում տեղ գտած առաջարկին»: Առաջարկն, ըստ Բաուլչերի, հակասում է թուրքիայի և Հայաստանի միջև հարաբերությունների հաստատման ամերիկյան իշխանությունների տրամաբանությանը: Ըստ նրա՝ նմանօրինակ նախաձեռնությունները միայն կվնասեն Միացյալ Նահանգների կողմից նախանշվող հաշտեցման գործընթացին.<sup>255</sup>

Հարկ է նշել, որ թե հայերն ու թե թուրքերը սպասում էին 2004թ. նոյեմբերին ԱՄՆ նախագահական ընտրությունների արդյունքներին: Գործող նախագահի մրցակից, սենատոր Ջոն Բերրին խոստացել էր, որ ընտրվելու դեպքում միանշանակորեն ճանաչելու է Հայոց ցեղասպանությունը: Դեմոկրատ սենատորի հաղթանակն անհանգստացնում էր թուրքերին: «Ռադիկալն» անդրադառնում է նախագահական ընտրություններին՝ ներկայացնելով «Բրուքլինգգ» հաստատության թուրքագիտական ծրագրի տնօրեն դոկտոր Եոմեր Թաշվընարի ընդարձակ հրապարակումը: Հոդվածում նշվում է, որ տակավին դժվար է կանխատեսումներ անել, թե ո՞վ կլինի ԱՄՆ հաջորդ նախագահը, սակայն ցանկացած տարբերակի դեպքում թուրքիան պետք է պատրաստ լինի իրավիճակի փոփոխության: Հոդվածագիրը նշում է, որ չնայած Բուշը թուրքերի բարեկամն է, իսկ

<sup>255</sup>Sabah, 18/07/2004.

Քերրին Թուրքիայի մասին երկար ժամանակ արտահայտվել է թշնամարար, Թուրքական Հասարակությունում հասունացել է հակամերիկյան և, որ ուշագրավ է, հակաբուշական տրամագրություն:

ԱՄՆ նախագահական ընտրությունների նախօրյակին ինքնալուծարված Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի նախկին անդամ Իլթեր Թուրքմենը «Հուրիյեթի» էջերում անդրադառնում է Միացյալ Նահանգներում ցեղասպանությունից տուժած հայերի իրավահաջորդների ապահովագրական փոխհատուցումների խնդրին: Հրապարակման առիթը Թուրք-ամերիկյան կաղմակերպությունների համագումարի նախագահ էրջյունենթ Քըլլըջի նամակն է՝ կապված 20-րդ դարասկզբին մահացած օսմանյան հայազգի քաղաքացիների կյանքի ապահովագրության փոխհատուցման հետ: Ապահովագրական ընկերությունների պարտավորությունների հիման վրա ամերիկյան դատարանը շուրջ 20 միլիոն դոլարի փոխհատուցման որոշում է ընդունել: Ինչպես նշում է հեղինակը, կարևորն այստեղ ոչ թե փոխհատուցումն է, այլ, որ փոխհատուցումը տրվում է «ցեղասպանությունից» տուժած լինելու պատճառաբանությամբ: Թվում է, թե այս ամենը չի անդրադառնում Թուրքիայի վրա, սակայն Քըլլըջը հակառակ կարծիքի է: Նա այն տեսակետն է հայտնում, որ նմանօրինակ դարգացումների արդյունքում ընկերությունները կսկսեն փոխհատուցում պահանջել Թուրքիայից: Այդ ժամանակ Ամերիկայի ամենահզոր լորբիստական խմբավորումները, առել է թե՛ բանկիրներն ու ապահովագրական ընկերությունները, հնարավոր է՝ փոխեն իրենց վերաբերմունքը կոնգրեսում:

Իլթեր Թուրքմենը, այս կանխատեսումը հնարավոր համարելով, կարծում է, որ առկա միջազգային իրավունքը հնարավորություն է տալիս խնդրին իրավական համապատասխան լուծում տալ և այդ կաղմակերպությունները չեն կարող Թուրքիային որևէ պահանջներ կայացնել: Հողվածագիրը, սակայն, նշում է. «քաղաքականությունն ու իրավունքը տարբեր երևույթներ են», և փաստում, որ ԱՄՆ 30-ից ավելի նահանգներ ճանաչել են Հայոց ցեղասպանությունը:<sup>256</sup> Թուրք հեղինակն ընդունում է, որ արևմտյան պետություններում դժվար է պայքարել հայկական լորբի դեմ, և որ վաղ թե ուշ նման գործելակերպով Անկարան Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման դեմ իր պայքարում կարող է մատնվել խոշոր անհաջողության: Թուրքմենն առաջարկում է քաղաքական գործելակերպի իր ոճը՝ «Հայաստանի հավասարակշիռ և չափավոր կառավարողների հետ մեր դեմ ուղղված շարժումը դանդաղեցնել և ժամանակի ընթացքում հարցը հաղթահարել»: Հայ-թուրքական հարաբերությունների

<sup>256</sup> Երկիր, 29/10/2004:

զարգացման առումով, ուշագրավ էր այն, որ 2004թ. հոկտեմբերին նախատեսված Հայաստանի, Ադրբեջանի և Թուրքիայի արտաքին գործերի նախարարների ձեռագրով Նյու Յորքում նախատեսված հերթական հանդիպումը չկայացավ: Փոխարենը արտգործնախարար Գյուլը անհատական հանդիպումներ ունեցավ ե՛ւ Հայաստանի, ե՛ւ Ադրբեջանի արտգործնախարարների հետ:

Ապասելիքները Երևանն ու Անկարան ներկայացնող դիվանագետների բանակցություններից ամենևին էլ մեծ չէին: Թվում էր, Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչությունում սկսել էին գիտակցել, որ Թուրքիայի հետ հարաբերությունները առաջ չեն գնում, և մոտ ապագայում չեն էլ գնալու: Ի տարբերություն նախորդ տարիներին բարձրաձայնվող լավատեսության՝ 2005թ. նախաշեմին հայ դիվանագետները ծայրաստիճան զգուշ են սահմանի բացման շուրջ կանխատեսումներ անելիս:

2004թ. ԵՄ գագաթաժողովը ընդունեց Թուրքիայի հետ անդամակցության բանակցություններ սկսելու մասին սկզբունքային որոշումը: Տարատեսակ քննարկումների ընթացքում բազմիցս շեշտվել է այն միտքը, որ Թուրքիայի ԵՄ անդամ դառնալու դեպքում կրարելիավզեն Հայաստան-Թուրքիա հարաբերությունները: Հայաստանյան որոշ քաղաքական ուժեր անգամ կողմ են արտահայտվում Եվրոպայի մաս դառնալու Անկարայի ձգտմանը: 2004թ. հոկտեմբերին ԵՄ հանձնաժողովը ընդունեց Թուրքիայի անդամության առաջընթացի մասին գեկույցը, իսկ դեկտեմբերի 16-17-ին տեղի ունեցած ԵՄ գագաթաժողովին երաշխավորեց ընդունել Թուրքիայի հետ անդամակցության բանակցություններ սկսելու որոշում: ԵՄ գագաթաժողովին նախորդել էր Եվրոպական խորհրդարանի նիստը, որտեղ ձայների նշանակալի մեծամասնությամբ եվրոպական խորհրդարանականները կողմ են քվեարկել Թուրքիայի հետ անդամակցության բանակցություններին:

Հայ-թուրքական հարաբերությունների հեռանկարների քննարկման մեջ անկյունաքարային գործոնը Հայաստան-Թուրքիա դիվանագիտական երկխոսության հաստատումն է: Մեր խորին համոզմամբ, Երևանի հետ որևէ հարաբերություն ունենալու և, լայն իմաստով, Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման հարցը սոսկ Անկարայի արտաքին քաղաքական օրակարգի լուսանցքային խնդիրներից է: Իրականում «եվրոպական ճնշում» հասկացությունը առավել քան վերացական է: Բոլորն էլ հասկանում են, որ գործնականում ճնշումը սովորաբար վերածվում է յուրատեսակ առևտրի, երբ ավելի ուժեղ կողմը թույլին ստիպում է կատարել կանխատեսելի քայլեր:

Հազիվ թե տեսանելի հեռանկարում եվրոպացիների ճնշումը արգյունավետ լինի, չէ որ Թուրքիան ցայսօր չի ճանաչում անգամ ԵՄ անգամ Կիպրոսի Հանրապետությանն, ավելին՝ դեռ 1974թ. բռնազավթել է կղզու Հյուսիսային մասը և այնտեղ ստեղծել է Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետությունը, որի անկախությունը ճանաչել է առաջինը: Ստացվեց այնպես, որ ԵՄ անդամության թեկնածուն որևէ հարաբերություն չունի արգեն միություն անգամ պետության հետ, ավելին՝ հարաբերությունները բարելավելու քաղաքական կամք չի դրսևորում:

Կարծում ենք, որ ԵՄ անդամության բանակցությունների ընթացքում Թուրքիան հնարավորինս կձգձգի Հայաստանի հետ հարաբերությունների բարելավումը: Այս հարցում թուրքերը որդեգրել են նոր մարտավարություն: Եթե նախկինում պաշտոնական Անկարան վկայակոչում էր Արցախի հարցը, Հայոց ցեղասպանության ճանաչման համար մղվող պայքարը, այժմ լսելի է դառնում նաև Կարսի պայմանագիրը պաշտոնապես ճանաչելու նախապայմանը: Թուրքերը վստահ չեն, որ Հայաստանը Թուրքիայի նկատմամբ տարածքային պահանջներ չունի, և ձգտում են, որ Երևանը ինչ-որ ազդանշան տա այդ ուղղությամբ՝ չնայած խնդրո սուրկայի վերաբերյալ Հայաստանի ղեկավարության բազմաթիվ հայտարարություններին: Հայաստան-Թուրքիա հարաբերությունների մյուս կարևոր նիստը առևտրատնտեսական համագործակցության հեռանկարների քննարկումն է: Ըստ էության, տարաբնույթ քննարկումները հանգեցրին այն իրողությանը, որ անգամ տնտեսական հնարավոր կապերի և համագործակցության մասին բանավեճը փորձադիտական մակարդակից տեղափոխվեց քաղաքական հարթություն՝ շահարկումների առիթ դառնալով:

Հասարակության մի զգալի Հատվածի մեջ տպավորություն ստեղծվեց, որ Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը և սահմանի բացումը Հայաստանի տնտեսական զարգացման միակ հնարավոր տարրերակն է: Անցած տարիների ընթացքում հնչեցված որոշ գնահատականների համաձայն, սահմանի բացման դեպքում երկու երկրների ապրանքաշրջանառությունը աննախադեպ ծավալի էր հասնելու: Մտավախություն էր հայտնվում, թե թուրքական ապրանքները կարող են անգամ հայկական շուկայից դուրս մղել տեղական արտադրողին: Թեև մեր համոզմամբ՝ առևտրատնտեսական հարաբերությունների հեռանկարը այնքան էլ խոստումնալից չէ:<sup>257</sup>

<sup>257</sup> Ըստ պաշտոնական վիճակագրության՝ 2000-2003 թթ. Հայաստան-Թուրքիա ապրանքաշրջանառությունը հետզհետե նվազում է, և եթե բացարձակ դրությամբ ցուցանիշով այն մոտ 42 միլիոնից իջել է մինչև 39.6 միլիոն դոլարի, ապա ՀՀ ներմուծման և արտահանման ծավալների աճին գուզրնաց, Թուրքիայի հետ ապրանքաշրջանառությունը չի գերապանցում



Իրականում Հայ-Թուրքական սահմանի բացման մեջ Անկարայի տնտեսական շահագրգռությունը գրեթե բացակայում է, Երևանի քաղաքի Հնարավոր օգուտն էլ անորոշ է. սահմանային անցակետերի ապաշրջափակման համար ավելի շատ հետաքրքրված է Միացյալ Նահանգները, որն այդպիսով լուծում է աշխարհաքաղաքական խնդիրներ:

Այս ամենը Հայ-Թուրքական հարաբերություններում առկա հիմնահարցերի փոքր մասն է միայն: Այդուհանդերձ, ինչպիսին էլ լինի Թուրքիայի վերաբերյալ ԵՄ որոշումը, Հայաստան-Թուրքիա հարաբերությունների հեռանկարը մնում է մշուշոտ.<sup>258</sup>

---

ժափայի անգամ 2 տոկոսը: Թուրքիայի հետ Հայաստանի առևտուրը դարձել է «մասնագիտացված», ներմուծման և արտահանման ծավալներում վերջին տարիներին սկսել են գերիշխել միևնույն ապրանքային խմբերը, ինչը նշանակում է, որ հազիվ թե նոր ապրանքատեսակներ, որոնց ներմուծման կարիքը զգացվի: Եթե հաշվի առնենք այն, որ Հայաստանի Հանրապետությունը տարեցտարի գրանցում է արտաքին առևտրի ծավալների աճ, ապա կարելի է կռահել, որ նույն դիմամիկայով նվազելու է Թուրքիայի բաժինը Հայաստանի հետ արտաքին առևտրում: Հարկ է նշել, որ Հայաստանի շուկայի փոքր ծավալները այն հեռանկարային չեն դարձնում անգամ տնտեսական աննախաճծի վիճակում գտնվող Թուրքիայի համար: Ի դեպ, հայ-թուրքական ապրանքաշրջանառության հաշվեկշիռը բացասական է. վերջին 4 տարիների ընթացքում, պաշտոնական տվյալների, Հայաստանից Թուրքիա է հոսել մոտ 145 միլիոն դոլար: Տե՛ս օրինակ Թորոսյան Թ., Հայաստան- Թուրքիա Առևտրատնտեսական կապեր, Երևան, 2001, էջ 61-69:

<sup>258</sup>Երկիր, 17/12/2004, ինչպես նաև, Սաֆրաստյան Ռ., Հայ-թուրքական սահմանի նշանակությունը, Հայաստան- Թուրքիա. Բաց խոսակցություն: Հասարակական երկխոսություն և զարգացումների կենտրոն, Երևան, 2005, էջ 63-68:

ՀԱՅ-ԹՈՒՐԳԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ  
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

ա) Հայոց ցեղասպանության վերաբերյալ թուրքական այլընտրանքա-  
յին կարծիքի ձևավորումը 1990-ական թվականներին

Երկու պետությունների միջև դիվանագիտական հարաբե-  
րությունների բացակայության պայմաններում փորձարկվեցին հա-  
սարակական դիվանագիտության, կամ այլ կերպ ասած՝ երկրորդային  
դիվանագիտության (second track diplomacy) միջոցներն ու հնարա-  
վորությունները: Ձևավորվեցին (ոչ առանց դրսի ուժերի գործունե  
աջակցության) կառույցներ, որոնք իրենց գործունեության նպատա-  
կը հռչակեցին հայ-թուրքական երկխոսությունը:

Հատկանշական է, այն, որ ուրացության թուրքական քաղա-  
քականությանը զուգահեռ գիտական և հասարակական շրջանակնե-  
րում առկա են այնպիսի տեսակետներ, որոնք ոչ միայն չեն մերժում  
հայ-թուրքական կառուցողական երկխոսությունը, այլև փորձում են  
հարաբերությունների բարելավման իրատեսական ուղիներ ներկա-  
յացնել: Կարելի է վստահորեն ասել, որ թուրքական հասարակույթու-  
նում ձևավորվում է մի շերտ, որը չի ժխտում Հայոց ցեղասպանույթ-  
յունը և անգամ հորդորում է թուրքիային ճանաչել Հայոց եղեռնի  
փաստը: Թուրք հասարակույթունում ազգամիջյան երկխոսության  
ըստագույժ կարելի է համարել գիտնական Թաներ Աքչամին. Ցեղաս-  
պանության ժխտման պատճառները և հայ-թուրքական հարաբերույթ-  
յունների խնդիրը Աքչամի գիտական պրպտումների ոլորտներից են:  
Նա պատմական ճշմարտությունն ասելու կոչ է անում թուրք հասա-  
րակույթյանը, փաստելով. «Ըստ օսմանյան պաշտոնական վիճակագ-  
րության 800 հազար մարդ է սպանվել»:<sup>259</sup> Հայոց ցեղասպանության  
ժխտման քաղաքականության պատճառներին Թ. Աքչամը անգրա-  
դառնում է «Մոնդ դիպլոմատիկի» 2001թ. հուլիսյան համարում  
տպագրված «Պաշտոնական պատմության ծնունդը. Հայոց ցեղասպա-  
նության արգելված թեման հետապնդում է թուրք հասարակույթյա-  
նը» վերլուծական հոդվածում՝ վեր հանելով պատմական կեղծարա-  
րության խնդիրը: Նա նշում է, որ իր արարքի ողջ արգահատելիութ-  
յան ընդունումը թուրքիայի համար կնշանակեր, որ ներկայիս պե-  
տությունը կառուցած անձանց մի մասը եղել են մարդասպաններ:  
Այդ իսկ պատճառով զարմանալի չէ, որ «ցեղասպանություն» եզրը

<sup>259</sup>Yeni Binyıl, 1/10/2000

թուրքական Հասարակությունը հիվանդագին է ընկալում: Ըստ Աք-  
 չամի, Թուրքիայի հիմնադիր Մուստաֆա Քեմալը տասնյակ անգամ-  
 ներ դատապարտել է Հայոց կոտորածներն ու պահանջել է Հանցա-  
 գործների պատիժը, սակայն իրականում նա օգտվում էր Հայասպա-  
 նության մեջ ակտիվորեն ներգրավված գործիչների ծառայություն-  
 ներից: Տեղահանության գլխավոր կազմակերպիչներից Շուքրու Քա-  
 յան Մուստաֆա Քեմալի օրոք դարձավ ներքին գործերի նախարար,  
 իսկ մեկ ուրիշ ոճրագործ՝ Հանրապետա- ժողովրդական կուսակցու-  
 թյան գլխավոր քարտուղար, Բիթլիսի, ապա Հալեպի նահանգապետ  
 Մուստաֆա Արզուլհալիք Ռենդան ստացավ նախարարի ապա Ազգա-  
 յին ժողովի նախագահի պաշտոնները, Դիարբեքիրի դահիճ Ազիֆ  
 Ֆեզլին 1922-1923թթ. տարածքային կառավարման նախարարն էր:<sup>260</sup>  
 Հողվածագիրը այնուհետև խոստովանում է, որ ցեղասպանության  
 ճանաչումն ուժեղ հարված կլիներ թուրքական պետությանը, քանզի  
 իրականում Հասարակության կարծիք Համար կործանարար կլինի այն  
 իրողությունը, որ պետության հայրերը եղել են քրեական Հանցա-  
 գործներ:<sup>261</sup>

Հայ-թուրքական հարաբերությունների անհրաժեշտությանը  
 Աքչամը պատասխանում է հարցով. «Իսկ արդյոք կա՞ մեկ այլ տար-  
 բերակ երկխոսությունից դատ»: <sup>262</sup> Պատասխանը հեղինակի համար  
 միանշանակ է. հայկական և թուրքական կողմերը, իհարկե, ոչ առանց  
 դժվարության, պիտի սկսեն հանդիպակաց քայլեր կատարել: Նա  
 արձանագրում է, որ չնայած թուրքական Հասարակությունը սկսել էր  
 հաղթահարել «հայկական տարուն», երկկողմ իրական հարաբերու-  
 յունների առումով գործընթացը դանդաղ էր առաջ շարժվում: Իսկ  
 երկխոսության գործընթացը լրջորեն կասեցնում են թուրքական  
 ԶԼՄ-ները, որոնք շարունակում են թուրքական Հասարակական գի-  
 տակցության մեջ թշնամանք սերմանել Հայ ժողովրդի նկատմամբ:<sup>263</sup>  
 Թուրք գիտնականն անդրադառնում է նաև երկկողմ հարաբերու-  
 յունները պայմանավորող անկյունաքարային խնդրին՝ Հայոց ցեղաս-  
 պանությանը: Նա կշեռքի մի նժարին դնում է Հայերի կողմից ցե-

<sup>260</sup> Ազգ. 2/08/2001:

<sup>261</sup> Ըստ որոշ տվյալների, հայ բնակչության մասնավորապես գինձորականության  
 զանգվածային ոչնչացման մեջ կարևոր դեր է խաղացել նաև օսմանյան բանակի բարձրագույն  
 հրամանատարությունը: Թուրք լեզվաբանության ապագա հիմնադիրներից Հակոբ Դիլաչարը  
 միայն լախտի քննադատությամբ է խոսյս տվել գնդակահարությունից: Ի դեպ, դավաճանության  
 մեղադրանքով Դիլաչարին մահապատժի պիտի դատապարտեր Թուրքիայի ապագա առաջին  
 նախագահ Մուստաֆա Քեմալը: Տես Աղայան Ը., Հայերը Թուրքիայում, Երևան, 1994, էջ 55-  
 56:

<sup>262</sup> Ալիեյի հանգամանալի տես. Akçnm T., Dialogue Across an International Divide: Essays  
 Towards a Turkish- Armenian Dialogue, Zoryan Institute 2001, p 1.

<sup>263</sup> Նույն տեղում, էջ 19:

դասպանութեան ճանաչման համար մղվող պայքարը, մյուսին՝ թուրքական կառավարութեան շարունակական ժխտումը:<sup>264</sup> Եվ չնայած ընկալումների տարբերութեանը, թուրք հասարակութունը ավելի հետևողականորեն պիտի քարոզի ազգամիջյան երկխոսութեան անհրաժեշտութիւնը:

Թաներ Աքչամի կարծիքով թուրք-հայկական հարաբերութիւնները հարկ է քննարկել չորս նիստերով.

1. Թուրքիայի և Հայաստանի միջպետական հարաբերութիւնները,

2. Թուրքիայի և հայկական փոքրամասնութեան հարաբերութիւնները,

3. Թուրքիայի և հայկական սփյուռքի հարաբերութիւնները,

4. Թուրքական նոր ձևավորվող սփյուռքի շփումները հայկական սփյուռքի ու Թուրքիայի հետ:<sup>265</sup>

Այս քառանկյուն երկխոսութիւնն անգամ բազում հիմնախնդիրներ է առաջ բերում, քանզի հայերի ու թուրքերի արանքով անցնում է տարամետ «հավաքական հիշողութեան» ջրբաժանը: Պատճառն այն է, որ թուրքական իշխանութիւնները շարունակաբար ժխտում են Հայոց ցեղասպանութիւնը, թուրքական հասարակութեան մոտեցումները կարծրացել են և դարձել են ավելի քան կաղապարված:

Երկկողմ հարաբերութիւններում առկա խնդիրներ վեր հանելուց բացի, Աքչամն առաջարկում է նաև լուծումներ: Ըստ նրա, երկխոսութիւնը ոչ այնքան «նույն բանն ասելն է», որքան նույն արժեհամակարգով դատողութիւններ անելը: Հրապարակային ու գիտական քննարկումների բացակայութեան հետևանքով, հիմնահարցի նկատմամբ ձևավորվել է թյուրըմբռնում և կողմնակալ մոտեցում: Քանի որ պատմութիւնը հայ-թուրքական հարաբերութիւնները պայմանավորող կարևորագույն գործոններից է, հետազոտողը հայ և թուրք պատմաբաններին կոչ է անում վեր կանգնել ազգայնականութիւնից ու իրենց ուսումնասիրութիւններում լինել անկողմնակալ: Աքչամը թուրքական հասարակութեանը հիշեցնում է, որ ժխտելով Հայոց ցեղասպանութիւնը, թուրքերը հայերին հասցնում են հոգեբանական հերթական հարվածը: Հարվածելու փոխարեն թուրքիան պիտի պատրաստ լինի լսելու հայերին, «հասկանալու այլոց ցավը և կիսելու այն»:<sup>266</sup> Այս պարագայում իրենք, թուրքերը հնարավորութիւն կստանան խոսելու սեփական պատմութեան մա-

<sup>264</sup> Նույն տեղում, էջ 29:

<sup>265</sup> Նույն տեղում, էջ 31:

<sup>266</sup> Նույն տեղում, էջ 39:

սին, չէ՞ որ ժամանակակից Թուրքիայի խնդիրների մեծամասնությունը արմատներով շաղկապված է անցյալի հետ:

Հայ-թուրքական երկխոսություն հնարավորությունների իր տեսակետն ունի իրավապաշտպան Բ. Զարափուլուն, որը չի վախենում բացահայտ նշել 1915-ի դեպքերի պատասխանատուներին. «Մարդկային այս կորուստնորի քաղաքական պատասխանատվությունն ընկնում է անկասկած իր քաղաքացիների դեմ պատերազմ հայտարարած Միություն և Առաջադիմություն կուսակցության վրա».<sup>267</sup> Իրավապաշտպանը քննարկում է ուշադրով մի տվյալ. ինչպիսի՞ն կլիներ Թուրքիայի էթնիկական պատկերը, եթե ցեղասպանությունը տեղի չունենար. «Աղգազրական տեսակետից Անատոլիայի հայերի թիվը կհաշվվեր վեց միլիոնով ավելի, նույնը վերաբերում է հույներին».<sup>268</sup> Զարափուլուն հասկանում է, որ միայն անցյալում կատարվածն ըմբռնելու և գղջպու միջոցով է հնարավոր կերտել միասնական սպագա: «Ես մի երազանք ունեմ, տառապանքն իհարկե երբեք չի կարող հատուցվել... Նվազագույն լուծումը, որ գտել է մարդկությունը նման դեպքերի համար, վնասի հատուցումն է, եթե նույնիսկ այդ հատուցումը չի կարող ետ բերել զոհերին և կամ էլ մոռացության տալ տառապանքը».<sup>269</sup> Իսկ վնասի հատուցումը հնարավոր է պատմական ժառանգության փրկության միջոցով: Բ. Զարափուլուի կարծիքով, թուրքերը պարտավոր են ասել ճշմարտությունը և երևան հանել ողջ կատարվածը: Պետք է կանգնեցնել հուշարձաններ, որ «այդ իրադարձությունները հավիտյան գրանցված մնան մեր հիշողության մեջ».<sup>270</sup> Ապաշխարանքի մաս պիտի կազմի նաև Արևմտյան Հայաստանում ծնվածներին և նրանց ժառանգներին քաղաքացիություն շնորհելը և «ավերված ու ջնջված» մշակույթների ուսումնասիրության կենտրոններ ստեղծելը: Այս ամենը հնարավոր է այնժամ, երբ տեղի ունենա Հայ-թուրքական մեծ քննարկում, երբ ուսումնասիրվեն իրադարձությունների պատճառները:

Թուրք մտավորական Թահսին Զելալը արձանագրում է այն իրողությունը, որ «Հայկական հարցի մասին ծանոթ ենք միայն թուրքերի ասածներից, այսինքն՝ նրա պաշտոնական հերքմանը: Այն նույն հերքումը իշխում է թե պաշտոնական և թե անհատական դիրքորոշումների մեջ: Այսօր թուրք բնակչության տարբեր սերունդներն իրականում ինչ գիտեն հայերի և նրանց հանդեպ գործված ոճրի մասին: Պաշտոնական ճառերում բացառվում է հայկականության որևէ ակնարկ, թե Թուրքիայի ներկա տարածքում հայեր են եղել և

<sup>267</sup> ՀՅԹԻ ֆոնդ. բաժին 32, թալ 26, փ 1, էջ 3:

<sup>268</sup> ՀՅԹԻ ֆոնդ. բաժին 32, թալ 26, փ 1, էջ 3:

<sup>269</sup> Նույն տեղում, էջ 4:

<sup>270</sup> Նույն տեղում, էջ 4:

այդ նպատակով՝ հիշողությունից լիովին ջնջվել են 1915-ի քստման-  
 լի գործերը: Սակայն որքան էլ կարճ լինի մարդկանց հիշողությունը,  
 նման ահարկու դեպքերը անհնար է հետ շրջել: Ի՞նչ ասել այն երե-  
 խաների ու կանանց մասին, որոնք 1915 թվին բռնի թուրքացվեցին:  
 Թուրքական Վիլլի Բրանդի ծնունդը վաղվա համար չէ: Հայկական  
 հարցը պատկանում է բոլոր նրանց, ովքեր ձգտում և գործում են,  
 որպեսզի այս հողի վրա ավելի շատ արդարություն լինի: Դրանք մեզ  
 հույս են ներշնչում, որ մի օր զոհերին կվերադարձվի արդարությու-  
 նը, և ոճիրը հատուցում կստանա: Այդպիսով կվերականգնվի մարդու  
 պատիվը»:<sup>271</sup>

Մեկ այլ թուրք պատմաբան՝ Մեթե թունչայը նշում է. «գա-  
 լով թուրքիայի և Հայաստանի հարաբերություններին, ես կանխատե-  
 սում եմ երկու տեսակի դժվարություններ: Առաջինը վերաբերում է  
 անցյալին: Ըստ իմ ունեցած տեղեկությունների, Հայաստանը պա-  
 հանջում է թուրքիայից, որ նա ներողություն խնդրի «Հայկական  
 բռնադաղթի» համար և վնասուց հատուցում կատարի:... Ես ցանկա-  
 նում եմ, որ Հայաստանի ղեկավարները սին հույսեր չներշնչեն  
 իրենց ժողովրդին: Ոչ ներկայումս, ոչ էլ մոտիկ ապագայում  
 թուրքական հանրապետության ոչ մի կառավարություն չի համար-  
 ձակվի նման քայլի դիմել և հակադրվել երկրում իշխող հասարակա-  
 կան կարծիքին»:<sup>272</sup> Թունչայն ավելի արմատական է իր դիրքորոշման  
 մեջ, նա պատասխանատվության կոչ է անում նաև հայերին. «Երբ ես  
 քննում եմ հայ և թուրք հեղինակների աշխատությունները այս  
 նյութի վերաբերյալ, տեսնում եմ, որ անցած ութսունհինգ տարիներ  
 ըստարար չեն եղել արդարացիորեն դատելու անցյալը: Առայժմ  
 պահանջենք թուրք և հայ կառավարություններից, որ նրանք հրա-  
 ժարվեն սադրիչ և միտումնավոր հրատարակությունները քաջալերե-  
 լուց»:<sup>273</sup>

Ցավալի փաստ է արձանագրում մեկ այլ թուրք գործիչ՝ Օրալ  
 Չալըչլարը: Վերջինիս կարծիքով, մեղավորներ փնտրելն արդեն ուշ  
 է, ավելի կարևոր է այն, որ թուրքերը անցյալից դասեր չեն քաղել.  
 «Շատ ժամանակ է անցել այդ դեպքերից հետո: Արդյո՞ք հիմա իսկա-  
 պես անհրաժեշտ է իմանալ, թե ո՞վ ճիշտ էր և ո՞վ սխալ: Միլիոնավոր  
 մարդիկ ստիպվեցին իրենց երկիրը լքել... Թուրքիան մինչև այսօր չի  
 կարողացել հիմնել փոքրամասնությունների հետ իր հարաբերութ-  
 յունները ժողովրդավարական հիմունքների վրա»:<sup>274</sup>

<sup>271</sup> Պողոսյան Ս. Կ., Պողոսյան Կ. Ս., Թուրքերը քուրքերի մասին, Երևան, 2000, էջ 7:

<sup>272</sup> ՀՅԹԻ Ֆոնդ, քաժին 32, քալ 26, փ 6, էջ 3

<sup>273</sup> Նույն տեղում, էջ 3

<sup>274</sup> ՀՅԹԻ Ֆոնդ, քաժին 32, քալ 26, փ 4, էջ 2

Ուշագրաւ է, որ Թուրքիայում արդեն շրջանառւում է այն տեսակետը, թե Հայաստանի նկատմամբ Թուրքական քաղաքականութիւնը տապալկեց, և ոչինչ չտվեց Անկարային: Ըստ ուսումնասիրող Բ. Օրանի, անկախութեան առաջին շրջանում Հայաստանը կանգնած էր երկրնորանքի առջև՝ կամ դուրս գալ տնտեսական ճգնաժամից, կամ վեր հանել ցեղասպանութեան միջազգային ճանաչման խնդիրը: Լեոն Տեր-Պետրոսյանն արեց հնարավորը Թուրքիայի հետ հարաբերութիւնները բարելաւելու համար. փակեց ՀՅԴ-ն, Հայաստանից գուրս քշեց ՔԲԿ խմբերը, փորձեց ազդել Սփյուռքի վրա, լուեցրեց Ցեղասպանութեան հիմնախնդիրը: Ի պատասխան, Հայաստանի դեմ պայքարելով, Անկարան ոչ միայն չհասավ իր նպատակներին, այլև վերջինիս հրեց դեպի Ռուսաստան: Թուրքիայի ԱԳՆ ոչ ճկուն քաղաքականութիւնը և նեղացկոտութիւնը փչացրեց Թուրք-Փրանսիական և Թուրք-Եվրոպական հարաբերութիւնները, իսկ ԱՄՆ-ում պայքարելով հայկական լորբինդի դեմ՝ Թուրքերը մնացին հրեական շահառուների խմբերի պարտքի տակ:<sup>275</sup>

Ինչպես նշեցինք, Թուրքական հասարակութիւնում ձևափոխել է մտափորականների մի խավ, որը հասկանում է Հայոց ցեղասպանութեան ճանաչման անհրաժեշտութիւնը: Պաշտոնական Անկարան իր հերթին արդեն ստիպւած է պայքարել այդ մտափորականների դեմ հենց իր երկրի ներսում, այսինքն՝ Թուրքիայում կազմափոխում է ժխտման քաղաքականութեան ներքին ճակատ:

Հասարակական շփումները կարելի էր անվերապահորեն ողջունել, եթե որոշ նախաձեռնութիւնների վրա չկախուէր Թուրքական պետութեան կողմից մշակւած «պատմութիւնը պատմարաններին թողնելու» թեզի ուրվականը: Էլ ի՞նչ երկխոսութեան մասին է խօսքը, եթե ի սկզբանե շահարկման թիրախ է դառնում Հայոց ցեղասպանութիւնը:

Ի վերջո, հասարակական դիվանագիտութիւնը կոչւած է կատարելու երկխոսութեան հասարակական պատվերը: Գործընթացը պիտի ներառի ժողովուրդների համարյա բոլոր շերտերը՝ արտահայտելով ու պաշտպանելով նրանց հալաքական շահերը: Կարծում ենք նաև, որ հասարակական դիվանագիտութիւնը պիտի լինի անմիջական, երկկողմ, չպիտի պարտադրվի որևէ երրորդ ուժի կողմից: Նման երկխոսութիւնը միտւած է բանակցող կողմերի դիրքորոշումների իրական մերձեցմանը, ապա և հաշտեցմանը, ոչ թե երրորդ կողմի աշխարհաքաղաքական նկրտումներին:

Հայ-Թուրքական երկխոսութեան նախաձեռնողները հիմնականում չեն առաջնորդվել վերոհիշյալ չափորոշիչներով:

<sup>275</sup> Agos 28/06/2002

բ) Թուրք-Հայկական Հասարակական շփումների կառույցները

Հասարակական երկխոսության բազմաթիվ նախաձեռնություններում հիմնական դերակատարությունը ստանձնել են Թուրք-Հայկական գործարարության զարգացման կոմիտեն (*ԹՀԳԶԿ*)<sup>276</sup> և Թուրք-Հայկական Հաշտեցման Հանձնաժողովը (*ԹՀՀՀ*)<sup>277</sup>

Թուրք-Հայկական գործարարության զարգացման կոմիտեն հիմնվել է 1997թ. մայիսի 3-ին և խնդիր էր դրել աջակցել Հայաստանի և Թուրքիայի գործարարների համագործակցությանը: Համաձայն կազմակերպության Հնգամյա գործնեություն գեկույցի՝ նրա նախաձեռնություններով են իրականացվել Թուրք-Հայկական շփումների 70%-ը:<sup>278</sup> Թուրք Հայկական գործարարության զարգացման կոմիտեն գտնում է, որ գործարար շփումների միջոցով Հնարավոր է Հասնել երկու ժողովուրդների միջև կառուցողական և գործակցային մթնոլորտի ձևավորման:<sup>279</sup> Ի դեպ, կազմակերպության հետաքրքրությունների շրջանակը տարածվում է տնտեսական և Հասարակական տարբեր ոլորտների վրա: Իր առջև դրած թերևս ամենակարևոր խնդիրը կազմակերպությունը համարում էր Մերսին-Երևան-Բաքու երկաթգծի գործարկումը:<sup>280</sup> Գործարարներն առաջնային են համարում նաև TRACECA ծրագրի իրականացումը, ազատ առևտրի գոտու ստեղծումը, օդային հաղորդակցության զարգացումն ու տարածաշրջանային արդյունաբերական ճյուղային համագործակցությունը (տեքստիլ, գյուղատնտեսական, տեղեկատվական տեխնոլոգիաներ, շինանյութերի արտադրություն, տուրիզմ և այլ բնագավառներում):

Թուրք-Հայկական գործարարության զարգացման կոմիտեն աջակցություն է ցուցաբերում նաև մշակութային համագործակցությանը գիտական և ուսանողական շփումներին: ԹՀԳԶԿ-ն փորձեց կազմակերպել Թուրք և Հայ պատմաբանների ֆորում՝ ազգամիջյան պատմության խնդրահարույց հարցերը ճշտելու համար: Միանշանակ է, որ քաղաքական հարաբերությունների բացակայությունը շատ հաճախ գործարարների նախաձեռնությունները դնում է հարվածի տակ:

Դեռևս 1998թ. փետրվարի 13-ին, Հանդիպելով Հայաստանի արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանի հետ, կազմակերպության Համանախագահ Քաան Սոյակը հույս հայտնեց, որ ավելի

<sup>276</sup> Կազմակերպության մասին ավելի հսկայականացված տեղ. <http://www.tabdc.org>

<sup>277</sup> Կազմակերպության պաշտոնական համացանցային կայքի բացման մասին հայտարարվել է 2004թ. հունվարի 12-14 ԹՀՀՀ-ի Լոնդոնում կայացած հանդիպման ժամանակ: Տես <http://www.tarc.info>

<sup>278</sup> TABDC nctivity Report 1997- Present, [www.tabdc.org](http://www.tabdc.org).

<sup>279</sup> Նույն տեղում:

<sup>280</sup> Նույն տեղում:



ակտիվ տնտեսական շփումները իրատեսական կդարձնեն քաղաքական հաշտեցման հնարավորությունները.<sup>281</sup> Հետագայում՝ 1999-ի դեկտեմբերին, «Թրքիշ դեյլի նյուզ» օրաթերթին տված հարցազրույցում, մեկնաբանելով Հայաստան կառավարած այցի արդյունքները, Սոյակը շեշտում է. «Հայաստանը ցանկանում է Թուրքիայի հետ ունենալ ջերմ և բարեկամական հարաբերություններ».<sup>282</sup> Միակ բարդ հիմնահարցը, ըստ Սոյակի, Հայոց ցեղասպանության բաց վերքն է.<sup>283</sup>

Ընդհանրապես ԹՀԳՁԿ-ի համար հեշտ չէ ուզիներ դանի Հայ-թուրքական հարաբերությունների խոչընդոտված, այն պարզ պատճառով, որ վերջիններս բավականին զգայուն են աշխարհաքաղաքական և դիվանագիտական ցանկացած տարուբերումների նկատմամբ: Դժվար է առաջ ընթանում կազմակերպության հիմնական ծրագրերի իրականացումը:

2001թ. մարտի 10-ին ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանյանի և ԹՀԳՁԿ համանախագահների հետ հերթական հանդիպման ժամանակ նշվել էր, որ Հայաստանի արտաքին գործերի գերատեսչությունը դեմ չէ Թուրքիայի արտգործնախարար Իսմայիլ Աեմի առաջարկած Հայաստան-Ադրբեջան-Թուրքիա եռակողմ ֆորմատով հանդիպմանը.<sup>284</sup>

Հայ-թուրքական հասարակական շփումների մյուս կառույցը՝ ԹՀՀՀ-ն, երկրորդային դիվանագիտության ամերիկյան մոդելի տեղայնացման փորձ էր: Հանձնաժողովի ստեղծումն ու գործունեությունը լայնորեն քննարկվեցին Հայաստանում, Սփյուռքում և Թուրքիայում: Համաձայն որոշ լավատեղյակ ազբյուրների, հանձնաժողովի ստեղծման բանակցություններն սկսվել են առնվազն 2001թ. դարնանը, սակայն նրա մասին բացիբաց հայտարարվեց միայն 2001թ. հուլիսի 9-ին.<sup>285</sup> Հաշտեցման հանձնաժողովի գոյառումը Հայաստանում և Սփյուռքում սառն ընդունելության արժանացավ: Թուրք հասարակական կարծիքը զուսպ-լավատեսական էր: Լավատեսությունը էր համակված նաև ամերիկյան արձագանքը: Չնայած Հայ հասարակության ժխտողական վերաբերմունքին, հանձնաժողովի հայ անդամները ծայրաստիճան ինքնավստահ էին:

<sup>281</sup> Noyan Tapan Newslime, 13/02/1998, <http://www.nt.am>

<sup>282</sup> Turkish Probe, Dec., 1999.

<sup>283</sup> TABDC activity Report 1997- Present. [www.tabdc.org](http://www.tabdc.org).

<sup>284</sup> AIM, 10 March, 2001.

<sup>285</sup> Թորք-հայկական հաշտեցման հանձնաժողովի աշխատանքներին անդրազարծել ենք Ա. Անուսյան, «Հայ-թուրքական երկխոսության նոր փորձ (Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի գործունեության մասին)», Երևան, 2003, աշխատությունում, ուստի կսահմանափակվենք սույ կ հանձնախմբի գործունեության համատու ներկայացմամբ: ԹՀՀՀ գործունեության մասին տե՛ս նաև, TARC, Terms of Reference, from <http://www.tarc.info>, 27/12/2004, ինչպես նաև Phillips, D, Unsilencing the Past, pp 10-40.

Վերոնշյալի լույսի ներքո, Թուրք-Հայկական Հաշտեցման Հանձնաժողովը միայն մեծ վերապահումով կարելի է համարել իրական հասարակական երկխոսություն: Առաջին իսկ օրվանից ԹՀՀՀ-ի նկատմամբ մոտեցումները միանշանակ չեն եղել: Հասարակական Հանձնախմբի ծպտյալ գործելատեղի և նրա շուրջ ստեղծված բարոյահոգեբանական մթնոլորտը խորացրին հետագա ձախողումները: Հայտարարելով, որ իրենց քննարկումների համար «տարուներ չկան», Հանձնաժողովականները ձեռք էին մեկնում այնպիսի բախտորոշ հարցերի, որոնք պահանջում էին բացարձակ պատասխանատու մոտեցում (ինչը որոշ դեպքերում լիովին բացակայում էր) և մասնագիտական հմտություններ: Ավելին, ԹՀՀՀ-ի գործունեությունը սկսեց անհարկի շահարկվել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի համատեքստում: Հանձնաժողովի հայ անդամները այդպես էլ չհասկացան, որ Թուրք գործընկերները ի զորու չեն հրաժարվելու տարիներ շարունակ իրենց իսկ որդեգրած ժխտման գազափարից: Թուրքերին էլ չհերիքեց քաղաքական խիզախություն՝ պատմության սեփական թյուրըմբռնումը հաղթահարելու համար: Առանցքային է նաև ԹՀՀՀ-ի աշխատանքներում Պետդեպարտամենտի ներգրավվածությունը: Ինչպես արդեն նշել ենք, տարածաշրջանային հետաքրքրություններից ելնելով, ԱՄՆ-ը մեծապես շահագրգռված էր ամերիկյան մոդելի «ստատուս քվո» ունենալ մեր աշխարհագրական գոտում: Միացյալ Նահանգներում հասկանում են, որ Հայ-ռուսական ռազմաքաղաքական ակտիվ համագործակցության կարևորագույն խթաններից մեկը Թուրքիայի կողմից Հայաստանին սպառնացող ռազմական ներխուժման վտանդն է: Ամերիկյան տեսանկյունից՝ Հայ-թուրքական Հաշտեցումը կթուլացնի պաշտոնական Երևանի կախվածությունը մոսկովյան թելադրանքից:

Եվ այսպես Թուրք-Հայկական Հաշտեցման Հանձնաժողովի Հիմնադրման մասին Հայտարարվեց 2001թ. հունիսի 9-ին: Իր ստեղծման պահին այն միավորում էր վեց թուրք և չորս հայ գործիչների: Հայկական կողմը ներկայացնում էին Ալեքսանդր Արզումանյանը (ՀՀ նախկին արտգործնախարար և ՀՀԾ կուսակցության առաջնորդ), Դավիթ Հովհաննիսյանը (1992-1998թթ. Սիրիայում ՀՀ նախկին դեսպան, Հատուկ Հանձնարարություններով դեսպան), Անդրանիկ Միհրանյանը (քաղաքագետ, Ռուսաստանի Հայերի միության վարչության անդամ) և Վան Գրիգորյանը (Ամերիկայի Հայկական համագումարի հոդաբարձուների խորհրդի նախագահ): Հաշտեցման ջատագովներն էին նախկին դեսպան Գյունդուզ Աքթանը, Բողազջի համալսարանի նախկին ռեկտոր Ուսթուն Էրզուղերը, ավիացիայի գեներալ-լեյտենանտ Շադի Էրզուվենչը, նախկին փոխարտգործնախարար, Մեծ Բրիտանիայում Թուրքիայի նախկին դեսպան Օզգեմ Սան-

բերկը, հոգեբան Վամիկ Վոլկանը, թուրքական արտաքին գործերի գերատեսչության նախկին ղեկավար Իլթեր Թուրքմենը: Հանձնախմբի կազմն ու անդամների թիվը հետագայում կրել են փոփոխություններ: Աշխատանքներն ի սկզբանե համակարգել է ամերիկացի բախումնարան Դեյվիդ Ֆիլիպսը:<sup>286</sup>

Ըստ մամուլի հրապարակումների և հանձնաժողովի անդամների տված հարցազրույցների, նախապատրաստական փուլն ընթացել է հուլիսի 2-ին և տևել է մի քանի ամիս: Մարտին և ապրիլի վերջմայիսի սկզբին Վիեննայում տեղի են ունեցել երկու աշխատանքային հանդիպումներ:<sup>287</sup>

Հանձնաժողովը բազում հարցականներ ծնեց, որոնցից մեկը նրա ստեղծման շարժառիթն էր: Այս հարցի վրա լույս սփռելու անհրաժեշտություն էլ թերևս ստիպեց, որ ԹՀՀ-ի հիմնադիր, նախագահող և զաղափարախոս Դեյվիդ Ֆիլիպսը թուրքական «Ռադիկալ» թերթում 2003թ. ներկայացնի կազմակերպության ստեղծման հրատապությունը: Իր հրապարակման մեջ նա փորձում է ապացուցել հայ-թուրքական հաշտեցման օգտակարությունը: Ըստ նրա, թուրքիայի պետական շահերից է բխում Հայաստանի հետ սահմանի վերաբացումը: Դ. Ֆիլիպսը կարծում է, որ նորմալ առևտրատնտեսական կապերը կուժեղացնեն թուրքիայի դիրքը տարածաշրջանում, որի համար կան իրավապայմանադրային բոլոր հիմքերը:<sup>288</sup>

Սառը պատերազմի ավարտից հետո, անդրադառնալով ամերիկյան շահերին, քաղաքագետ Ջրիգնև Բզեժինսկին իր «Շախմատային մեծ տախտակը» աշխատությունում Վաշինգտոնին առաջարկում է ավելի ակտիվ ներգրավվել համաշխարհային գործընթացներում: Հեղինակը մերձավոր-միջինարևելյան ու հարավկովկասյան տարածաշրջաններն անվանում է «Եվրասիական Բալկաններ»<sup>289</sup>, նկատի առնելով այստեղ առկա ազգային հակասությունների թնջուկը: Չնայած ԱՄՆ-ը տարածաշրջանից հեռու է (ինչը խոչընդոտում է գերակա դիրք ստանալուն), բայց և չափազանց հզոր է, որ չխառնվի այստեղ ծավալվող տեղաշարժերին<sup>290</sup>: Այս պայմաններում ամերիկյան շահերը պահան-

<sup>286</sup> Հատկանշական է, որ այս նախաձեռնությունը ոչ կառավարական մակարդակով բուրքերին և հայերին հաշտեցնելու ատուցին քայլը չէր. համաձայն «Երկիր» օրաթերթի, դեռևս 1970-ական բվականներին բուրքական կողմը փորձ է արել անջատ բանակցությունների մեջ մտնել ՀՅԴ-ի հետ, սակայն զաշնակցականները պնդել են, որ հրավիրվեն նաև Սփյուռքում գործող մյուս ավանդական կուսակցությունները: Անկարայի համար նրանց ատուք քաշած փակուղային պայմանները ծախողել են բանակցությունները, Երկիր. 18/07/2001:

<sup>287</sup> Նույն տեղում:

<sup>288</sup> Հայաստանը միջազգային դիվանագիտության և սոյնտական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, Երևան, 1972, էջ 523:

<sup>289</sup> Бжежинский З., Великая шахматная доска. М., 1999, стр. 149.

<sup>290</sup> Նույն տեղում:

Ջուժ են, որ ապահովվի այնպիսի իրավիճակ, երբ որևէ գերտերություն չկարողանա վերահսկել Կովկաս-Կենտրոնական Ասիա տարածաշրջանը, ուր համաշխարհային հանրությունը պիտի ֆինանսատնտեսական անարգել մուտք ունենա: Այս ամենը հնարավոր կդառնա միայն նավթամուղերի և ցամաքային տրանսպորտի այլ միջոցների անխափան աշխատանքի դեպքում, որոնք տարածաշրջանը պիտի կապեն համաշխարհային տնտեսական կենտրոնների հետ.<sup>291</sup>

ԹՀՀՀ-ի ստեղծումն, ի սկզբանե դժգոհություն էր առաջացրել հայկական հասարակական շրջանակներում ու ողևորել էր թուրքերին: Ըստ հանձնաժողովի թուրք անդամ Գյունդուզ Աքթանի, կառույցի ստեղծման գազափարը ծաղել էր 2000թ. աշնանը, երբ կտրուկ սրվել էին ԱՄՆ-Թուրքիա և Ֆրանսիա-Թուրքիա հարաբերությունները՝ կապված հիշյալ պետութային կողմից Հայոց ցեղասպանության փաստի քննարկումների, իսկ Ֆրանսիայի դեպքում նաև ճանաչման հետ.<sup>292</sup> Հանձնաժողովի մեկ այլ անդամի՝ Օզդեմ Սանբերքի վկայությամբ, իրենց նպատակը երկկողմ հարաբերություններում «նոր հորիզոններ բացելն է».<sup>293</sup> Թուրքական մամուլի տեղեկություններով, հանձնաժողովի գաղափարը ծնվել է ժնևում Հենրի Դունանտի Հումանիտար երկխոսության կենտրոնում անցկացված քննարկումների ընթացքում: Թուրքիայի նախկին արտգործնախարար Իլթեր Թուրքմենի կարծիքով, ԹՀՀՀ-ն պիտի բեկում մտցներ երկու ժողովուրդների հարաբերությունների մեջ:

«Թըրքիշ դեյլի նյուզը» նույն թվականի հուլիսի 11-ի համարում արդեն պաշտոնապես արձանագրեց հաշտեցման հանձնաժողովի ծնունդը: Գյունդուզ Աքթանը նշում է, որ թուրքական և հայկական քաղաքացիական հասարակությունը ներկայացնող մտավորականների մի խումբ հուլիսի 9-ին, ժնևում որոշել է սկսել երկխոսություն.<sup>294</sup> Այնուհետև նա բարձրաձայնում է այն իրողությունը, որ հանձնաժողովի անդամների տեսակետները ցեղասպանության փաստի վերաբերյալ տրամագծորեն հակադիր են. «Հանձնաժողովի թուրք անդամներից և ոչ մեկը 1915-1916 թվականների իրադարձությունները ցեղասպանություն չի համարում... Նմանապես մյուս

<sup>291</sup> Ուլազրավ է, որ նախագահական ընտրություններում հաղթանակ տանելուց հետո Չորջ Բուչ կրտսերի հանրասոցիալական վարչակազմը առանձնակի ակտիվություն ցուցաբերեց Արցախի հակամարտության խաղաղ կարգավորման նկատմամբ: Այդ համատեքստում էլ 2001թ. ապրիլին կազմակերպվել էին հայ-աղբրեքանական բանակցություններ Զի Վեսթում: Պետք չէ բացառել, որ Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի ստեղծումը սերտորեն կապված էր քիմեսթյան գործընթացի հետ

<sup>292</sup> Երկիր. 21/07/2001:

<sup>293</sup> Երկիր. 13/07/2001:

<sup>294</sup> Turkish Daily News, 11/06/2001.

կողմն ամբողջությամբ հավատացած է, որ իրադարձությունները իսկապես ցեղասպանություն էին»:<sup>295</sup>

Հոգվածադիրն անդրադառնում է երկկողմ հարաբերությունների վրա ազդող գործոններին՝ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցին և Կարսի պայմանագրի շուրջ տիրող անորոշությանը: Նա համոզված է, որ հաշտեցումն անհրաժեշտ է թուրքերին, քանզի նրանք մտահոգված են Ռուսաստանի աղգեցության լծակով, ինչն Անկարայի տեսանկյունից վտանգում է Անդրկովկասի մյուս հանրապետութայությունների անկախությունը: Ընդհանուր առմամբ թուրքական մամուլը նախաձեռնությունը համարել է ողջունելի:<sup>296</sup> Այդ են վկայում թուրքական լրագրային հրապարակումները, որոնք ներկայացնում են թուրք գործիչների տեսակետները: Օրինակ, «Միլլիյեթ» թերթը, խոսելով թուրք-ֆրանսիական հարաբերութայունների մասին, կրկին սևեռեց ուշադրությունը «Հայկական հարցի» վրա: Նշելով, որ այն ստվեր չպիտի գցի երկկողմ կապերի զարգացման վրա, միաժամանակ հոգվածադիրը նախազգուշացնում է, որ չպետք է սահմանել Հայոց եզեռնին առնչվող հարցադրումների շրջանակը: Կոչ անելով ամեն կերպ կանխել Հայոց ցեղասպանութայան թեմայի արծարծելումը, թերթը հիշեցնում է, որ Ֆրանսիայի կողմից ցեղասպանութայան ճանաչումից հետո Անկարան ոչինչ չկարողացավ ձեռնարկել:<sup>297</sup> Հանձնաժողովի ստեղծման անմիջական նախաձեռնությունը, ոչ առանց հիմնավոր փաստարկների, վերլուծարանների մեծամասնությունը կապում էր ԱՄՆ-ի Պետական դեպարտամենտի հետ, չնայած արված էր ամեն ինչ նման ենթադրությունները բացառելու համար: Հանձնաժողովի անդամների պնդմամբ, նախաձեռնողները Վիեննայի դիվանագիտական ակադեմիան և Ժնևի Հումանիտար ինստիտուտն են՝ մասնակցությամբ այլ հասարակական կազմակերպությունների:<sup>298</sup> Այս գործընթացում իրական դերակատարների ներգրավվածությունն ապացուցվեց ավելի ուշ, երբ «Կոնգրեսական հետազոտությունների ծառայությունը» իր 2001թ. հոկտեմբերի 2-ի «Թուրք-Հայկական հաշտեցման հանձնաժողովը և ԱՄՆ-ի դերը» հաղորդադրություն մեջ հրապարակեց, որ «ԱՄՆ-ի պետդեպարտամենտը ֆինանսական օժանդակություն է տրամադրում ԹՀՀՀ-ի գործունեությունը, ինչպես և այլ հասարակական ձեռնարկներ...»:<sup>299</sup> ԱՄՆ-ի Պետդեպարտամենտը ԹՀՀՀ-ին ֆինանսապես օժանդակել է անուղղակիորեն՝ Վաշինգտոնի ամերիկյան համալսարանի միջոցով: Վերջինս, հակամարտություննե-

<sup>295</sup> Նույն տեղում:

<sup>296</sup> Երկիր. 13/07/2001:

<sup>297</sup> Milliyet, 11/07/2001.

<sup>298</sup> Առավոտ. 14/07/2001:

<sup>299</sup> Ազգ. 16/10/2001:

րի կարգավորման ծրագրի շրջանակներում, դրամաշնորհի ձևով, գումարը փոխանցել է ԹՀՀՀ-ին:

Անդրադառնալով Հանձնաժողովի ստեղծման վերաբերյալ ձևավորված հասարակական կարծիքին, կոնգրեսական զեկուցագիրը փաստել էր, որ Հանձնաժողովի ստեղծման թուրքական արձագանքը «եղել է գերազանցապես դրական», մինչդեռ հայկականը «եղել է ավելի շատ բացասական, քան դրական»:<sup>300</sup>

Հայաստանի իշխանությունները հապաղեցին Հանձնաժողովի վերաբերյալ կարծիք հայտնել, և միայն հուլիսի 14-ին ՀՀ ԱԳՆ-ի խոսնակը բարձրաձայնեց պաշտոնական Երևանի տեսակետը, որում մասնավորապես ասվում էր. «ՀՀ արտաքին գործերի նախարարությունը բացարձակապես առնչություն չունի»:<sup>301</sup> Հայտարարությունում ասվում էր նաև, որ Հանձնաժողովի անդամ, Սիրիայում ՀՀ նախկին դեսպան Դավիթ Հովհաննիսյանը չի հանդիսանում ՀՀ ԱԳՆ ներկայացուցիչ: Հայաստանի պաշտոնական տեսակետը, բավական ուշացած, հնչեցվեց նաև ԱՄՆ-ում Հայաստանի Հանրապետության գեսպան Արման Կիրակոսյանի կողմից: Դեսպանը նշում էր, որ Հայաստանի իշխանությունները տեղեկացված են եղել նախաձեռնության մասին, սակայն չեն միջամտել գործընթացին: Միևնույն ժամանակ, Հայաստանյան իշխանությունների կարծիքով, Թուրքիայի հարաբերությունների բարելավումն ավելի արդյունավետ կլիներ երկու պետութայնների կառավարութայնների ուղղակի երկխոսության միջոցով: Իր հերթին ՀՀ նախագահի խոսնակը հայտարարեց, որ Հայաստանի բարձրագույն ղեկավարութայնը և անձամբ նախագահ Ռ. Քոչարյանը տեղյակ է եղել Հանձնաժողովի ստեղծման մասին և «չեն խոչընդոտել երկխոսությանը, քանզի հասարակական երկխոսութայնը համարում են ընդունելի»:<sup>302</sup>

ԹՀՀՀ-ի ստեղծումը քաջաբերող հրապարակումով հանդես եկավ ամերիկյան «Վաշինգտոն թայմսը», որտեղ հրապարակված «Թուրքիան և Հայաստանը ճիշտ ուղու վրա են» հաղորդագրութայնում մասնավորապես ասվում էր. «Հայ-թուրքական հարաբերութայնների ջերմացումն, անշուշտ, դրական ազդեցութայն կունենա Հայաստանի տնտեսութայն համար, քանի որ այսօր Թուրքիան շրջափակման մեջ է պահում Հայաստանը»: Անդրադառնալով Թուրք-հայկական հաշտեցման Հանձնաժողովի ստեղծմանը, թերթը նշում է, որ

<sup>300</sup>Նույն տեղում:

<sup>301</sup>Հայաստանի Հանրապետություն, 14/07/2001:

<sup>302</sup>Նույն Տապան, 13/07/2001: Հանձնաժողովի ստեղծման վերաբերյալ «Առավոտին» տված իսրայելագրություն որոշ պարզաբանումներ մտքրեց ԹՀՀՀ-ի անգամ Դավիթ Հովհաննիսյանը, նշելով, որ ԱԳՆ ղեկավարությունը տեղյակ է այդ գործընթացին. բայց ինքը մասնակցում է գոտ անձնական նախաձեռնությամբ: Առավոտ, 14/07/2001:

երկու երկրների հաշտության համար Թուրքիան պետք է բացի Օսմանյան կայսրության արխիվները՝ պարզելու ժամանակի իրադարձությունների ճշմարիտ պատկերը։<sup>303</sup> Նախաձեռնությունը ողջունել է նաև ԱՄՆ-ում լույս տեսնող անգլիալեզու «Արմինիըն Բիփոթերը»՝ այն որակելով որպես հայ-թուրքական հարաբերությունների զարգացման խթան։<sup>304</sup>

ԹՀՀՀ-ի ստեղծումը դրական ընդունելության արժանացավ միայն Թուրքիայում, ինչն ավելի քան զգուշավորեցնում էր։<sup>305</sup> Տարօրինակ էր նաև, որ հանձնաժողովի թուրք անդամները միաբերան պնդում էին, որ կողմերի մոտեցումների մեջ ոչինչ չի փոխվել։ Եթե հայերը չեն հրաժարվել ցեղասպանության իրենց «մեղադրանքներից», իհարկե, չէր փոխվել նաև թուրքական կողմի վերաբերմունքը։<sup>306</sup>

Այս և նմանօրինակ այլ հայտարարություններ հիմք հանդիսացան, որ հասարակական կարծիքն ավելի ամրանա իր այն համոզմունքի մեջ, թե թուրքական իշխանությունները փորձում են հանձնաժողովի աշխատանքների միջոցով վիժեցնել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցը։ Մասնավորապես ՀՅԴ «Ասպարեզ» օրաթերթի էլեկտրոնային տարբերակը թուրքերին մեղադրեց կեղծ հաշտեցման քողի տակ Հայոց եղեռնի հիմնահարցը տապալելու քաղաքականություն իրականացնելու մեջ։<sup>307</sup>

Հայաստանում հանձնաժողովի ստեղծումը խանդավառության ալիք չբռնկեց։ ԹՀՀՀ-ի ձևավորումը սփիռներով ընդունեց դաշնակցությունը՝ հայտարարելով, որ չի կարող լինել որևէ հաշտեցում առանց պատմական ճշմարտության ճանաչման։ ՀՅԴ Բյուրոյի հայտարարությունը մերժում էր ԹՀՀՀ-ի «առաքելությունը թե՛ ըստ էության, թե ըստ ձևի։ Կուսակցության համար սկզբունքորեն անընդունելի է հանձնաժողովի օրակարգը, որովհետև այնտեղ տեսնում ենք Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչելու հրամայականի շրջանցում կամ էլ նրա կարևորության թերադնահատում»։<sup>308</sup> Ավելին, ՀՅԴ-ն մեղադրում էր ՀՀ արտաքին քաղաքական

<sup>303</sup> Washington Times, 18/07/2001.

<sup>304</sup> Armenian Reporter, 10/07/2001.

<sup>305</sup> ԹՀՀՀ-ի ստեղծման վերաբերյալ բուրբակասի առաջին արձագանքները տե՛ս: Birand M. A., "Armenians Work, Turks Look On", Turkish Daily News, 14/07/2001. İtter K., "Greece Model Is Used In Setting up Commission Between Turks And Armenia", Turkish Daily News, 13/11/2001. İtter K., "An Historic Step For Both Turks and Armenians", Turkish Daily News, 12/07/2001. Koheri S., "Barış Zamani", Milliyet, 11/07/2001.

<sup>306</sup> Anadolu Ajansı, 11/07/2001.

<sup>307</sup> ԹՀՀՀ-ի աշխատանքների մասին մամուլի որոշ հրատարակումներ, տե՛ս, <http://www.asbarez.com/TARC> :

<sup>308</sup> Հայոց Աշխարհ, 27/07/2001:

գերատեսչությունը անգործության մեջ, քանզի իրենց տրամադրության տակ եղած տվյալների համաձայն, ՀՀ ԱԳՆ և անձամբ նախարար Օսկանյանը որոշակի մասնակցություն են ունեցել հանձնաժողովի ստեղծման գործում: Դաշնակցականներն արտաքին քաղաքական գերատեսչությունից պահանջեցին շատ արագ և կուռ հակադեցություն ցույց տալ Հայ Դատին ու պահանջատիրությանը հարվածող այդ նախաձեռնությանը: Նույնպիսի կոշտ դիրքորոշում որդեգրեցին խորհրդարանում ներկայացված մյուս քաղաքական կուսակցությունները, ԹՀՀ գործունեության նկատմամբ բացասաբար արտահայտվեցին նաև Ազգային ժողովում ներկայացված բոլոր խմբակցություններն ու պատգամավորական խմբերը:<sup>309</sup>

ԹՀՀ-ի ստեղծմանը բուռն արձագանքեցին նաև գիտական շրջանակները: 2001 հուլիսի 24-ին ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայում խնդրո առարկայի քննարկման ժամանակ ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանյանը ստիզված էր առաջին անգամ պարզաբանումներ տալ Հայաստանի Հանրապետության պաշտոնական դիրքորոշման մասին: Նա հայտարարեց, որ իր ղեկավարած գերատեսչությունը, ՀՀ կառավարությունը, առհասարակ պետությունը որևէ մասնակցություն չունեն հանձնաժողովի կազմակերպմանը: Նա հավելեց, որ մեր արտաքին քաղաքականությունը որևէ տարու չի գնում հայ-թուրքական երկխոսությունների վրա. «Նախկինում մենք ունեցել ենք բազմաթիվ երկխոսություններ տարբեր մակարդակներով, այդ թվում՝ պետական: Այնպես որ, երկխոսության խնդիրը մեզ համար ողջունելի է»:<sup>310</sup> ՀՀ արտգործնախարարը ևս մեկ անգամ հաստատեց, որ իրենք տեղյակ են եղել հանձնաժողովի ստեղծման աշխատանքներից և ասաց, որ եթե նույնիսկ փորձեն խոչընդոտել, միևնույն է, վերջինս կայանալու էր: Նա հնարավոր համարեց, որ «նման երկխոսություններով կարելի է անընդհատ հարցը ուշադրության կենտրոնում պահել: Ծիշտ է նաև այն պնդումը, որ հանձնաժողովի գոյությունը լծակ կարող է դառնալ Թուրքիայի ձեռքում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը կասեցնելու համար: Կարծում եմ բոլորս այստեղ համաձայն ենք, որ այս հանձնաժողովը ցեղասպանության խնդրի ճանաչման հարցում որևէ տեղաշարժ չի գրանցելու»:<sup>311</sup> Դրանից հետո ՀՀ արտգործնախարարությունը շահարկելու էր այն հարցը, որ թուրքերի հետ երկխոսությունը որևէ արդյունք չի տալիս: Իր այս հայտարարությամբ նախարարը ոչ միայն քոզազերծեց ամերիկյան մասնակցությունը

<sup>309</sup> Ժամանակ. 1/08/2001:

<sup>310</sup> Ազգ. 25/07/2001:

<sup>311</sup> ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության բանցարան-ինստիտուտի գիտական խորհրդի 2001թ. հունիսի 24-ի ընդհայնված նիստի արձանագրություն N 3, էջ 2:



Թուրք-Հայկական հաշտեցման գործընթացին, այլ նաև ասաց, որ հանձնաժողովի ստեղծման աշխատանքների նկատմամբ որդեգրել են հարկադրված կրավորականություն: Արտաքին քաղաքական գերատեսչությունը հավանաբար չէր հաշվարկել հնարավոր բացասական հետևանքները, որոնք կարող էր իր վրա կրել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման արշավը: Հայտարարությունն ապացուցում էր հայկական դիվանագիտության հաշտեցման քննարկումների վերաբերյալ տեղեկացվածությունը, սակայն, ըստ երևույթին ՀՀ ԱԳՆ-ն պատրաստ չէր եղել նաև դիմակայելու ԹՀՀՀ-ի նկատմամբ հասարակական բացասական նման սուր հակազդեցության: Օսկանյանը կարծիք հայտնեց, որ «միակ հնարավոր ճանաչումն առաջին հերթին ԱՄՆ-ի կողմից Հայոց ցեղասպանության ընդունումն է, երկրորդը՝ ՄԱԿ-ի: Այնպես որ, վերջապես թուրքերը զգան, որ որևէ դիմադրություն չեն կարող ցուցաբերել նման գործընթացի դեմ»:

Համաձայն նախարարի՝ ԹՀՀՀ-ի գործունեությունը հարաբերությունների բարելավման յուրատեսակ փորձաքար էր: Իհարկե, նրա քայքայիչ հետևանքները ի հայտ եկան ավելի ուշ: Ընդհանրապես հաշտեցման հանձնաժողովի վերաբերյալ արտահայտված դիրքորոշումները բազմազան էին: «Հայոց աշխարհ» օրաթերթը կարծիք հայտնեց, որ ոչ մի հանձնաժողով հայերին ու թուրքերին չի հաշտեցնելու: Պարբերականը հանգել էր ճշմարտացի եզրակացության, որ հաշտեցման հանձնաժողովի խնդիրը ոչ թե ներքին հայկական և թուրքական հասարակությունների, այլ արտաքին սպառման համար է, դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով: Հաշտեցման անհնարինությունն ակնհայտ է թեկուզ այն պատճառով, որ երկուստեք կարևորագույն նշանակություն ունեցող խնդրի՝ Հայոց ցեղասպանության ճանաչման շուրջ փոխըմբռնում չկա և չի կարող լինել:<sup>312</sup>

Հայ հասարակության մեջ հանձնաժողովի նկատմամբ ձևավորված բացասական վերաբերմունքը ստիպեց, որ ԹՀՀՀ-ի հայազգի անդամներ հանդես գան հատուկ հայտարարությամբ, ինչը նրանք արեցին 2001թ. օգոստոսի 2-ին:<sup>313</sup> Հեղինակով ավանդական կուսակցությունների մոտեցումները, հանձնաժողովի հայ անդամները խոստում տվեցին, որ հետագայում ավելի հրապարակային են գործելու:

Ինչևէ, սեպտեմբերի 23-25-ին Ստամբուլում կայացավ ԹՀՀՀ երկրորդ հանդիպումը, որին ներկա էին հանձնաժողովի բոլոր անդամները: Հավաքի ընթացքում քննարկվեց ժնեյան հանդիպումից հետո ունեցած առաջընթացը, կատարվեց մամուլի հրապարակումներ

<sup>312</sup> Հայոց Աշխարհ, 17/07/2001:

<sup>313</sup> Ազգ, 2/08/2001:

րի վերլուծութիւն, ընդունվեցին ՁԼՄ-ների հետ շփումների «կառուցողական սկզբունքները»: Կազմակերպվեցին տարաբնույթ հանդիպումներ թուրքական հասարակութայն տարբեր շերտերի հետ: Ընթացակարգային հարցերի քննարկման շրջանակում հանձնաժողովը որոշեց իր հաջորդ՝ Նյու-Յորքում կայանալիք հանդիպման օրակարգը: Քննարկվեց նաև ԹՀՀՀ-ի հայ անդամների թվի ավելացման խնդիրը: Որոշում էր ընդունվել դիմել Անցումային արդարադատութայն միջազգային կենտրոնին իրավական խնդիրների շուրջ սեմինար կազմակերպելու խնդրանքով, որը պիտի ներառեր նաև հաշտեցման միջազգային մոդելների շուրջ բանավեճ: Ուշադրութայն էր արժանացել նաև հաշտեցման հոգեբանական խնդիրների հետազոտական խմբի ձևավորման հնարավորութիւնը, ԹՀՀՀ-ի քարտուզարութայն և համացանցային կայքի ստեղծումը, ինչպես նաև կառույցի զարգացման քաղաքականութիւնը.<sup>314</sup> Հանդիպումը կազմակերպվել էր «Թուրքիայի անտեսական և սոցիալական ուսումնասիրութիւնների հիմնադրամի» և Թուրք-հայկական գործարարութայն զարգացման կոմիտեի համատեղ ջանքերով.<sup>315</sup> Բացի հանձնաժողովի անդամներից, հրավիրվել էին պատմաբաններ, հրապարակախոսներ, լրագրողներ: Նույն աղբյուրի համաձայն, հրավիրվածների մեջ են եղել հայկական հարցով կամ հայ-թուրքական երկխոսութայն խնդիրներով զբաղվող քաղաքագետներ ու ուսումնասիրողներ նախկին դեսպաններ Քամուրան Գյուրունին, Շյուքրու Էլեքզաղին, ինչպես նաև Օմեր Էնզին Լյութեմին, որը միաժամանակ Անկարայում գործող «Հայկական ուսումնասիրութիւնների կենտրոնի» տնօրենն էր: Մասնակից պատմաբաններից հիշատակութայն արժանի են պրոֆեսորներ Մեթե Թունչայը, Միմ Քեմալ Օքեն, Էնվեր Քոնուքչուն: Հրապարակախոսներից և լրագրողներից թերթն առանձնացնում է Մյուսթազ Սոյսալին, Սամի Քոհենին, «Հուրիյեթի» գլխավոր խմբագիր Էրթուզրուլ Օզքյոքին, Թոքթամիշ Աթեշին ու Թահա Աքյոլին և Մեհմեդ Ալի Բիրանդին: Նշվում էր նաև, որ հանդիպմանը հրավիրված էին նաև պոլսահայ քաղաքագետ Էթիեն Մահչուփյանը, «Մարմարա» թերթի գլխավոր խմբագիր Ռոբեր Հատտեճյանը, «Ժամանակի» խմբադրապետ Արա Քոչունյանը և «Ակօսի» գլխավոր խմբագիր Հրանտ Դինքը.<sup>316</sup>

<sup>314</sup> <http://www.eumap.org/library/datab/Documents/1006251077.96/892tarc.php>.

<sup>315</sup> Ազգ. 29/09/2001:

<sup>316</sup> Ազգ. 29/09/2001:

\* Ի դեպ, հանդիպման բուրք մասնակիցները հիմնականում աչքի էին ընկնում հայ-թուրքական հարաբերությունների զարգացման ոլորտում ունեցած ակնսոռու «վաստակով»: Զամուրան Գյուրունը հայոց պատմության նենգափոխման և ցեղասպանութայն միտմանը միտված, բուրքական պիտակն շրջանակներում «դասական» դարձում «Հայկական բորսաբանակ» աշխատութայն հեղինակն է: Օմեր Էնզին Լյութեմը պետական հովանավորութայն վայելող

Ըստ «Ազատություն» ռադիոկայանի, Հանձնաժողովի անդամներին Հաջողվել էր «նկատելի առաջընթաց» գրանցել, որոշվել է ավելացնել Հայ անդամների թիվը և Հաջորդ Հանդիպումը 2001թ. նոյեմբերի 18-21-ին Հրավիրել Նյու Յորքում: Հիշեցնենք, որ նախապես ծրագրված էր հրրորդ Հանդիպումն անցկացնել Երևանում:

Թուրք-Հայկական հաշտեցման Հանձնաժողովի շուրջ բանավեճն ավելի բորբոքվեց, երբ Հոկտեմբերի 1-ին, վկայակոչելով Թուրքական «Հուրիյեթը», «Արմենայրեսը» հաղորդեց, որ Գերմանիայի խորհրդարանը հրաժարվել է քննության առնել Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը: Գերմանիայի արտգործնախարարությունը պնդել էր, որ այդ քննարկումը ծանր հարված կհասցնի Թուրք-գերմանական կապերին և պատգամավորներին կոչ է արել մերժել Հայոց ցեղասպանության ճանաչումը քննարկելու դիմումը: Վերջինիս ստորագրել էր 14 Հազար մարդ.<sup>317</sup> Թուրք պատմաբան Թ. Աքչամբ անդրադառնալով ԹՀՀՀ-ի գործունեությանը, «Ակոսի» Հոկտեմբերի 19-ի համարում հանդես եկավ ուշադրամ տեսակետով: Նա նշեց, որ ԹՀՀՀ մասին խոսելը գարձել է անիմաստ և Հոգնեցուցիչ: Աքչամբ կարծիքով, Հանձնաժողովի անդամները կատարել են Հայեցակարգային սխալներ, որոնք ի չիք են դարձնում երկխոսության Հնարավորությունը. «Քանի դեռ Հանձնաժողովը չի բացահայտել իր նպատակները, այն ընկալվելու է ոչ թե որպես երկու Հասարակությունների միջև առկա խնդիրների լուծմանը նպաստող կառույց, այլ Հայոց ցեղասպանության օտարերկրյա խորհրդարաններում քննարկումը խափանող խումբ»:<sup>318</sup> ԹՀՀՀ-ի գործունեությունը չվիժեցնելու վարկածը առիթ դարձնելով Եվրախորհրդարանը 2001թ. Հոկտեմբերի 25-ին մերժի Հայոց ցեղասպանության Թուրքիայի կողմից ճանաչումն այդ երկրի Եվրամիությանն անգամակցելու նախապայման դիտելու դրույթը: Ցեղասպանության ճանաչման և այդ առնչությամբ երկխոսության կարևորության մասին առաջարկը մերժվել է ձայների 149 կողմ և 275 դեմ հարաբերակցությամբ.<sup>319</sup> Եվրոպական խորհրդարանականների որոշումը Թուրքերը համարեցին ԵՄ-Թուրքիա հարաբերություններում պաշտոնական Անկարայի լուրջ հաջողութ-

Եվրասիական ուսումնական հետազոտությունների կենտրոնին կից Հայկական ուսումնասիրությունների ինստիտուտի տնօրենն է. այս հաստատությունը, որպես ուրացության պետական քաղաքականություն իրագործող, հիմնվել է 2000-ի աշնանը, երբ ԱՄՆ Կոնգրեսում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը սպառնալից շափեր ընդունեց: Ցեղասպանության ժխտման գաղափարախոսության մշակման մեջ որոշակի ներդրում ունի նաև Սիմ Բենալ Օրեն, որը հայտնի է իր «Հայկական հարցը 1914-1923թթ.» աշխատությամբ:

<sup>317</sup> Արմենայրես. 1/10/2001 <http://www.armenpress.am>:

<sup>318</sup> Agos. 19/10/2001.

<sup>319</sup> Նոյյան Տապան, 25/10/2001 <http://www.nt.am>:

յուէր.<sup>320</sup> Չնայած սեփական գործունեութեան ակներև բացասական արդյունքներին, Հայ Հանձնաժողովականները համառու՞մ էին: ԹՀՀՀ-ի շուրջ առկա շահարկումները հանգեցրին նրան, որ մինչ այդ հարաբերականորեն չեզոք դիրքերից հանդես եկող Հայաստանի արտաքին գերատեսչութեան ղեկավար Վ. Օսկանյանը նոյեմբերի 27-ի մամուլի ասուլիսում խստորեն պահանջեց, որ «Թուրք-Հայկական հաշտեցման Հանձնաժողովի» Հայաստանցի մասնակիցները գնահատական տան վեցամսյա իրենց գործունեութեանը, «տեսնեն ինչ դրական և բացասական գործոններ, ինչպիսի արդյունքներ կան, եթե կան, փորձեն այս բոլորը միջինի վրա դնել և որոշել հաջորդ քայլերը»:<sup>321</sup> ԹՀՀՀ-ի էվոլյուցիայի հաջորդ փուլը պիտի դառնար Հանձնաժողովի նոյեմբեր ամսին Նյու Յորքում նախատեսված Հերթական Հանդիպումը: Նիստից առաջ, ասվում էր, թե Հանձնաժողովը համայրվելու է Հինգերորդ Հայ անդամով: «Առավտին» լուրեր էին Հասել, որ խոսքը «Նուվել դ'Արմենի» ամսագրի խմբագիր Արա Թորանյանի մասին է: Սակայն նյույորքյան Հանդիպմանը մասնակցեց ոչ թե նա, այլ Հոգեբան Անի Գալայլյանը՝ անորոշ կարգավիճակով:<sup>322</sup> Հիշյալ Հանդիպումը սկսվեց նոյեմբերի 18-ին: Նյու Յորքում անցկացված Հայ-թուրքական հաշտեցման Հանձնաժողովի նիստի մասնակիցները որոշ ժամանակ որևէ հաղորդագրութեան չէին տարածում արդյունքների մասին: Հետագայում պարզ դարձան մանրամասները: Անդրանիկ Միհրանյանի հավաստմամբ՝ Հանդիպումն անցել է լարված մթնոլորտում, «որովհետև թուրքական կողմի մասնակիցները որոշ Հայտարարութեաններ էին արել, որոնք վնասել էին և Հանձնաժողովին, և մանավանդ շատ վատ լույսի տակ էին ցույց տվել Հայկական կողմը և ընդհանրապես Հանձնաժողովի աշխատանքի ապագան»: Այդ պատճառով Հայկական պատվիրակները շատ կտրական դրեցին հարցը. «Եթե չլինի իրական առաջընթաց, և կամ Հանձնաժողովի աշխատանքը որևէ կերպ խանգարի ցեղասպանութեան ճանաչմանը միջազգային առյանների կողմից, ապա Հայկական կողմը թերևս մտածի Հանձնաժողովի աշխատանքի կասեցման մասին»:<sup>323</sup>

Ձուգահեռարար Հայաստանի ԱԳ նախարար Վարդան Օսկանյանը Լոս Անջելեսում հրավիրած իր ասուլիսում կրկին ասել էր, որ Հայաստանի իշխանութեանները հորդորում են ԹՀՀՀ-ի Հայաստանցի անդամներին՝ գնահատել իրենց գործունեութեանը և որոշել, արդյոք պե՞տք է, շարունակել համագործակցութեանը: Նա նշել է, որ

<sup>320</sup> Ազգ. 27/10/2001:

<sup>321</sup> Ազգ. 27/11/2001:

<sup>322</sup> Առավոտ, 8/12/2001:

<sup>323</sup> Նոյյան Տապան, 21/11/2001, <http://www.nt.am> :

Հայաստանի կառավարությունը չի խառնվում Հանձնաժողովի աշխատանքին, այն գործում է անհատական նախաձեռնություններով:<sup>324</sup> Նոյեմբերի 28-ին «Ազատություն» ռադիոկայանը Հաստատեց, որ Հանդիպումն անցել է բավական լարված մթնոլորտում, և որ կողմերը համաձայնել են դիմել Անցումային արդարադատության միջազգային կենտրոնին, Հանձնաժողովի նախագահոդ Դեյվիդ Ֆիլիպսի ձևակերպմամբ, «20-րդ դարակզբի իրադարձությունների նկատմամբ 1948 թվականի Ցեղասպանության մասին կոնվենցիայի կիրառելիության վերաբերյալ» եզրակացություն տալու խնդրանքով: Նոյեմբերի 26-ին Ֆիլիպսը Հայտարարել էր, որ Հաջորդ Հանդիպման ընթացքում հաշվի կառնվի ԱԱՄԿ-ի եզրակացությունը: Ըստ ռադիոկայանի, բախման պատճառ էր Հանդիսացել Հանձնաժողովի Հայ անդամների սպառնալիքը՝ սառեցնել իրենց մասնակցությունը, քանի որ իրենք Հասարակական քննադատության ուժեղ կրակի տակ էին ընկել այն բանից հետո, երբ գերմանական խորհրդարանն ու ԵՄ խորհրդարանը ԹՀՀՀ-ի գործունեությունը առիթ էին ծառայեցրել՝ մերժելու ցեղասպանությունը դատապարտող բանաձևերը: Իրենց Հերթին, Թուրք անդամները պնդել էին, որ երբեք 1915-ը չեն կոչի ցեղասպանություն:<sup>325</sup> Մեկնաբանելով Հանձնաժողովի այդ որոշումը, Ա. Միհրանյանն «Ազատություն» ռադիոկայանին ստաց, որ «Անցումային շրջանի արդարադատության միջազգային կենտրոնին» իրենց դիմումը չի վերաբերում այն հարցին՝ Ցեղասպանություն եղե՞լ է, թե ոչ, այլ՝ «Հնարավոր է, որ 1948-ի ՄԱԿ-ի Ցեղասպանության մասին կոնվենցիան կիրառելի լինի դարակզբին Թուրքիայում տեղի ունեցած իրադարձությունների նկատմամբ»: Նա նշել է նաև, թե Թուրքական կողմը բացառել է նույնիսկ «ցեղասպանություն» բառի գործածությունը ընդհանուր Հայտարարագրի մեջ. «Ասացին, թե դա կդժվարացնի իրենց վերագարձը Թուրքիա, իրենք կընկնեն Հասարակական կարծիքի հարվածի տակ»:<sup>326</sup> Նոյեմբերի 30-ին «Ազատությունը» նոր մանրամասներ հաղորդեց ԹՀՀՀ-ի Հանդիպման մասին. «1915թ. Ցեղասպանության ուսումնասիրությունը, որն անցկացվելու է Հայ-Թուրքական հաշտեցման Հանձնաժողովի խնդրանքով, այդ նախաձեռնության կարևոր տարրերից մեկն է դառնալու»:<sup>327</sup>

Դեկտեմբերի 11-ին սակայն, Հանձնաժողովի Հայ անդամները Հանդես եկան համատեղ Հայտարարությամբ, որով առժամանակ սառեցնում էին իրենց անդամակցությունը ԹՀՀՀ-ին, քանզի Հանձնա-

<sup>324</sup> RFE/RL Armenia Report 28/11/2001.

<sup>325</sup> RFE/RL Armenia Report 28/11/2001.

<sup>326</sup> Մտավոտ, 1/12/2001:

<sup>327</sup> RFE/RL, Armenia Report, 30/11/2001.

ժողովի թուրք անդամները Անցումային արդարադատութեան միջազգային կենտրոնին միակողմանիորեն Հանձնարարել են դադարեցնել նախապես Համաձայնեցված՝ 1948 թվականի ՄԱԿ-ի ցեղասպանութեան մասին կոնվենցիայի՝ Հայոց ցեղասպանութեան նկատմամբ կիրառելիութեան վերաբերյալ ուսումնասիրութեանները: Ուստի, Հանձնաժողովի Հայ անդամները Հայտարարեցին իրենց աշխատանքների դադարեցման մասին.<sup>328</sup>

Թուրք Հանձնաժողովականների նման վարքագիծը վերստին սպացուցեց, որ նրանք ամեն գնով առաջ են տանելու ցեղասպանութեան ժխտման իրենց կարծի դիրքորոշումը: Պարզ դարձավ նաև, որ ի չիք են դառնում ԹՀՀՀ Հայ անդամների այն պնդումները, թե նրանք ձևավորված թիմ են: Հայագգի Հանձնաժողովականները չէին տիրապետում Հանձնաժողովի ներսում տիրող իրավիճակին. իրենց քայլով թուրքերը բոլորին փաստի առաջ կանգնեցրեցին:

Նյու Յորքում ԹՀՀՀ-ի նոյեմբերին անցկացված նիստը և Հայ անդամների գործունեութեան կասեցումը լայն արձագանք գտավ թուրքական մամուլում, ընդ որում դրա հիմքում ընկած պատճառները յուրովի մեկնաբանութեան էին արժանանում: ԹՀՀՀ-ի փլուզման մեջ թուրքական կողմի մեղքը չի տեսնում նաև թուրք Հետազոտող Քամեր Քասրմը, որն այդ նախաձեռնութեան տապալման ողջ պատասխանատվութեանը բարդում է բացառապես Հայերի վրա.<sup>329</sup> Այլ կարծիքի էր, սակայն, Հանձնաժողովի թուրք անդամ Ուսթուն Էրզուդերը, ով Հանձնաժողովի աշխատանքների ստեղծումը համարում էր զուտ տեխնիկական հարց.<sup>330</sup>

Շարաթներ անց, Վ. Օսկանյանը անթաքույց ուրախութեամբ հիշեցրեց. «Հայաստանի և Թուրքիայի միջև հիմնարար խնդիրները կարելի է լուծել միայն պետական մակարդակով... Սեպտեմբերի 11-ից Հետո ձևավորված միջազգային քաղաքական միջավայրը մեկ անգամ ևս Հնարավորութեան է ընձեռում մեր հարևան երկրին՝ վերագնահատել իր տարածաշրջանային կողմնակալ քաղաքականութեանը և լուրջ քայլեր ձեռնարկել Հայ-թուրքական հարաբերութեաններում էական տեղաշարժ կատարելու ուղղութեամբ».<sup>331</sup>

ԹՀՀՀ-ի գործունեութեան առաջին լուրջ խափանման նկատմամբ ԱՄՆ-ի տեսակետն արտահայտեց ՀՀ-ում ամերիկյան դեսպան

<sup>328</sup> Տարեգրք, 11/12/2001. տես [www.taregir.am](http://www.taregir.am) ևս, Սուվոն, 13/12/2001:

<sup>329</sup> Kasım K, Türk-Ermeni Barış Komisyonu: Kısa Süren Diyalog Girişimi, Ermeni Araştırmaları, 4/2001, [http://www.eraren.org/eng/articles/turkish\\_armenianreccomamisopp.htm](http://www.eraren.org/eng/articles/turkish_armenianreccomamisopp.htm).

<sup>330</sup> RFE/RL, 18/01/2002.

<sup>331</sup> Ազգ. 9/1/2002:

Ջ. Օրդուեյը, ասելով, որ ինքը Հայ-թուրքական Հարաբերությունների հեռանկարին նայում է լավատեսորեն.<sup>332</sup>

Այս գործընթացներին զուգահեռ, փետրվարի 28-ին Եվրախորհրդարանը Հաստատեց «Կանաչների» խմբի շվեդ պատգամավոր Պեր Գարտոնի պատրաստած «Հարավկովկասյան զեկուցագիրը», որը կոչ էր անում թուրքական իշխանություններին ճանաչել Հայոց ցեղասպանությունը: «Եթե մեկուկես միլիոն Հայ սպանվել է՝ դրա անունը ցեղասպանություն է»<sup>333</sup>, Հայտարարեց Պեր Գարտոնը՝ նշելով, որ չի ընդունում թուրք ղեկավարների դիրքորոշումը, որոնք ընտրել են ցեղասպանությունը ուրանալու ուղին: «Թըրքիչ դեյլի նյուս» օրաթերթի վկայությամբ, թուրքական որոշ Համալսարանների ուսանողներ դատապարտել են Եվրախորհրդարանի ընդունած որոշումը: Ելույթ ունենալով երկու տասնյակից ավելի ուսանողների առջ, Ստամբուլի Համալսարանի ուսանող պրոֆեսոր Քեմալ Ալեմդարողլուն սուր քննադատության ենթարկեց Եվրախորհրդարանին և նշեց, որ «այսպես կոչված» ցեղասպանությունը գիտականորեն հիմնավորված չէ:<sup>334</sup> Ի արձագանք՝ «Սաբահ» թերթը հրատարակեց իր Համարձակ դիրքորոշումը. քննադատության փոխարեն ժամանակն է Հասկանալ խնդիրը, ինչու չէ, նաև խոստովանել սեփական սխալները.<sup>335</sup>

Սակայն, արդեն 2002թ. գարնանը սկսվում են ԹՀՀՀ-ն վերականգնանցներու աշխատանքները և արդեն հունիսի 21-ի Համարում «Ակօսը» տեղեկացնում էր, որ Հաշտեցման Հանձնաժողովի անդամների կՀանդիպեն հուլիսի 10-13-ը Բողրումում:<sup>336</sup> «Ակօսը» պարզաբանել էր, որ «չնայած Հայտարարություններին, թե Հանձնաժողովի այն անդամները Հաշտեցման Հարցում դժվարություններ ունենալու դեպքում, պետք է հեռանան և նրանց փոխարեն նշանակվեն նորերը, բողրումյան Հանդիպման ժամանակ նախատեսվում է նախկին անդամների մասնակցությունը»<sup>337</sup>:

Հետագայում, ԹՀՀՀ անդամ Դավիթ Հովհաննիսյանի՝ «Արմինֆո» գործակալությանը տված Հարցազրույցից պարզ դարձավ, որ Բողրումում քննարկվել են նախորդ Հանդիպումների արդյունքները: Կատարվել էր վերլուծական աշխատանք, արժարժվել են մի քանի խնդիրներ, այդ թվում՝ Հայոց ցեղասպանության ճանաչումը, երկաթուղու ապաշրջափակման և երկկողմ տնտեսական կապերի Հաստատ-

<sup>332</sup>Ազգ. 11/1/2002:

<sup>333</sup>Նոյյան Տասյան, 12/03/2002, <http://www.nt.am>:

<sup>334</sup>Turkish Daily News, 5/03/2002.

<sup>335</sup>Sabah, 1/03/2002.

<sup>336</sup>Agos, 21/6/2002.

<sup>337</sup>Նոյյան տեղում:

ման Հնարավորությունները, Աղթամարի և Անիի ճարտարապետական Հուշարձանների վերականգնման Հարցը.<sup>338</sup>

Հանձնաժողովի անդամները նաև վերահաստատել են իրենց որոշումը՝ դիմելու Անցումային արդարադատության միջազգային կենտրոնին՝ Հայոց ցեղասպանության նկատմամբ 1948թ. ՄԱԿ-ի Ցեղասպանության մասին կոնվենցիայի Համապատասխանության Հայցով, այդ առնչությամբ ընդունվել է փոխըմբռնման Հուշագիր<sup>339</sup>: ԹՀՀՀ-ն, սակայն, չէր կատարել Հիմնադիր փաստաթղթի պահանջը՝ իր իսկ աշխատանքների գնահատումը, որն ըստ այդ փաստաթղթի պիտի արվեր Հանձնաժողովի ստեղծումից մեկ տարի հետո:

2002թ. սեպտեմբերի 10-ին Հանձնաժողովի թուրքական և Հայկական կողմերը Անցումային արդարադատության միջազգային կենտրոն են ներկայացրել զեկուլյցներ, որոնց հիման վրա պիտի կատարվեր վերլուծությունը:

Հայ-թուրքական Հաշտեցման Հանձնաժողովի բողոքումյան Հանդիպումը մամուլում Հպանցիկ լուսարանվեց, իսկ ԹՀՀՀ-ի ակտիվ գործունեության Հաջորդ փուլը ձգվեց տվեց մեկ ամբողջ տարի, կապված Թուրքիայում և Հայաստանում Համապատասխանարար խորհրդարանական ու նախագահական ընտրությունների և տարածաշրջանային արմատական զարգացումների հետ:

2003թ. փետրվարի 12-ին, վկայակոչելով «Ազատություն» ռադիոկայանի փետրվարի 10-ի Հաղորդումը, «Արմինֆո» գործակալությունը Հայտնեց, որ ԱԱՄԿ-ն ավարտել է Հետազոտությունը վերոնշյալ խնդրի շուրջ:<sup>340</sup> ԱՄՆ-ում գործող Անցումային արդարադատության միջազգային կենտրոնը (ԱԱՄԿ), իր կանոնադրության Համաձայն, օժանդակում է պետություններին՝ մարդու իրավունքների խախտումների և զանգվածային բռնաճնշումների դեմ պայքարում:<sup>341</sup> Կաղմակերպությունը, որը ստեղծվել է 2001թ., գլխավորում էր Ալեքս Բորեաինը՝ Հարավային Աֆրիկայի արդարության և Հաշտեցման Հանձնաժողովի նախկին փոխնախագահը:

Ի պատասխան ԹՀՀՀ գիմումին, կենտրոնի ընդունած Հուշագրում մասնավորապես ասվում է, որ այն նախապատրաստվել է «իրավաբանական խորհրդատուների անկախ խմբի կողմից, Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի խնդրանքով»:

<sup>338</sup> Ազգ. 17/7/2002:

<sup>339</sup> Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին Միավորված Ազգերի Կազմակերպության կոնվենցիայի կիրառելիությունը քասնբորդ դարի սկզբին տեղի ունեցած իրադարձությունների նկատմամբ: Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի համար պատրաստված իրավական վերլուծություն, 10/02/2003, էջ 1:

<sup>340</sup> Արմինֆո, 12/2/2003, <http://www.arminfo.am>:

<sup>341</sup> Ավելի հստակմանալի տե՛ս Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի համացանցային կայքը, <http://www.ictj.org>:



Թուրք-Հայկական Հաշտեցման Հանձնաժողովի 2002թ. Հուլիսի 12-ի Փոխըմբռնման Հուշագրի և 2002թ. սեպտեմբերի 10-ի ԹՀՀՀ-ի անդամների ներկայացրած զեկուլյցների Հիման վրա, որոնցով Հայցվում էր անաչառ և անկախ վերլուծություն՝ քսաներորդ դարի սկզբին տեղի ունեցած իրադարձությունների նկատմամբ Ցեղասպանության Հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին Միավորված Ազգերի Կազմակերպության Կոնվենցիայի կիրառելիության վերաբերյալ»<sup>342</sup>:

Հուշագիրը փաստորեն հաստատում է, որ Ցեղասպանության մասին կոնվենցիան իր դրույթներով կիրառելի չէ այն գործողությունների նկատմամբ, որոնք տեղի են ունեցել 1951թ. Հունվարի 12-ից առաջ, քանզի միջազգային իրավունքն առհասարակ արգելում է պայմանագրերի հետադարձ կիրառումը: Եզրակացության Հեղինակները շեշտում են, որ ոչ Կոնվենցիան, ոչ էլ նրա նախապատրաստական փաստաթղթերը դրա պայմանների հետադարձ կիրառության Հնարավորությունն ի Հայտ չեն բերում:

Երկրորդ խնդիրը, որ լուծում է Հուշագիրը. «Կատարել վերլուծություն՝ արդյո՞ք «ցեղասպանություն» եզրն, ինչպես այն սահմանված է Կոնվենցիայում, կարող է Համապատասխանաբար կիրառվել (ա) ընդանուր առմամբ բնութագրելու Համար քսաներորդ դարի սկզբին տեղի ունեցած իրադարձությունները և (բ) բնութագրելու այդ իրադարձությունները»<sup>343</sup>: Այս Հարցում ԱԱՄԿ-ի վերլուծաբանների կարծիքը Հետևյալն է. «Ամենապատճառաբանված Հետևությունը, որին կարելի էր Հանգել վերը նշված զանազան Հաշվետվություններից այդ իրադարձությունների վերաբերյալ այն է, որ, չնայած մեծ թվով «բարեպաշտ թուրքեր»<sup>344</sup> միջամտել են ի պաշտպանություն Հայերի, այդ իրադարձությունների առնվազն որոշ իրականացնողներ գիտեին, որ իրենց գործողությունների հետևանքը լինելու էր Արևելյան Անատոլիայի Հայերի ամբողջությամբ կամ մասամբ ոչնչացումը, որպես այդպիսիք կամ գործել են այդ նպատակին Հասնելու դիտավորությամբ, և ուստի ունեցել են ցեղասպանությունը բնորոշելու Համար պահանջվող մտադրություն: Այսպիսով, կարելի է

<sup>342</sup> Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին Միավորված Ազգերի Կազմակերպության կոնվենցիայի կիրառելիությունը նշվ. աշխ., 10/02/2003, էջ 1:

<sup>343</sup> Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին Միավորված Ազգերի Կազմակերպության կոնվենցիայի կիրառելիությունը, նշվ. աշխ., էջ 6:

<sup>344</sup> Զանի որ ԱԱՄԿ-ն չի իրականացրել անկախ փաստական հետազոտություն, ապա անգամ սկզբնաղբյուրների մեջ փորձել է սրահայանել հավասարակշռություն: Նշելով մի կողմից հայկական, մյուս կողմից բուրբակյան սկզբնաղբյուրներ այս դեպքում, Glastris P., Armenia's History, Turkey's Dilemma, Wash. Post, March 11, 2001, at B01; Zoryan Institute, Turks Who Saved Armenians: An Introduction (rev. ed.),

հասանելի է՝ [http://www.zoryaninstitute.org/Table\\_Of\\_Contents/genocide\\_docs\\_turksiatro.htm](http://www.zoryaninstitute.org/Table_Of_Contents/genocide_docs_turksiatro.htm)

ասել հետևյալը. քանի որ վերը սահմանված մյուս երեք տարրերը հստակորեն հաստատված են, իրադարձությունները, հավաքականորեն դիտարկված, պարունակում են ցեղասպանության հանցագործության, ինչպես այն սահմանված է Կոնվենցիայում, բոլոր տարրերը, և իրավագետները, քաղաքական գործիչները, լրագրողները և այլ անձինք արդարացված կլինեն՝ շարունակելով դրանք այդպես որակել»:<sup>345</sup>

ԱԱՄԿ-ն հարված էր հասցնում Հայոց ցեղասպանության ժխտման թուրքական քաղաքականությանը, նշելով, որ «Թուրքիայի կառավարությունը պնդում է, թե որևէ ուղղակի ապացույց չի ներկայացվել ցուցադրելու համար, որ որևէ օսմանյան պաշտոնյա ջանում էր բնաջնջել օսմանյան հայերին: Իրադարձություններին օսմանյան պաշտոնյաների մասնակցության մասին հաճախակի վկայությունների լույսի ներքո կցանկանայինք փաստել, որ ցեղասպանության ճանաչումը իրավական առումով կախված չէ պետական դերակատարների մասնակցությունից: Ընդհակառակը, Ցեղասպանության մասին կոնվենցիան հաստատում է, որ «ցեղասպանություն կատարողները պետք է պատժվեն անկախ այն բանից՝ նրանք «սահմանադրորեն պատասխանատու ղեկավարներ են, պետական պաշտոնյաներ, թե մասնավոր անհատներ»: Այսպիսով, իրավաբանորեն պատշաճ էր պնդել, որ իրադարձությունները հանդիսացել են ցեղասպանություն, ինչպես սահմանված էր Կոնվենցիայում, այն եզրակացության հիման վրա, որ դրանք իրագործվել են «Հայկական Հարցը» ընդմիջտ լուծելու մտադրությամբ՝ անկախ այն բանից դա եղել էր Օսմանյան կայսրության պաշտոնական պետական քաղաքականությունը, թե ոչ»:<sup>346</sup> ԹՀՀՀ-ի թուրք անդամները հուշագրի նկատմամբ դրսևորեցին ծայրահեղ ժխտողականություն:<sup>347</sup>

Գնահատական տալով հանձնաժողովի աշխատանքներին և ԱԱՄԿ-ի պատրաստած եզրակացությանը, «Արմինյան Ուիքլի» շաբաթաթերթը գրում է, որ հաշտեցման հանձնաժողովը «հրապարակեց ընդարձակ, սակայն անիմաստ զեկույց ցեղասպանության մասին»:<sup>348</sup> Զեկույցի հրապարակումից հետո ԹՀՀՀ-ի անդամները Լոնդոնում

<sup>345</sup> Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին Միավորված Ազգերի Կազմակերպության կոնվենցիայի կիրառելիությունը քսաներորդ դարի սկզբին տեղի ունեցած իրադարձությունների նկատմամբ: Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի համար պատրաստված իրավական վերլուծություն, 10/02/2003, էջ 11:

<sup>346</sup> Նույն տեղում, էջեր 9-10:

<sup>347</sup> Popüler Tarih Dergisi, Temmuz 2003,

<http://www.ermenisorunu.gen.tr/turkce/makaleler/makale32.html>, 10/01/2004, Արմանի թղթերի քննադատությունը տե՛ս Барсегов Ю. Г., Турецкая доктрина междунородного права на службе политики геноцида, Москва, 2002.

<sup>348</sup> The Armenian Weekly, 14/07/2003.

քննարկել են իրենց Հետագա անելիքները, սակայն այս Հանդիպման մասին մամուլում տեղեկություններ Համարյա չկան:<sup>349</sup>

2003թ. Հունիսի 6-7-ին ԹՀՀՀ Հավաք տեղի ունեցավ Ատամ-բուլում: Կցկատուր տեղեկություններից պարզ է գառնում, որ մի քանի Հանձնաժողովականներ այն գնահատել են «շատ դրական»<sup>350</sup>: Քննարկումների կիզակետում է եղել Հայ-թուրքական սահմանի բացումը:

Չնայած Թուրք-Հայկական Հաշտեցման Հանձնաժողովի որոշ անդամների լավատեսությանը, արդեն ծագել էին ելել լուրջ Հիմնախնդիրներ, որոնք պայմանավորեցին նաև երեք թուրք անդամների հրաժարականը: Օզդեմ Սանբերկը, Շադի Էրգյուլվենչը և Գյունդուղ Աքթանը լքել էին ԹՀՀՀ-ն: Նրանց փոխարինել են պրոֆեսորներ Իլթեր Թուրանը, Էրսին Կալայջըղլուն, Ալըընեթ Էվինը և Շուլե Բուլբը: Պրոֆեսորներ Ուսթյուն Էրգյուղերը և Էմին Մահիր Բաջըղլուն (որն ավելի վաղ փոխարինել էր Վամիկ Վոլքանին) մնացել էին ԹՀՀՀ-ի կազմում: Հանձնաժողովում էր նաև Իլթեր Թուրքմենը: Դեյվիդ Ֆիլիպսին զուգահեռ նշանակվել էր նոր Համակարգող` Զոգեֆ Մոնտվիլը:<sup>351</sup>

Հանձնաժողովի Հաջորդ Հանդիպումը տեղի ունեցավ 2004թ. Հունվարի 11-13-ը Լոնդոնում: ԹՀՀՀ-ի տարածած պաշտոնական հաղորդագրությունը հավաքի վերաբերյալ շատ սեղմ է. հասարակական երկխոսություն ջատագովների համացանցային կայքում սոսկ գրված է, որ լոնդոնյան Հանդիպմանը մասնակցել են Հանձնաժողովի անդամները, նոր Համակարգողը և Դեյվիդ Ֆիլիպսը:<sup>352</sup>

Հունվարի 16-ին «Արմենպրես» գործակալությունը, վկայակոչելով ԹՀՀՀ-ի հայազգի անդամներից մեկի տրամադրած տեղեկությունը, նշել էր, որ նախկին դիվանագետներից և փորձագետներից կազմված այս Հանձնախմբի նիստերը գումարվել են Մեծ Բրիտանիայի պաշտպանության նախարարության հետ սերտ կապեր ունեցող մասնավոր հետազոտական մի կենտրոնում:<sup>353</sup>

ԹՀՀՀ վերջին հավաքը տեղի ունեցավ Մոսկվայում` 2004թ. ապրիլի 12-14-ին: Նպատակն էր ամփոփել Հայ-թուրքական Հարաբերությունների կարգավորմանն ուղղված իր առաջարկները, որոնք պաշտոնապես պիտի Հանձնվեին Հայաստանի և Թուրքիայի կառավարություններին: Միևնույն ժամանակ ԹՀՀՀ-ն հայտարարել է, որ ավարտում է իր գործունեությունը որպես Հանձնաժողով: «Մենք

<sup>349</sup> Հայկական ժամանակ, 8/5/2002:

<sup>350</sup> The Armenian Weekly, 14/07/2003.

<sup>351</sup> The Armenian Weekly, 17/07/2003.

<sup>352</sup> <http://www.tarc.info>

<sup>353</sup> Արմենպրես, 16/01/2004

զգում ենք, որ քաղաքացիական հասարակությունների շփումներում առաջընթացը անընդմեջ է և ժամանակի հետ միայն աճելու է»,- ասված է Հայտարարության մեջ: Փոխարենը, Հանձնաժողովը որոշել էր նախաձեռնել ավելի բազմամարդ խմբի մի նախնական Հանդիպում Հայ-թուրքական մերձեցման ու հաշտեցման Հարցերը քննարկելու նպատակով: Հանձնաժողովը նախատեսվում էր անցկացնել 2004թ. աշնանը: ԹՀՀՀ-ն մտադրվել էր նաև աջակցել Հայ-թուրքական խորհրդակցական խմբի ստեղծմանը, որը նիստեր կդուրսարկեր առնվազն տարին մեկ անգամ՝ կարծիքներ փոխանակելու, Հայ-թուրքական հարաբերություններում առաջընթացը քննելու և փոխհարաբերությունները բարելավելուն ուղղված առաջարկներ ներկայացնելու համար:<sup>354</sup>

<sup>354</sup> Հայկական ժամանակ, 16/04/2004, տե՛ս նաև <http://www.tarc.info>.

Մեծ եղեռնի նկատմամբ թուրքական պետության և պատմագրության որդեգրած ժխտողական քաղաքականությունը և Հայաստանի ու թուրքիայի աշխարհաքաղաքական վեկտորների տարածետ ուղղվածությունը 20-րդ դարակզբի պատմական իրողություններին վերստին տալիս են քաղաքական նշանակություն:

1990-ականների սկիզբը նշանավորվեց համաշխարհային ուժի բեկումների միջև առկա հավասարաշուկայան փոփոխությանը, ինչը արդյունք էր խորհրդային հսկայածավալ պետության փլուզման: Աշխարհաքաղաքական նոր իրողությունների սլայմաններում թուրքիան փորձ արեց վերաիմաստավորել սեփական դերակատարությունը Կովկաս- Կենտրոնական Ասիա տարածաշրջանում: Միևնույն ժամանակ Հայաստանի Հանրապետության անկախության վերականգնումը երկու երկրների առջև կրկին ծառայեց միջպետական հարաբերություններ հաստատելու, միջազգային իրավական խաղի նոր կանոններով գործելու մարտահրավերը:

Ի սկզբանե, թուրքիան երկկողմ հարաբերությունների օրակարգ մտցրեց Հայոց ցեղասպանության ճանաչումից հրաժարվելու պարտադրանքը, ինչը փորձեց որպես ճնշման միջոց դործադրել Երևանի հետ հարաբերություններում: 1991թ. դեկտեմբերին, ի թիվս այլ նախկին խորհրդային Հանրապետությունների, թուրքիան ճանաչեց նաև Հայաստանի Հանրապետության անկախությունը, սակայն վերջինիս հետ դիվանագիտական հարաբերություններ չհաստատեց: Միջպետական շփումների առաջին փորձերն անգամ փաստեցին, որ Երևանն ու Անկարան դիվանագիտական հարաբերությունների հեռանկարի վերաբերյալ տրամագծորեն հակառակ դիրքերում են: ՀՀ առաջին իշխանությունը, որը կազմված էր հիմնականում արցախյան շարժման առաջնորդներից, Հայ-թուրքական շփումների կարգավորման համար թուրքիայի կողմից ցեղասպանության ճանաչումը որպես նախապայման չէր դիտում: Նշենք, որ Մեծ եղեռնի վերաբերյալ Ստամբուլում հայտարարություն անելուց շատ չանցած՝ պաշտոնանկ արվեց ՀՀ արտաքին գործերի նախարար Բ. Հովհաննիսյանը: 1993թ. երկկողմ հարաբերությունները սրվեցին, կապված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության բանակի մարտիկների կողմից Քարվաճառի կրակակետերի լուծման օպերացիայի հետ, որի արդյունքում շրջանն անցավ դարաբաղյան ուժերի վերահսկողության տակ: Այս առնչությամբ թուրքիայի Հանրապետության նախագահ թուրքուլ Օզալը, խախտելով միջազգային իրավունքի նորմերը, ուժի գործադրման բացահայտ սպառնալիք հնչեցրեց, ինչից հետո փակվեց Հայ-թուրքական ցամաքային սահմանը, և որոշ ժամանակա-

Հատված երկու պետությունների քաղաքական հարաբերություններում առավել կարևորվեց Արցախի հարցի լուծումը, որի ադրբեջանամետ կարգավորման ջատագովներից մեկը դարձավ Թուրքիան:

1991-1998թթ. Հայոց ցեղասպանությունը ճանաչվեց մի շարք երկրների կողմից (Հունաստան, Ռուսաստանի Դաշնություն և այլն)՝ լրջորեն սրելով այդ պետությունների և Թուրքիայի հարաբերությունները:

Ցեղասպանության դործոնը մինչև 1998թ. երկկողմ հարաբերությունների օրակարգում փոքր-ինչ լուսանցքային տեղ էր գրավել, Հայաստանի Հանրապետությունը միջազգային ասպարեզում չէր հետապնդում Հայոց ցեղասպանության ճանաչման քաղաքականություն՝ հիմնախնդիրը թողնելով Սփյուռքի հայ համայնքների գործունեության դաշտում: Միջպետական հարաբերությունների բացակայության պայմաններում երկկողմ շփումների ոլորտում երևան եկան տարաբնույթ հասարակական նախաձեռնություններ, հայ և թուրք ուսումնասիրողները սկսեցին ակտիվորեն քննարկել հասարակական հարաբերությունների տարաբնույթ տեսլականներ:

1998 թ., ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի հրաժարականից հետո անցկացված արտահերթ նախագահական ընտրություններում հաղթեց Ռ. Քոչարյանը: Հայոց ցեղասպանության հարցը մտավ Հայաստանի արտաքին քաղաքականության շրջածիր: Արդեն 1998թ., աշնանը ելույթ ունենալով ՄԱԿ-ի 53-րդ նստաշրջանում, ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը հայտարարեց, որ Հայաստանի Հանրապետությունը հետամուտ է լինելու Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը: Պաշտոնական Երևանի քաղաքականության նման կոչտացումը Անկարայում գնահատվեց որպես Թուրքիայի նկատմամբ թշնամական քաղաքականության դրսևորում: Հայաստանում իշխանության փոփոխությունը երկկողմ հարաբերությունների օրակարգում առաջնային դարձրեց Հայոց ցեղասպանության խնդիրը: Հարաբերությունների զարգացման հետագա ընթացքը հաստատեց, որ մեր երկրի արտաքին քաղաքական կուրսում Մեծ եղեռնի միջազգային ճանաչման խնդրի ներառումը երկկողմ հարաբերություններում որակական տեղաշարժերի չհանդեպրեց:

2002թ. Թուրքիայում տեղի ունեցած իշխանափոխության հետևանքով օրենսդիրն ու գործադիրը գլխավորեց մինչ այդ երբեք իշխանության կամ խորհրդարանի մաս չհանդիսացած «Արդարություն և բարգավաճում» կուսակցությունը, որը հաղթեց ընտրություններում՝ խոստանալով երկիրը դուրս բերել խոր տնտեսական ճգնաժամից և լուծել արտաքին քաղաքական լրջագույն՝ ԵՄ անդամակցության հարցը: Նշենք, որ Անկարա-Երևան հարաբերությունները և տարածաշրջանային այլ զարգացումներ մշտապես գտնվել են

գերտերությունների, մասնավորապես Միացյալ Նահանգների և Եվրոպական Միության ուշադրության կենտրոնում: Եթե Բրյուսելի համար Հայոց ցեղասպանության ճանաչումը ճնշամիջոց է հանդիսացել Թուրքիայի հետ հարաբերություններում, ապա Սպիտակ տունն այս առումով որգեգրել էր փոքր-ինչ այլ քաղաքականություն: Վաշինգտոնի պաշտոնյաները, ձգտելով բաց և կանխատեսելի դարձնել տարածաշրջանը, առաջ են քաշում հայ-թուրքական հարաբերությունների «կարգավորման» սեփական մոդել:

2001թ. հուլիսին ստեղծվեց Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովը, որի ձևավորումը թուրքական մամուլի և հայկական որոշ շրջանակների համար ոգևորության առիթ դարձավ: Եվ եթե թուրքերի ուրախությունը հասկանալի էր, ապա հայ հասարակության մի նվազ մասի շահադրգուցությունը թերևս հնարավոր լինի բացատրել քաղաքական ու հասարակական դաշտում կորցրած ազդեցությունը վերականգնելու և նոր «անփոխարինելի» դերակատարության փնտրտուքով: Հայ-թուրքական հարաբերություններում առկա հիմնահարցերի բարդությունը, ի սկզբանե պարզ էր դարձրել, որ հանձնախումբ ոչ ոքի չի կարողանալու հաշտեցնել, ավելին, գործունեության կես տարին չբոլորած՝ կառույցը սկսել էր ճաքեր տալ: Տապալման պատճառը հաշտեցման չափորոշիչային մոդելի հասարակ տեղայնացումն էր՝ առանց հաշվի առնելու երկու ժողովուրդների հարաբերություններում առկա խնդիրների բարդությունը: Ի դեպ, նշենք, որ հաշտարարական համահավասարեցման արատով տառապում են նրանք, ովքեր չեն ցանկանում տեսնել յուրաքանչյուր հակամարտության անհամադրելի բնույթը: Հայերի ու թուրքերի հաշտեցման հավակնոտ ծրագրի ղեկավարն էր Դեյվիդ Ֆիլիպսը, ով համատեղության կարգով նաև ԱՄՆ պետդեպարտամենտի խորհրդականներից էր:

Թուրք հանձնաժողովականներից շատերը Հայոց ցեղասպանության ճանաչման դեմ պայքարի հարցում ունեն կուտակված փորձ: Ի դեպ, թուրք հանձնաժողովականների ժխտողական մոտեցումները առավել շոշափելի դարձան, երբ ԹՀՀՀ-ին զուգահեռ ստեղծված Անցումային արդարադատության միջազգային կենտրոն անունը կրող կազմակերպությունը հանձնաժողովի պատվերով իր հերթին պատվիրեց իրավաբանների մի խմբի կատարել հետազոտություն՝ 1915թ. Հայոց ցեղասպանության նկատմամբ ՄԱԿ-ի Ցեղասպանություն հանցագործության կանխարգելման և պատժի մասին կոնվենցիայի կիրառելիության վերաբերյալ:

Եզրակացությունը նույնպես փոխզիջումային էր, Կենտրոնը մի կողմից հայտարարում էր, որ 1915թ. իրադարձությունները արդարացիորեն հնարավոր է որակել «ցեղասպանություն», մյուս կողմից

Հորդորում, որ հիշյալ կոնվենցիան կիրառելի է Մեծ եղեռնի նկատմամբ: Միանգամայն հասկանալի է, որ Կենտրոնի եզրակացությունը ստանալուն պես Գյուլնգուզ Աքթանը և Շադի Հրզյուվենչը դադարեցրին իրենց անդամությունը ԹՀՀՀ-ին և մեծ ջանքերի դնով միայն հաջողվեց համոզել Իլթեր Թուրքմենին, որ նա ևս չլքի հաշտարարական ընկերախումբը:

Որոշ ժամանակ անց, անգամ նախաձեռնող և Ֆինանսավորող ամերիկացիները, գրեթե բոլորը, կորցրեցին հետաքրքրասիրությունը ԹՀՀՀ-ի նկատմամբ, և հանձնաժողովը 2004թ. հայտարարեց, որ դադարեցնում է իր գործունեությունը:

2003թ. ամերիկա-բրիտանական զորքերի ներխուժումը Իրաք զգալիորեն ազդեց ուժերի տարածաշրջանային հարաբերակցության վրա՝ հանգեցնելով անգամ Թուրք-ամերիկյան հարաբերությունների որոշակի սառեցման: Միևնույն ժամանակ ակտիվանում էր Թուրքական իշխանությունների ջանքը՝ միանալու ԵՄ-ին, ինչը եվրոպական որոշ ուժերի կողմից ընդունվում էր առանց ոգևորության: 2004թ. մայիսին Եվրոպական Միության հերթական ընդլայնումից հետո Անկարա-Բրյուսել հարաբերությունների դաշտում ծառայավ Թուրքիայի անդամակցության բանակցությունների խնդիրը: ԱՄՆ նախագահական ընտրությունները և հայկական յորրիստական խմբերի կողմից նախազահի թեկնածու, հայամետ գործիչ Զոն Բերիին ցուցաբերված աջակցությունը Թուրքիայի համար լուրջ վտանգ ստեղծեց, քանզի թեկնածուն խոստացել էր ընտրվելու դեպքում ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Հընթացս Եվրոպական խորհրդարանը վերահաստատեց 1987թ. որոշումը, որով Հայոց ցեղասպանության ընդունումը մտցրեց Թուրք-եվրոպական հարաբերությունների օրակարգ:



**THE ISSUE OF THE ARMENIAN GENOCIDE IN THE  
ARMENIAN-TURKISH RELATIONS (1991-2004)**

*Summary*

*Researchers consider Armenian-Turkish relations to be one of the key-problems of Armenia's foreign policy. While recognizing the Republic of Armenia as an independent state in 1991, Turkey delayed to establish diplomatic relations with her neighbor. The explanation for this inadequate political behavior is deeply rooted into the history and geopolitics. There are several barriers, which make good neighborhood and long distance goal. These barriers are the international recognition of Armenian Genocide, Karabakh conflict, and diverse geopolitical and national security interests, etc. However, the first political elite of the independent Armenia declared its moderate attitude towards Turkey (it left Armenian Genocide recognition out of the foreign political priorities), officials in Ankara, on their behalf, adopted a "hard-line" position towards Yerevan. For almost 90 years Turkey has been denying the Armenian Genocide, which is currently the main factor in the Armenian- Turkish relations. This issue is not a historical question: due to the Turkish policy the Armenian Genocide remains on the top of the bilateral political agenda. Denial of the genocide is the last phase of the crime against humanity, when the executioner eradicates the collective memory of the victimized group. Since 1915, each and every Turkish government has denied the crime of the Ottoman Empire and the Ittihatist government. Contemporary paradigms of the Political Science characterize this behavior as a well established state policy, with an ideology of justification; politics- planned and organized road map of denial and polity- state and diplomatic institutions, backed with the official historiography. For several decades Ankara develops rejection mechanisms and a state written official history, to justify its existence and ideological principles of Ataturkism.*

*Official position of Ankara and the continuous policy of genocide denial make this research of Turkish foreign policy towards Armenia crucial: It enables political leaders, researchers and all interested people to re-evaluate Turkey's anti Armenian efforts from the practical viewpoint, using the results in the field of political planning, applied studies of international relations, etc.*

*The Study consists of Introduction, three Chapters, Conclusion and the List of Reference Quotations.*

*The first chapter is entitled "Issue of the Armenian Genocide in the Armenian-Turkish Relations 1991-1998 ", consists of two parts.*

*The first subchapter analyses Turkey's strategic importance and foreign policy under the current conditions. It is worth mentioning, that in the modern political reality Turkey has become an important state. Its extremely attractive geographic position, young population and resources, make her a key partner in the international relations. Being the shortest connector of Europe and Asia, meanwhile the second country in the NATO for its territory and army after the US, Turkey claims more geopolitical influence, first of all in the Black sea basin. According to Turkish diplomats and political scientists, Ankara is the leader of the NATO's south-eastern wing that is why it must be in charge of the balance of power in the Caucasus and Central Asia. After the collapse of the Soviet Union, Turkey tried to work out a new foreign political concept and image. The absence of the "Red Alert" threatened to inflate Ankara's role in the NATO system. At the same period Turkish political thought cultivated a concept with tri-polar diplomatic dimensions: the first and main pole is European integration, the second spreads influence over the newly established Turkic states of the Caucasus and Central Asia, and the third is involvement into the processes in the Middle East.*

*The shift in the Turkish foreign policy took place, when Ankara joined the UN led coalition against Iraqi invasion into Kuwait. Turkish president Özal declared, that Ankara quits her passive and unconfidential policy and starts an active stage. Meanwhile, after the events in Moscow in 1991 the USSR was no more a strong political power. Russia was losing its political influence in the Caucasus and*

*Central Asia. Turkey had to develop its political priority for becoming the leader of the Turkic countries. These two factors made Ankara reconstruct its foreign policy. Turkey reconstructed its regional concepts declaring soon that 21st century will be "the Turkic age".*

*The issue of the Armenian Genocide has always been on the top agenda of Turkey's foreign policy. As it was already mentioned, for 90 years the Turks have denied the fact of planned extermination of the Armenians in the Ottoman Empire. The new wave of Turkish denial arose in 1980-ies, after the coup d' etat, when the military took power on 12 September, 1980. The abolishment of political freedoms and the process of genocide recognition abroad pushed the new regime into large scale denial policy. Ankara's target was to mislead the international community, mostly the US Congress, the European Community, ect. For example Turkish diplomats managed to shut down the House resolution drafts, which condemned the Armenian Genocide.*

*The second subchapter named "Genocide Recognition and the Armenian-Turkish Relations in 1991-1998" describes (d) evolution of bilateral relations after Armenia declared independence from the Soviet Union. Despite the fact, that Genocide recognition was an integral part of Armenia's "Declaration of Independence", the first political elite did not include that issue into the foreign political agenda. In November of 1990 the leader of Armenian Pan-National Movement Party Levon Ter-Petrosyan said, that Armenia no more relied on superpowers and Yerevan must develop new relations with all the neighbors. Ankara made clear its position towards Armenia only in April, 1991 when the Ambassador of Turkey in the Soviet Union V. Vural visited Armenia. Levon Ter-Petrosyan told Vural, that the USSR was being changed and Armenia wanted to establish relations with Turkey. He added that Yerevan was open for all kinds of cooperation with Ankara. The Turkish diplomat also expressed his opinion about revealing bilateral relations.*

*This was the first time, when the differences in the agendas of Armenia and Turkey contradicted. If for Armenia economic cooperation was more important, Turks were concerned about Karabakh solution and the recognition of the Armenian-Turkish*

*border. Despite these divergences Ter-Petrosyan's administration tried to build relations on moderate basis: Armenia was not going to refer to the Genocide recognition, leaving its solution to Diaspora. In fact, first it was Turkey to point out the Genocide issue. On December 16, 1991, Turkey recognized Armenia's independence, but despite the other former Soviet Republics did not establish diplomatic relations with the official Yerevan. Turkey wanted to demonstrate, that it did not believe, that the sieged Armenia, which was overcoming economic crisis and consequences of Karabakh liberation struggle, can survive. In February, 1991, during the World Economic Forum in Davos Turkey's Prime Minister Demirel turned back Armenia's President Levon Ter-Petrosyan's effort to meet with him. Their meeting took place in July, after Karabakh self-defense army liberated Shushi.*

*Anyway, in August 1992, Turkish delegation, headed by Undersecretary Foreign Affairs Unan visited Yerevan. According to the former chief advisor of Ter-Petrosyan, G. Liparityan, during these talks Genocide problem was not negotiated separately, but talked over as many other problems.*

*In 1993, Turkish hostility reached its peak. Turkey joined Azerbaijani declared blockade and later, when Karabakh Defense Army advanced to Kelbajar, Ankara started to jeopardize Armenia's territorial integrity. To establish diplomatic relations with Armenia, Ankara officials had put forward several preconditions, which were, and still are, completely unacceptable for the Armenian party. Ankara demands unilateral concessions from the Armenians in Karabakh conflict resolution and recognition of the Kars Treaty (1921), which the marionette Bolshevik Armenian government had signed. Turkey also wants Armenia to turn down demands regarding the Armenian Genocide. At the same time secret talks between Armenian president and Turkish nationalist leader, head of the MHP party, Alpaslan Türkeş, were initiated in Paris.*

*Armenia was sending regular messages to Ankara that did not blame Turkish republic for the Armenian Genocide. During the international conference, dedicated to the 80th anniversary of the tragic events President Ter-Petrosyan declared, that only Sultan Abdul Hamid*

*II and Young Turk regime were guilty in organizing and committing genocide. President did not call Modern Turkey to recognize and condemn the genocide, but called for relations, based on high morality.*

*In summer 1995, the Mayor of the Esenyurt community near Istanbul G. Çapan visited Armenia. According to the "Hurriyet" daily, which covered the trip, Çapan was the first Turkish official, visited the Tsitsernakaberd Genocide Memorial. During the meeting with Armenia's President Levon Ter-Petrosyan, Çapan said, that history must be left to the historians.*

*In the mid of 90-ies, it was clear, that Armenian-Turkish political relations are in a deadlock. In this article, dedicated to the 5<sup>th</sup> anniversary of Armenia's independence, Foreign Minister Vahan Papazyan states, that there is no real change in relations with Ankara, because Armenia failed to develop new attitude of her Turkish policy. Was Armenia's policy, to exclude Genocide recognition from the political agenda, justified? Could that policy reach positive developments in bilateral relations? History proved that, Ter-Petrosian's Administration did not reach any result or concession from the Turks. On the contrary, the neighbors had never missed opportunity to declare their stone-carved preconditions to establish diplomatic relations with Armenia. In reality, it is Ankara that refused to develop normal relations with Yerevan, demonstrating just traditional antagonism.*

*Since 1998, the newly elected President of Armenia Robert Kocharyan has started to promote international recognition of the Armenian Genocide. Turkey considered this politics as a hostility demarche. Anyway, the Armenian-Turkish official relations recorded no progress for twelve years of their existence.*

*The second chapter dedicated to the shift in Armenia's foreign policy is entitled "The Issue of the Armenian Genocide Recognition in the Armenian-Turkish Relations 1998-2000" consists of two parts.*

*The first subchapter "The Issue of Recognition of the Armenian Genocide in Armenia's Foreign Political Agenda" studies the outcome of presidential elections in Armenia in regard of bilateral relations. Kocharyan's line was considered by the Turks as a new*

*expression of hostility. In 1998, the Armenian President declared in the UN, that the absence of proper condemnation of the Armenian Genocide in 1915 has led to violent crimes against humanity during the last century that is why genocide recognition is of a vital importance.*

*1998-2000 can be characterized as a shift in the process of international condemnation and recognition of the Armenian genocide. Despite the Turkish pressure the National Assembly of France recognized the Armenian Genocide. On May 29, 1998, the National Assembly passed the recognition law and on November 8, 2000, French Senate recognized the Genocide. Two months later President Chirac ratified the law recognizing the Armenian Genocide.*

*The Armenian-Turkish relations were influenced by the process of international recognition of the Armenian Genocide. In September, 2000, Armenian lobbyists brought to the agenda of the US Congress a draft of H.Res. 398, which if passed, would recognize and condemn the Armenian Genocide. The researchers think, that only when the official Ankara played the card of the "strategic partnership" and started to speculate over Turkey's geopolitical importance for the US, President Bill Clinton asked the House Speaker Dennis Hastert to remove resolution from the agenda. The State Security Council of Turkey started to work on a list of sanctions to be implemented against Armenia and the US in case the House passes the resolution.*

